# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԷ. ՏԱՐԻ ԹԻՒ 46 (1346) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 22, 2007
VOLUME 27, NO. 46 (1346) SATURDAY, DECEMBER 22, 2007

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԺՈԶԵՖ ՓԵՆԻՆԿԹԸՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ ՅԱՃԱԽ ԿԸ ՔՆՆԱՐԿԵՆՔ ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ»



ԱՄՆ գործերու ժամանակաւոր հաւատարմատար Ժոզէֆ Փենինկթըն

Հայաստանի մօտ Միացեալ Նահանգների գործերու ժամանակաւոր հաւատարմատար Ժոզէֆ Փենինկթըն Երկուշաբթի, Դեկտեմբեր 17-ին լրագրողներու հետ իր հանդիպման ընթացքին յայտնեց, որ Միացեալ Նահանգները խիստ կարեւոր կը նկատէ խօսքի ազատութիւնը եւ այդ հարցը յաճախ կը քննարկուի Հայաստանի իշխանութիւններուն հետ:

Այն հարցին, թէ Հայաստանի իշխանութիւններուն հետ կը քննարկո՞ւի արդեօք ազատ էլեկտրոնային լրատուամիջոցներու բացակայութեան հարցը, Փենինկթըն պատասխանեց. - «Այո, կը քննարկուի: Նաեւ այս պատճառով , մենք «Ազատութիւն» ռատիոկայանին այսքան մեծ աջակից ենք, որովհետեւ «Ազատութիւն» ռատիոկայանը ԵԱՀԿ-ի կողմէ նշուած էր որպէս դրական օրինակ այն բանի, երբ էլեկտրոնային լրատուամիջոցը արտայայտուելու հնարաւորութիւն կ'ընձեռէ ընդդիմութեան, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ հարթակ կը դառնայ ամենատարբեր կարծիքներու համար»:

«Մենք յոյս ունենք եւ ակնկալում ենք, հաշուի առնելով նաեւ բարձրաստիճան պաշտօնեաների յայտարարութիւնները, որ Փետրուարին կայանալիք ընտրութիւնները բարելաւում կ'ըլլան մայիսեան ընտրութիւններու համեմատ», - ասաց Փենինկթըն:

Փենինկթըն նաեւ գոհունակութիւն յայտնեց exit poll (Քուէարկութենէն դուրս եկողներու հետ հարցախոյզ) կատարելու առաջարկութեան Հայաստանի վարչապետի դրական արձագանքին. - «Մենք շատ գոհ ենք այս հարցով վարչապետի դրական արձագանքին եւ յոյս ունինք, որ կարողանանք զայն իրականացնել, թէեւ վերջնական որոշում դեռ չէ կայացուած»:

Անդրադառնալով հայ-թրքա-

Շար.ը էջ 4

## ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ՝ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ



Քննարկումի ընթացքին ելոյթ կ'ունենայ Արամ Կարապետեան: Կողքին՝ Գուրգէն Եղիազարեան եւ Լիւդմիլա Սարգսեան

Վերջերս ստեղծուած «Լեգիտիմ Նախագահ» համախմբումը «Արմենիա Մարիոթ» հիւրանոցէն ներս կազմակերպած էր ընդդիմադիր գործիչներու մասնակցութեամբ քննարկում՝ նուիրուած Հայաստանի յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն:

«Եթէ ցանկանում ենք ունենալ լեգիտիմ նախագահ, անհրաժեշտ է, որ վարչապետ Սերժ Սարգսեանը մինչեւ ընտրութիւններ հրաժարական տայ: Դա նախապայման կը լինի լեգիտիմ ընտրութիւններ անցկացնելու համար: Այլապէս արդէն իսկ վտանգուած է այդ»,- նման յայտարարութիւն կատարեցին հաւաքուած ընդդիմադիր գործիչները:

Հանդիպումին կը մասնակցէին «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեան, ՀՀՇ վարչութեան անդամ Արամ Մանուկեան, «Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնութեան առաջնորդ Նիկոլ Փաշինեան, ՍԴՀԿ ատենապետ Լիւդմիլա Սարգսեան, «Հայրենիք եւ Պատիւ» կուսակցութեան նախագահ Գառնիկ Մարգարեանը, ԱԱ

Շար.ը էջ 4

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ 58,5 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ամերիկեան Գոնկրէսի Ներկայացուցիչներու Տունը հաստատեց 58,5 միլիոն տոլարի օգնութիւնը Հայաստանին եւ հաւասար չափով ռազմական աջակցութիւն Հայաստանին եւ Ատրպէյճանին:

Երկու երկրները որպէս ռազմական օգնութիւն 2008 տարուայ ընթացքին պիտի ստանան իւրաքանչիւր երկիր 3 միլիոն տոլար, թէեւ Նախագահ Ճորճ Պուշի վարչակազմը առաջարկած էր Ատրպէյճանին յատկացնել 2 միլիոն տոլար աւելի ռազմական օգնութիւն:

Յայտնենք որ, 2007 թուականի Ամերիկեան արտաքին օժանդակութեան պիւտճէով Հայաստանին տրամադրուած էր 75 միլիոն տոլար օգնութիւն: Իսկ յաջորդ տարուայ համար, Սպիտակ Տունը առաջարկած էր Հայաստանի յատկացնել միայն 35 միլիոն: Սակայն Գոնկրէսը առաջարկուած գումարը բարձրացուց 23,5 միլիոն տոլարով:

Նախատեսուած է որ, Ատրպէյճանին յատկացուի 19 միլիոն, իսկ Վրաստանին՝ 50,5 միլիոն տոլարի օգնութիւն:

Արտաքին օժանդակութեան օրինագիծը այժմ փոխանցուած է Ծերակոյտի քննարկման, ուր եւս կրնան կատարուիլ փոփոխութիւններ:

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու վարչական կազմը ջերմօրէն կը շնորհաւորեն հայ կաթողիկէ համայնքը ընդհանրապէս եւ իր ընթերցողները՝ մասնաւորապէս, մաղթելով բոլորին խաղաղ, բարգաւաճ եւ երջանիկ տարի:

## ԹԵՐՐԻ ՏԵՒԻՍ. «ՄՏԱՀՈԳՈՒԱԾ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ»



Եւրոպայի Խորհրդի գլխաւոր քարտուղար Թէրրի Տեւիս

Եւրոպայի Խորհրդի գլխաւոր քարտուղար Թէրրի Տեւիս, փոխանցելով որոշ տեղեկութիւններ անցած Շաբաթ Ստրասբուրգի մէջ Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսեանի հետ իր ունեցած հանդիպման վերաբերեալ, մտահոգութիւն հնչեցուցած է, «Եւրախորհուրդի անդամ Հայաստանի մէջ տիրող իրավիճակով»:

«Մենք քննարկեցինք Հայաստանի յառաջիկայ նախագահական ընտրութիւնները, մասնաւորապէս՝ լրատուամիջոցներու վարքագիծը. մամուլը, հեռուստատեսութիւնը, պնդումները այն մասին, որ բազմաթիւ են Սերժ Սարգսեանի մասին՝ դրական, անոր ընդդիմախօսներու մասին՝ բացասական յիշատակումները», - Նիւ Եորքի մէջ «Ազատութիւն» ռատիոկայանի թղթակիցին հետ զրոյցի մը ընթացքին ըսած է Տեւիսը:

«Անշուշտ, ես համաձայն եղայ, որ ոեւէ վարչապետ աւելի շատ լուսաբանում կը ստանայ, քան մարդիկ, որոնք վարչապետ չեն: Բայց ես կը բացատրէի Հայաստանի վարչապետին, որ խնդիրը ոչ թէ իր կամ իր ընդդիմախօսներու մասին յիշատակումներու քանակն է, այլ այն համոզիչ վերլուծութիւնը, որու համաձայն, այդ մեկնաբանութիւնները նպաստաւոր են Սերժ Սարգսեանի եւ աննպաստ՝ իր ընդդիմախօսներու համար: Այդ սխալ է, կողմնակալ է, այն ճիշդ չէ ժողովրդավարութեան մէջ»:

Լրագրողի այն հարցին, թէ ինչպէս էր Սերժ Սարգսեանը պատասխանը, Եւրախորհուրդի գլխաւոր քարտուղարը պատասխանած է. - «Ան շատ մտահոգուած էր»:

«Կը կարծեմ որ, Հայաստանի լրատուամիջոցներու ներկայ իրավիճակը ընդհանուր առմամբ չի համապատասխաներ Եւրախորհուրդի չափանիշներուն», - զրոյցի աւարտին շեշտած է Թէրրի Տեւիս:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՀԵՌԱՑՐԵ՞Լ Է ՌՈԲԵՐԴ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ

*10 ամեայ լռութիւնից, իրականում սպասելուց յետոյ քաղաքականութիւն վերադարձած եւ ՀՀ նախագահի ընտրութիւններին մասնակցելու յայտ ներկայացրած Լեւոն Տէր-Պետրոսեանը Ռոբերդ Քոչարեանի, Սերժ Սարգսեանի եւ Սամուէլ Բաբաեանի «եռաձայն» հայհոյախառն, մեղադրանքներով համեմուած քննադատութեանը պատասխանեց յիշեցումով. գիրը արձան է, մեր տեսակ, մեր գենը կրող մէկն է մեզանից շատ առաջ ասել. «ձեռքս գնա դառնայ ի հող, գիրս մնայ յիշատակող»: Սրանից յետոյ Լեւոն Տէր-Պետրոսեանը Ռոբերդ Քոչարեանին եւ այլոց յիշեցրեց ընդամէնը 10 տարի առաջ վերջիններիս յղած «Լեւոնից լաւ տղայ չկայ» տրամաբանութեամբ ուղերձները: Եթէ Լեւոն Տէր-Պետրոսեանն է իրեն հասու բոլոր ձեւերով ապացուցում Ռոբերդ Քոչարեանի յայտարարութիւնների անհամապատասխանութիւնը իրականութեանը՝ հասկանալի է: Բայց որ դա անում է Սերժ Սարգսեանը, առնուազն հասկանալի չէ: Ախր Ռոբերդ Քոչարեանը յայտարարեց, թէ Սերժ Սարգսեանն է իր ամենաարժանի յաջորդը: Ախր մարդը քափ ու քրտինք մտած Սերժ Սարգսեանի օգտին քարոզչութիւն է անում բոլոր հնարաւոր եւ անհնար առիթներով:*

*Իսկ «գիրս մնայ յիշատակող» բոլորի վրայ է տարածւում, անգամ վարչապետի եւ անկախ կուսակցական պատկանելութիւնից: Վարչապետ Սերժ Սարգսեանը եւ կառավարութիւնը «Առաւօտ» թերթում գովազդային հիմունքներով հրապարակել են 1 մամուլ ակուած, Սերժ Սարգսեանի նկարով, գրաֆիկներով ձեւաւորուած «ՀՀ պետական բիւջէ 2008» անունով նիւթ, ուր գրուած է. «Պետութեան յաջորդ տարուայ (2008 թուականի- Ա.Զ.) թիւ մէկ ֆինանսական փաստաթուղթը մշակելիս գործադիրն աչքի առաջ ունեցել է մի քանի կարեւորագոյն սոցիալ-տնտեսական ցուցանիշներ: Թերեւս առանձնացնենք դրանցից մի քանիսը: 1994 թուականից սկսած հանրապետութիւնում արձանագրուել է անընդմէջ տնտեսական աճ՝ 1994-2006 թուականներին կազմելով միջինը տարեկան 8.6 տոկոս»: Ղարաբաղեան պատերազմում հրադադարը հաստատուել է 1994 թուականի Մայիսին: Այլ խօսքով, Սերժ Սարգսեանը բացայայտում է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահութեան տարիներին՝ հրադադարից ընդամէնը 7 ամիս անց ամփոփուած տարին եւ դրանից յետոյ անընդմէջ բոլոր տարիները փակել ենք տնտեսական աճով: Իսկ Ռոբերդ Քոչարեանն ասում էր, թէ 1998 թուականին աւերուած տնտեսութիւն է ժառանգել: Ստացւում է, որ Սերժ Սարգսեանը, ձայնակցելով Լեւոն Տէր-Պետրոսեանին, ասում է, որ Ռոբերդ Քոչարեանը ստել է: Սրանից յետոյ Ռոբերդ Քոչարեանին մնում է յայտարարել, որ Սերժ Սարգսեանն է ստում: Բայց նման յայտարարութիւնը հաստատ նախընտրելի թեկնածուի գովազդի տրամաբանութեան մէջ չի տեղաւորուի: Իսկ ընդհանրապէս այս ամէնը նշանակում է, որ Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը նախագահի թեկնածուի քարոզարշաւի շրջանակներում համակարգուած չեն աշխատում: Սրանից էլ կարելի է որոշակի հետեւութիւն անել, թէ որքանով են համակարգուած Ռոբերդ Քոչարեանի եւ վարչապետ Սերժ Սարգսեանի գործողութիւնները՝ թէկուզ յանուն երկնիշ տնտեսական աճի:*

*Սերժ Սարգսեանը միակ հանրապետականը չէ, ով Ռոբերդ Քոչարեանին «սխալ է հանում»: Դեկտեմբերի 7-ին, երբ Սերժ Սարգսեանը Գիւմրիում էր, այդ քաղաքի քաղաքապետ Վարդան Ղուկասեանը տեսախցիկների առաջ գիւմրեցիներին յոյս տուեց. «Աստուած մեր իշխանաւորների սիրտը գութ է գցէ, մեր քաղաքի վրայ լոյսը բացուելու է»: Այլ խօսքով, Վարդան Ղուկասեանը ասում է, որ մինչ այս Գիւմրին խաւարի մէջ էր: Իսկ Ռոբերդ Քոչարեանը առիթով եւ անառիթ յայտարարում էր, թէ իր օրօք ոչ միայն Գիւմրին, այլ 1988-ի երկրաշարժից տուժած բոլոր բնակավայրերն են վերականգնուել. աղէտի գօտի չունենք, ունենք գրեթէ Լաս-Վեգաս, ուր չկայ ոչինչ լոյսից եւ փողից բացի:*

*Թէ ինչու են հանրապետականները որոշել ՀՀ նախագահի հանրապետականի թեկնածուի թիւ մէկ քարոզչի դերը ստանձնած Ռոբերդ Քոչարեանին սխալ հանել, դժուար է ասել, հեշտ է ենթադրել: Բայց ամէն դէպքում Ռոբերդ Քոչարեանին հիմա չես նախանձի: Հերիք չի հանրապետականները նրա մօտ վարչապետ դառնալու ցանկութիւն չեն տեսնում, հիմա էլ նրա հետ անում են այն, ինչ նա յանուն հանրապետականի անում է Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ:*

> Ռոբերդ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը նախագահի թեկնածուի քարոզարշաւի շրջանակներում համակարգուած չեն աշխատում: Սրանից էլ կարելի է որոշակի հետեւութիւն անել, թէ որքանով են համակարգուած նրանց գործողութիւնները

*Տեսականօրէն հնարաւոր է վնասի կէսից հետ կանգնելու տարբերակը: Ռոբերդ Քոչարեանը կարող է յայտարարել, որ սխալուել է, ամենաարժանին Սերժ Սարգսեանը չէ, ուրիշն է: Բայց ո՞վ: Արտաշէս Գեղամեանը հաւատարիմ է միայն Սերժ Սարգսեանին մի ինչ-որ տարօրինակ, պատկերաւոր ասած, դհոլային հաւատարմութեամբ: Տիգրան Կարապետեանը միշտ յայտարարել է, որ ապաւինում է միայն սեփական ուժերին, Վահան Յովհաննիսեանին սատարելը կը յարուցի Սերժ Սարգսեանի զայրոյթը, Արամ Կարապետեանին եւ Րաֆֆի Յովհաննիսեանին չեն գրանցել:*

*Ի դէպ, «Առաւօտի» «ՀՀ պետական բիւջէ 2008» ներդիրով համարում գրուած է, որ ԱՄՆ նախագահի թեկնածու Հիլարի Քլինթոնը հեռացրել է գլխաւոր խորհրդատուին, ով Հիլարիի հակառակորդին մութ անցեալից որոշ դրուագներ է յիշեցրել: Հիլարին չի ուզում նման մեթոդների գործադրմամբ նախագահ դառնալ: Մի գուցէ, Սերժ Սարգսեանն էլ աշխատանքից հեռացրել է գլխաւոր քարոզիչ Ռոբերդ Քոչարեանին, պարզապէս ոչ ոքի, այդ թւում եւ՝ Ռոբերդ Քոչարեանին, չի ասել:*

**ԱՐԱՄ ԶԱՔԱՐԵԱՆ**
**«ԼՐԱԳԻՐ»**

# ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ՇՔԱՀԱՆԴԷՍԸ

*Այսպիսով, ՀՀ նախագահի թեկնածուները ներկայացրեցին ունեցուածքի յայտարարագրերը, եւ պարզուեց, որ նախագահի թեկնածուներից ամենահարուստը Վահան Յովհաննիսեանն է: Սա, անշուշտ, սպասելի արդիւնք էր: Ստամբուլն արեան ծով դարձնելու գաղափարը միշտ էլ բաւականաչափ լաւ է վարձատրուել, յատկապէս՝ եւրոյով: Մանաւանդ, եթէ այդ ժամանակահատուածում դոլարն արժեզրկուել է, իսկ ՀՀ համախառն ներքին արդիւնքը ձեւաւորուել է Թուրքիայի հետ արտաքին ապրանքաշրջանառութեան ծաւալների աճի հաշուին: Այնպէս որ, ամենեւին զարմանալի չէ, որ Հայաստանի անկախութեան մեծ ջատագով Վահան Յովհաննիսեանն իր ունեցուածքի մեծ մասը պահում է ոչ թէ հայկական դրամով, այլ եւրոյով:*

*Բայց ունեցուածքի յայտարարագրերը միայն սրանով չէ, որ կարեւորւում են: Հետաքրքիր է՝ ի՞նչ ունի Սերժ Սարգսեանը: Բանից պարզւում է, ՀՀ նախագահի «ամենահաւանական թեկնածուն» Հայաստանի Հանրապետութիւնում անշարժ գոյք չունի: Անկեղծ ասած, թէ ինչպէս է Հայաստանում՝ չգիտենք, բայց Ռուսաստանում այդպիսի մարդկանց անուանում են «բոմժ»: Իսկ եթէ Սերժ Ազատիչն այնուամենայնիւ ցանկութիւն յայտնի վիճարկել այս թէզը, խոնարհաբար կը խնդրենք յայտնել ՀՀ տարածքում իր մշտական բնակութեան հասցէն: Վերջին հաշուով, մենք չենք մեղաւորը, որ նա որպէս սեփականութիւն յայտարարագրել է միայն մի երեք սենեականոց բնակարան եւ այն էլ՝ Ստեփանակերտում:*

*Փոխարէնը, ՀՀ պետականութեան հիմնասիւնը յայտարարագրել է 58 միլիոն դրամ ֆինանսական միջոցներ: ՀՀ գլխաւոր դատախազութիւնը սա կարող է ընդունել որպէս հաղորդագրութիւն յանցագործութեան մասին, որովհետեւ իրականում մեր կողմից սատրիկ յարգուած Սերժ Ազատիչը վերջին տասնհինգ տարուայ ընթացքում բացառապէս պետական պաշտօններ է զբաղեցրել եւ դրանով իսկ պարտաւորուել է գոյատեւել բացառապէս աշխատավարձով: Իսկ նրա տասնհինգ տարիների աշխատավարձը հաստատ 58 միլիոն դրամի չի հասնում: Առաւել եւս՝ Սերժ Ազատիչը չէր կարող որպէս անձնական սեփականութիւն ունենալ ժամանակակից նկարիչների 32 կտաւ, այդ թւում՝ Բաշինջաղեան, Սարեան, Մինաս, Գիւրջեան եւ այլն: Ի՞նչ է նշանակում այս ամէնը:*

*Առաջին. եթէ Սերժ Սարգսեանը վերջին տասնհինգ տարիներին զբաղուել է կոմերցիոն գործունէութեամբ, ուրեմն նա խախտել է քրէական օրէնսգիրքը եւ պիտի համապատասխան պատիժ կրի: Երկրորդ. եթէ Սերժ Սարգսեանը չի զբաղուել կոմերցիոն գործունէութեամբ, ուրեմն իր յայտարարագրած 58 միլիոն դրամը վաստակել է այլ եղանակներով, ընդ որում՝ այլ եղանակներով է ձեռք բերել նաեւ 32 միաւոր մշակութային արժէքները, որովհետեւ, որպէս պետական պաշտօնեայ, թանկարժէք նուէրներ ստանալու իրաւունք չունի: Ի դէպ, սա նոյնպէս քրէական պատասխանատուութիւն է ենթադրում: Երրորդ. ենթադրենք՝ Սերժ Ազատիչին 32 միաւոր մշակութային արժէքներ է նուիրել Սաշիկը: Սա նոյնպէս քրէական յօդուածի առարկայ է, որովհետեւ անհասկանալի է, թէ ինչպէս է պազիկի վարորդը մի քանի միլիոն դոլար վաստակել՝ վերոյիշեալ մշակութային արժէքները ձեռք բերելու համար: Այսպէս թէ այնպէս, անհասկանալի է, թէ ինչպէս է ՀՀ տարածքում ընդհանրապէս որեւէ սեփականութիւն չունեցող անձնաւորութիւնը յաւակնում ՀՀ նախագահի պաշտօնին:*

> Սերժ Սարգսեանը, որը Հայաստանի ամենահարուստ մարդկանցից մէկն է եւ մի քանի հարիւր միլիոն դոլարի կարողութիւն ունի, յայտարարում է, թէ ինքն աղքատ է

*Ինչեւէ: Սա, իհարկէ, հարցի զուտ ձեւական կողմն է: Բայց ամբողջ խնդիրն այն է, որ հենց միայն այս մանրուքը վկայում է այն մասին, թէ ինչպէս են ՀՀ նախագահի թեկնածուները մտադիր ղեկավարել Հայաստանը: Եւ եթէ Սերժ Սարգսեանը, որը, ամենահամեստ գնահատականներով, այսօր Հայաստանի ամենահարուստ մարդկանցից մէկն է եւ մի քանի հարիւր միլիոն դոլարի կարողութիւն ունի, յայտարարում է, թէ ինքն աղքատ է, ընդամէնը մի բան է նշանակում՝ նա մտադիր է ճիշդ նոյնպիսի կեղծիքներով էլ ՀՀ նախագահ դառնալ: Թոյլ չենք տալու: Եւ նախագահական ընտրութիւններից յետոյ Սերժ Սարգսեանը ունենալու է միայն այն, ինչ յայտարարագրել է՝ բացի մշակութային արժէքներից: Այսինքն, ունենալու է միայն 3 սենեականոց բնակարան: Ստեփանակերտում:*

**ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ**
**«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

**ԼՈՒՐԵՐ**

## ՍԵՊ ԽՐԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ ԵՆ ՁԱԽՈՂՄԱՆ

*ԵՐԵՒԱՆ, «ՀԱՅԿԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ» Հանրային հեռուստաընկերութիւնն իր «360 աստիճան» հաղորդումով նախօրէին մեծ ոգեւորութեամբ «կանխատեսում» էր, թէ հնարաւոր է՝ ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեանն անջատուի ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի շուրջ ձեւաւորուած բեւեռից:*

*«Հ1»-ին նման յոյս էր ներշնչել թերթերից մէկի այն հրապարակումը, ըստ որի՝ Ստեփան Դեմիրճեանը որոշ քննադատութեան էր ենթարկել Լեւոն Տէր-Պետրոսեանի իշխանութեան տարիները: Աւելին, յղում անելով թերթերից մէկին՝ «Հ1»-ը յայտարարեց, թէ Դեմիրճեանն այդ հարցազրոյցը տուել է իր մօր՝ Ռիմա Դեմիրճեանի ազդեցութեան տակ: Բացառելով Հանրայինի կանխատեսման իրագործումը՝ այս կապակցութեամբ Ստեփան Դեմիրճեանն ասաց. «Նախ, մայրս իմ քաղաքական գործունէութեանը չի միջամտում: ...Իսկ ինչ վերաբերում է ազդեցութիւններին առհասարակ, քաղաքական գործիչը, ինչ խօսք, պէտք է զերծ մնայ տարբեր բացասական ազդեցութիւններից: Օրինակ, եթէ երկրի ղեկավարը կրիմինալի ազդեցութեան տակ է, իսկ նրան սատարող քաղաքական լակեյները՝ նրա տուած փողի, սա արդէն դժբախտութիւն է երկրի համար»:*



ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեան

*Իսկ նման յայտարարութիւններով Հանրային հեռուստաընկերութիւնը, ըստ պարոն Դեմիրճեանի, ակնյայտ է, թէ ինչ նպատակ է հետապնդում: «Կարծում եմ՝ շատ ակնյայտ է, թէ իրենք ինչ նպատակ են հետապնդում՝ կոնտեքստից դուրս հանելով մեր ասածները: Նպատակը մէկն է՝ սեպ խրել մեր եւ առաջին նախագահի միջեւ: Եւ այս նպատակին հասնելու համար, ինչպէս տեսնում էք, անցնում են բարոյականութեան բոլոր նորմերը: Հարկ եմ համարում ընդգծել, որ ՀԺԿ-ի եւ առաջին նախագահի յարաբերութիւններում սեպ խրելու փորձերը դատապարտուած են ձախողման»,- ասում է ՀԺԿ նախագահը:*

## ՎԱԶԳԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԵՐՔՈՒՄ Է, ՈՐԵՒԷ ԱՌՆՉՈՒԹԻՒՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»-Ի ՄԷՋ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԱԾԻ ՀԵՏ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Հայկական ժամանակ» օրաթերթի Դեկտեմբերի 15-ի համարում հրապարակուած «Վազգէն Մանուկեանի «Մայն Քափֆ» («Իմ Պայքարը»)» վերնագրով յօդուածը ներկայացնում է մի ձեռագիր, որը, յօդուածագրի հաւաստմամբ, առգրաւուել է 1996 թուականի Սեպտեմբերի 27-ին Ազգային Ժողովրդավարական Միութեան (ԱԺՄ) գրասենեակի օրինական խուզարկութեան ժամանակ: Թերթը հրապարակել է նաեւ ձեռագրի լուսապատճէնը: ԱԺՄ նախագահին վերագրուած ձեռագիրը, ըստ թերթի, «իշխանութեան հասնելու գործնական ծրագիր է», որն իրականացնելու մեխանիզմները նկարագրւում են տուեալ ձեռագրում: ԱԺՄ նախագահ Վազգէն Մանուկեանը երկուշաբթի օրը «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց, թէ չի կարդացել իր մասին հրապարակուած յօդուածը: Աւելին, նա ասաց, որ յօդուածում մէջբերուած տողերի հեղինակն ինքը չէ:*

*Ըստ հրապարակման, մինչդեռ, Վազգէն Մանուկեանը 1996 թուականի ընտրութիւնների նախապատրաստական աշխատանքների մէջ որպէս կարեւորագոյն խնդիր դրել է հանրապետութիւնում ստեղծուել «վճարովի տոտալ լրտեսական ցանց», որը պէտք է լրտեսէր հանրապետութեան ամենաբարձրաստիճան պաշտօնեաներից մինչեւ «շուկայական մանր շեֆերը»: «Իսկ լրտեսութեան ամենակարեւոր օբիեկտը, անշուշտ, պէտք է լինէր երկրի առաջին դէմքը», - եզրակացրել է թերթը:*

*Որպէս ապացոյց, թերթը վկայակոչում է ձեռագրի հետեւեալ հատուածը. - «Եթէ Հանրապետութեան նախագահը ունի գաղտնի պայմանագրեր, խօսակցութիւններ, որոնք հակադրւում են մեր ազգային ու պետական շահերին, յայտնաբերել այդպիսիք եւ հրապարակել Ազգային Ժողովի թէկուզ փակ նիստերում, եթէ կարելի է՝ նաեւ մամուլում եւ հանրահաւաքներում»:*

*«Նախեւառաջ ես չեմ ուզում քննարկել, որ 1996 թուին մտան մեր գրասենեակը ջարդեցին, դա օրինական խուզարկութիւն էր, թէ ոչ: Մի կողմ թողնենք, թէ ինչ-որ փաստաթուղթ մեր կուսակցութիւնից հանել են, թէ ոչ: Մի կողմ թողնենք նոյնիսկ այն թոյնը, որը այդ յօդուածում կայ, բայց ցաւօք սրտի ոչ միայն այդ յօդուածում, այլ կամացկամաց թոյնի մթնոլորտ է տիրում Հայաստանում ու՝ միշտ նոյն աղբիւրից», - ասաց Մանուկեանը:*

*ԱԺՄ նախագահին, իր խօսքով, միայն մէկ հարց է հետաքրքրում. - «Քանի որ գիտեմ, որ ես չեմ գրել դա, ես դիմում եմ դատախազութեանը, որպէսզի փորձագիտական քննարկում տեղի ունենայ իմ ձեռագրի եւ այդ գրածի: Եւ երբ ապացուցուի, որ այդ ձեռագիրը իմը չէ, մնացածը մնում է իրենց խղճի վրայ»:*

*«Փողը «գերմարդ» Վազգէն Մանուկեանի համար կարեւոր փակտոր է: Նրա համոզմամբ, նոյնիսկ հայրենասիրութեան համար վճարամիջոց է այն», - գրուած է յօդուածում: Վազգէն Մանուկեանին են վերագրուել «դեւ», «մերկ դաւաճանութիւն» արտայայտութիւնները: Բացի այդ, ըստ յօդուածագրի, իբր 1996 թուականին Վազգէն Մանուկեանն իր նախընտրական գործողութիւնների թւում նախատեսել է Ատրպէյճանին հրահրել յարձակման անցնել Ղարաբաղի եւ Հայաստանի վրայ եւ դրա միջոցով հեշտացնել իր յաղթանակը նախագահական ընտրութիւններում:*

*Հարցին, թէ յօդուածում իրեն վերագրուած ծրագրերը համապատասխանո՞ւմ են իրականութեանը եւ արդեօ՞ք ունեցել է նման գաղափարներ, ԱԺՄ նախագահը արձագանքեց. - «Բայց ծիծաղելի չէ՞, որ մենք դրա մասին խօսենք»:*

*Նրա պնդմամբ՝ ՀՀՇ-ի իշխանութեան տարիներին եւս եղել են նման խօսակցութիւններ. - «Եւ այդ դէպքում պարզ չէ, եթէ իշխանութիւնն իրենց ձեռքում էր, եւ մէկն ու մէկը, ես եմ, թէ մէկ ուրիշը, եթէ պարզւում է, որ տեռորիզմի կոչ է անում, ինչո՞ւ իրենք չեն կարողացել բռնել եւ դատել այդ մարդուն»:*

*Իսկ հարցին, թէ ով է, իր կարծիքով, կանգնած այս ամէնի հետեւում, Մանուկեանը պատասխանեց. - «Ես կարող եմ միայն ենթադրութիւն անել: Բայց այս տարիների փորձը ունենալով, կարող եմ ասել, որ ամէն մի այսպիսի գործը ունենում է իր ղեկավարը: Այդտեղի ղեկավարը Լեւոն Տէր-Պետրոսեանն է»:*

## «ԵՍ ՉԵՄ ԿՈՏՐՈՒԵԼ», ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՍԴՀԿ «ՍԱՐԳԻՍ ՏԽՐՈՒՆԻ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏԵԱՆ

*ԵՐԵՒԱՆ, »ԱՌԱՒՕՏ»: Դեկտեմբեր 14-ին «Հայեացք» ակումբի հիւրը ՍԴՀԿ «Սարգիս Տխրունի» երիտասարդական ուսանողական միութեան ատենապետ Նարեկ Գալստեանն էր, թեման՝ քաղաքական կեանքում երիտասարդութեան ներգրաւուածութեան աստիճանը: Ն. Գալստեանի փոխանցմամբ, այսօր երիտասարդութեան 70-80%-ը հասարակական-քաղաքական կեանքում որեւէ դերակատարութիւն չունի. «Կարծում եմ՝ այն իրականութեան մէջ, որում մենք ապրում ենք, դա նորմալ է եւ այլ կերպ չէր էլ կարող լինել: Ինչ վերաբերում է երիտասարդութեան ձայնի լսելիութեանը, կարծում եմ՝ այն երիտասարդական ուժը կամ կազմակերպութիւնը, որը ցանկանում է իր ձայնը լսելի դառնայ, անպայման հասնում է ուզածին: Օրինակ, հիմա՝ ոչ միայն մեր, այլեւ շատ քաղաքական կազմակերպութիւնների երիտասարդների ձայնը լսելի է: Ցաւօք, կեղտոտ աշխատանքը մշտապէս տրւում է երիտասարդութեանը: Այսինքն, քաղաքական գործիչները, որոնք մեր աւագ ընկերներն են՝ ընդունում են որոշումներ, իսկ դրանց ընդունման կատարումը յանձնարարւում է երիտասարդներին կամ էլ քաղաքականութեան մէջ քիչ փորձ ունեցողներին, իսկ դա իր մէջ ներառում է հնարաւոր ամէն ինչ՝ թռուցիկ փակցնելուց մինչեւ բանակումների կազմակերպում»:*

*«Առաւօտի» հարցին՝ արդեօք Ն. Գալստեանը չի՞ «կոտրուել» իր հետ պատահած վերջին դէպքերից յետոյ եւ շարունակելո՞ւ է նախկինի պէս ազատ արտայայտել կարծիքն ու տեսակէտները, բանախօսը պատասխանեց. «Ես ՀՀ քաղաքացի եմ՝ պաշտպանուած ՀՀ սահմանադրութեամբ, որը ինձ համար գերակայ արժէք է, ազգային գաղափարախօսութիւն եւ հնարաւոր ամէն ինչ: Բնականաբար, կոտրուելու ոչ մի խնդիր չկայ: Եւ եթէ «կոտրուել» ասելով նկատի ունէք իշխանութիւններին ոչ հաճոյ արտայայտութիւններ ու գործեր անելը, ապա ասեմ, որ ամէն ինչ նորմալ է եւ մեր գործը նախկինի պէս շարունակում ենք: Վերջին դէպքերի հետ կապուած էլ ասեմ, որ նախաքննութիւն է ընթանում, վստահում ենք մեր իրաւապահներին:*



ՍԴՀԿ «Սարգիս Տխրունի» երիտասարդական միութեան ատենապետ Նարեկ Գալստեան

*Դառնալով միւս կուսակցական երիտասարդների հետ «Սարգիս Տխրունի» միութեան համագործակցութեանը, նա ասաց, որ իրենք համագործակցում են միայն ընդդիմադիր կուսակցութիւնների երիտասարդական թեւերի հետ:*

*Ն. Գալստեանը կրկին յիշեցրեց, որ «Սարգիս Տխրունի» երիտասարդական-ուսանողական միութիւնը կանգնած է Լեւոն Տէր-Պետրոսեանի կողքին:*

## ԴԻՄՈՒՄ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Գերագոյն խորհուրդ» պատգամաւորական ակումբը դիմել է Մարդու Իրաւունքների Եւրոպական Դատարան «Հանրային հեռուստառադիոընկերութեան կողմից շարունակուող լայնածաւալ ապօրինութիւնների վիճարկման խնդրով»: Ըստ ակումբի՝ խախտուել են Տեղեկատուութիւն ստանալու եւ տարածելու ազատութեան եւ Արդար դատաքննութեան իրաւունքները:*

*««Հ1» - ի ապօրինութիւնների կանխման եւ մեր իրաւունքների պաշտպանութեան նպատակով դիմել ենք ՀՀ գրեթէ բոլոր իրաւասու մարմիններին, սակայն՝ անարդիւնք,-ասում է հաղորդագրութեան մէջ,_ Դատական համակարգն առանց որեւէ հիմնաւորման եզրայանգել է, որ ՀՀ առաջին նախագահի նկատմամբ «Հ1»-ի ամենօրեայ հակաքարոզչութիւնը օրէնքով արգելուած քաղաքական դիրքորոշման գերակշռութիւն չէ եւ այդ պատճառով չի խախտուել տեղեկատուութիւն ստանալու մեր իրաւունքները»:*

*Ակումբը նաեւ տեղեկացնում է, որ « ԵԽ անդամ երկրում տեղի ունեցող այս սանձարձակ երեւոյթները կանխելու ակնկալիքով դիմել ենք նաեւ ԵԽ անդամ երկրների գրեթէ բոլոր պատուիրակութիւններին եւ եւրոպական հեռուստաընկերութիւնների միութեանը:*

**ՄԱՍԻՍ**

**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

## ԼՈՒՐԵՐ

# ՄԻՔԱՅԷԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԴՈՒՐՍ ԳԱԼ ԵՍՍ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ, ԵԹԷ ԱՏՐՊԷՅՃԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԵԼ»



ՀՀ Պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեան

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանը կարող է դուրս գալ Եւրոպայում սովորական սպառազինութիւնների մասին պայմանագրից, եթէ Ատրպէյճանը շարունակի սպառազինուել: Այդ մասին յայտարարեց պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեանը՝ պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին՝ հնարաւո՞ր է արդեօք, որ Ռուսաստանի օրինակին հետեւելով՝ Հայաստանը դուրս գայ յիշեալ պայմանագրից:*

*«Ամէն մի պետութիւն ինքն է որոշում՝ դուրս գալ, թէ դուրս չգալ», - ասաց նախարարը: - «Հայաստանի Հանրապետութիւնը դեռ այդպիսի որոշում չի ընդունել, բայց եթէ հետագայում Ատրպէյճանը գնայ այն քայլերին, որ մենք հիմա տեսնում ենք՝ մեծ քանակով սպառազինութիւն է գնում-բերում իր պետութիւն, ինչը հակասում է այդ պայմանագրին, եթէ Ատրպէյճանը կանգ չառաւ, իհարկէ, հետագայում կարող է պատահել, որ Հայաստանը ընդունի մէկ այլ որոշում, բայց այդ որոշումը կ՚ընդունի գերագոյն գլխաւոր հրամանատարը, նրանից յետոյ, որպէս պաշտպանութեան նախարար, մենք, իհարկէ, կ՚իրականացնենք»:*

*Ազգային Ժողովի պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործերի յանձնաժողովի նախագահ, պաշտպանութեան նախկին փոխնախարար Արթուր Աղաբեկեանը նոյն առիթով, մասնաւորապէս, ասաց. - «Իհարկէ, այս պայմանագրից դուրս գալը չի բխում Հայաստանի շահերից: Իսկ եթէ յանկարծ չլինի պայմանագիրը, ապա չի կարելի դա դիտարկել որպէս ողբերգութիւն. Հայաստանը պէտք է արդէն հետեւութիւն անի»:*

*«Ատրպէյճանը միշտ մատնացոյց է անում Լեռնային Ղարաբաղի զինուած ուժերը եւ այնտեղ առկայ սպառազինութիւնը, եւ մենք միշտ բարձրաձայնել ենք՝ խնդրեմ, կարծում ենք, ճիշդ կը լինի նաեւ առաջարկել Ղարաբաղին՝ միանալ Եւրոպայում սովորական սպառազինութիւնների մասին պայմանագրին», - շեշտեց Աղաբեկեանը:*

# ՕՍԿԱՆԵԱՆ ԿԸ ՓՈՐՁԷ ՃՇԳՐՏԵԼ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵՒ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանը Դեկտեմբեր 18-ին լրագրողների հետ հանդիպման ընթացքում փորձում էր խմբագրել տարբեր առիթներով երկրի սահմաններից դուրս հնչեցրած՝ վարչապետ Սերժ Սարգսեանի տեսակէտները:*

*ԱՄՆ-ում տուած իր հարցազրոյցում Սերժ Սարգսեանը նշել էր, որ ԼՂ հիմնախնդրի հիմքում երկու երկրների ժողովրդի կրօնական տարբերութիւնը լուրջ խնդիր է: Սերժ Սարգսեանի այս յայտարարութեան կապակցութեամբ Վարդան Օսկանեանը արդրբեջանցի լրագրողներին ստիպուած է եղել բացատրութիւններ տալ, որ հակամարտութեան հիմքում ամենեւին կրօնական տարբերութիւնը չէ:*

*Նա մէկ անգամ եւս, այս անգամ հայ լրագրողներին յայտնեց, որ ԼՂ հակամարտութեան հիմքում ազգերի ինքնորոշման խնդիրն է:*

*Բացի ԱՄՆ-ում արած Սերժ Սարգսեանի յայտարարութիւնից, այսօր Վարդան Օսկանեանը նաեւ փորձեց մեղմել, Բրիւսելում ԼՂ հիմնախնդրի վերաբերեալ «Ռոյթերս» գործակալութեանը Սերժ Սարգսեանի ասածը:*

*Սերժ Սարգսեանը ասել էր, թէ չի բացառում, որ մինչեւ 2008թ ՀՀ Նախագահի ընտրութիւնները ԼՂ հիմնախնդրի բանակցային գործընթացքում որեւէ փաստաթուղթ ստորագրուի:*

*Ի դէպ, ԼՂ հարցում, ի տարբերութիւն Սերժ Սարգսեանի, Ռոբերտ Քոչարեանը ամենեւին լաւատես չէ: Քոչարեանը վստահ նշել է, որ մինչեւ 2008թ. Նախագահի ընտրութիւնները ԼՂ հարցում բացառւում է որեւէ փաստաթղթի ստորագրումը: Օսկանեանը նախ փորձեց բացատրել Սարգսեանի լաւատեսութիւնը:*

*«Ես էլ առհասարակ լաւատես եմ բանակցութիւնների հարցում: Թերեւս դա բոլորի ցանկութիւնն է, որքան հնարավոր է շուտ գալ հիմնական սկզբունքների շուրջ համաձայնութեան, որովհետեւ դրանից յետոյ մեզ հսկայական գործընթաց է սպասում, որովհետեւ սա ընդամէնը վերաբերում է սկզբունքներին: Այդ 2,5 էջանոց փաստաթուղթը պէտք է վերածուի 30 կամ 50 էջանոց խաղաղութեան պայմանագրի, եւ մենք պէտք է սկսենք բանակցել մանրամասների շուրջ: Ինչքան շուտ սկսենք, այնքան լաւ»,- պարզաբանեց Օսկանեանը:*

*Ինչ վերաբերում է նոյն հարցում Ռոբերտ Քոչարեանի վստատեսութեանը եւ ոմանց կողմից վերջինիս «յոռետես» անվանելուն, ապա Վարդան Օսկանեանը կատակելով ասաց. «յոռետեսը դա լաւ տեղեկացուած լաւատեսն է»:*

*Բրիւսելում «Ռոյթերսին» տուած հարցազրոյցում Սերժ Սարգսեանը նաեւ ասել է, որ ինքը պատահական մարդ չէ, եւ մասնակցում է ԼՂ-ի հակամարտութեան հարցում Հայաստանի քաղաքականութեան մշակմանը եւ համաձայն է այն փաստաթղթին, որ օրերս Մադրիդում ներկայացուել է կողմերին: Արդեօք դա նշանակու՞մ է, որ պաշտօնական Երեւանը համաձայնութիւն է տուել ներկայացուած փաստաթղթին՝ հարցին՝ Վարդան Օսկանեանը կասկած յայտնեց, որ Սերժ Սարգսեանը նման բան է յայտնել եւ աւելացրեց. «Գուցէ այդ առումով եղել է որոշակի տարըմբռնում: Փաստաթղթին համաձայնութիւն տալը նախագահի իրաւասութիւնն է: Կարող է վարչապետը՝ բառի օգտագործման առումով, այսպէս, իմաստը թողած լինի, բայց դժուար թէ վարչապետը ասած լինի, որ ես համաձայն եմ, որովհետեւ դա, վերջ ի վերջոյ, գիտէք, Նախագահի կողմից է լինելու: Եւ ես գիտեմ, որ այդպէս չէ: Ես կարծում եմ, որ վարչապետը ասել է, որ ինքը ամբողջութեամբ տեղեակ է փաստաթղթի բովանդակութեանը, եւ թերեւս դա է եղել, որովհետեւ դեռ չի եկել պահը, որ մենք պէտք է դիրքորոշում արտայայտենք այդ կապակցութեամբ»:*

*Պարզապէս նշենք, որ որքան էլ Վարդան Օսկանեանի համար անսպասելի են Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը, պարոն Սարգսեանը հենց այդպէս էլ ասել է եւ նրա հարցազրոյցի այդ հատուածը հեռարձակուել է նաեւ Հանրային հեռուստաընկերութեամբ:*

# ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Շարունակուածէջ 1-էն*

*նախկին փոխնախարար Գուրգէն Եղիազարեանը, «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհուրդի անդամ Արտակ Զէյնալեանը եւ ուրիշներ:*

*Ըստ ՍԴՀԿ ատենապետ Լիւդմիլա Սարգսեանի՝ եւրոպական դիտորդները կը կարծեն, թէ ամէն ինչ կ՚որոշուի ընտրութեան օրը, բայց Հայաստանի մէջ այդպէս չէ. «Վաղուց ժամանակն է բացել միջազգային դիտորդների աչքերը, որ Հայաստանում ոչ միայն ընտրութիւնների օրն է պրոցէս զարգանում, այլ այն ժամանակ, երբ գործընթացին է կցւում ողջ վարչական խումբը»:*

*Որպէս ապացոյց Լ. Սարգսեան տուաւ մի քանի օրինակներ. «Մեր աչքերի առաջ վարչական մեքենան վերածւում է ընտրական մեքենայի՝ սպասարկելով միայն իշխանական թեւին: Համաձայն վերջին տուեալների՝ բոլոր գիւղապետերը աւտոմատ դարձել են շտաբի պետեր»:*

*«Նոր ժամանակներ» կուսակցութեան առաջնորդ Արամ Կարապետեան կարծիք յայտնեց, որ օրինաւոր իշխանութիւն ունենալու ճանապարհը մէկն է՝ գունաւոր յեղափոխութիւնը. «ԱՊՀ երկրներից եւ ոչ մէկում իշխանութիւնը չի փոխուել առանց ժողովրդական մեծ ալիքի: Լեգիտիմ նախագահ ունենալ նշանակում է 2008թ. Փետրուարի 20-ին փորձել ժողովրդի ալիքի միջոցով պարտադրել մեր կամքը»:*

*Արամ Կարապետեանը կրկնեց իր այն միտքը, որ ընտրութիւններու արդիւնքներով առաջին փուլին 40 տոկոս պիտի գրուի ի նպաստ Սերժ Սարգսեանի, իսկ երկրորդ փուլին 68 տոկոսով Սերժ Սարգսեան ինքզինք պիտի հռչակէ նախագահ:*

*Նիկոլ Փաշինեան իր կարգին յայտնեց, որ ժողովուրդը պէտք է ընտրութիւն կատարէ երկու թեկնածուներու միջեւ, քանի որ այլ բեւեռ գոյութիւն չունի. այսինքն՝ ընտրութիւն կատարել Սերժ Սարգսեանի եւ Լեւոն Տէր-Պետրոսեանի միջեւ: «Երրորդ բեւեռը շինծու է: Նրան ծառայելը նշանակում է ծառայել իշխանութիւններին»,- շեշտեց ան:*

*«Հայրենիք եւ պատիւ» կուսակցութեան առաջնորդ Գառնիկ Մարգարեանի կարծիքով՝ այս պէտք չէ դնել միջազգային դիտորդներու վրայ, այլ ապաւինիլ սեփական ուժին:*

*«Մեր տունը մենք պէտք է մաքրենք աղբից, իսկ դա, անհրաժեշտ է անել մինչեւ ընտրութիւնները»,- ըսաւ Գառնիկ Մարգարեան:*

*Քննարկման մասնակիցները նաեւ կայացուցին համատեղ փաստաթուղթ ընդունելու որոշում: Փաստաթուղթի նախնական տարբերակին մէջ մասնաւորապէս, Ըսուած է. - «Մեր աչքերի առջեւ վարչական մեքենան ընտրամեքենայի է վերածւում՝ սպասարկելով իշխանական թեւին: Նոր թափ է ստանում ինֆորմացիոն տեռորը: Փակման եզրին է ԳԱԼԱ հեռուստաընկերութիւնը, իրական ընդդիմութիւնը զրկուած է հեռուստաեթերից, դրա փոխարէն ամէն պատեհ-անպատեհ առիթով*

# ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՕՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

*«Մենք դրական ենք վերաբերւում ցանկացած նախաձեռնութեանը, որը միտուած է Հարաւային Կովկասում երկխօսութեան ծաւալմանը»,- այսպէս է պատասխանել ՀՀ ԱԳՆ խօսնակ Վլադիմիր Կարապետեանը «APA» ատրպէյճանական լրատուական գործակալութեան հարցին:*

*Վերջինս ցանկացել է իմանալ, թէ ինչ պաշտօնական դիրքորոշում ունի ՀՀ ԱԳՆ-ն Հայաստանում Ատրպէյճանի շաբաթուայ անցկացման վերաբերեալ:*

*«Կարծում ենք այս նախաձեռնութիւնը վառ ապացոյց է մեր նուիրուածութեանը երկխօսութեանն ու խաղաղութեանը, այն ինչ մասին Մադրիդում Ձեզ տրուած հարցազրոյցում խօսեց ՀՀ ԱԳ նախարար Օսկանեանը»:*

*Յիշեցնենք, որ «Հայաստան - Ատրպէյճան-Թուրքիա. քայլ դէպի երկխօսութիւն» ծրագրի շրջանակներում Երեւանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում անց են կացւում «Ատրպէյճանի օրեր» միջոցառումը:*

# ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

*Շարունակուածէջ 1-էն*

*կան յարաբերութիւններուն՝ ԱՄՆ-ի գործերի ժամանակաւոր հաւատարմատարը ըսաւ, որ Միացեալ Նահանգները յոյս ունի ականատես ըլլալ՝ հայ-թրքական երկխօսութեան զարգացման, որու արդիւնքով նաեւ, դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման ու սահմանի բացման, քանի որ, ինչպէս ըսաւ Ժոզէֆ Փենինկթըն «Անկէ կը շահին ե՛ւ Հայաստանը, ե՛ւ Թուրքիան, ե՛ւ ողջ տարածաշրջանը»:*

*հեռուստաէկրանից չեն իջնում կեղծ ընդդիմադիրներն ու իշխանական թեւի թեկնածուն: Նման գործընթացները յուշում են, որ ինչքան մօտենում է Փետրուարի 19-ը, այնքան անհնար է դառնում լեգիտիմ նախագահի ընտրութեան հնարաւորութիւնը»:*

## ԱԶԳԱՅԻՆ

# Ո՞Վ Է ԾԱԽԵԼ ՂԱՐԱԲԱՂՆ ՈՒ ԵՐ՞Բ

ԳԱՅԱՆԷ ԱՌՈՒՍՏԱՄԵԱՆ

Պատմական տարբեր ժամանակներում հայ ժողովրդի պետականութեան հաստատման առանցքում միշտ արծարծուել է տարածքային հարցը: Եթէ շրջադարձային պահերին, որպէս կանոն, Հայաստանը զիջել է իր հողերի մի մասը, ինչպէս ասում են՝ թիզ առ թիզ, ապա Ղարաբաղի պարագայում տարածքային հարցը եղել եւ դեռ մնում է անլուծելի: Հայկական տարածքի այդ հատուածը, դատապարտուած լինելով կարգավիճակ չունենալու ճակատագրին, շարունակում է մնալ քաղաքական վէճերի, ներքին եւ արտաքին խնդիրների հանգոյց եւ միշտ՝ շահարկման առարկայ: Վերջին 20 տարիներին Ղարաբաղի հարցի լուծման խնդիրը թէպէտ եղել է միջազգային հանրութեան, ազդեցիկ կառոյցների եւ առաջատար երկրների օրակարգում, սակայն Հայաստանի հանրութեան քննարկմանն է արժանացել յատկապէս ներքաղաքական իրավիճակի սրացումներին զուգահեռ, որպէս շահարկման համար ամենայարմար թէմա: Յատկապէս նախընտրական շրջաններում Ղարաբաղի հարցը դառնում է առանցքային, որովհետեւ իր բարոյական, հոգեբանական եւ քաղաքական իմաստով հասարակութեան վրայ առաւել զօրեղ ազդեցութիւն ունի, քան ցանկացած մասնաւոր ծրագիր, ռեֆորմ կամ այլ աճպարարութիւն: Այժմ էլ, երբ իշխանութիւնը կորցնելու կամ զիջելու (եթէ դիմենք ընտրութիւնների քաղաքակիրթ անցկացման ձեւին ու հաւատանք դրան) վտանգ կայ եւ ուժեղ մրցակից, Քոչարեանի կառավարութիւնը հրապարակ է հանել Ղարաբաղի հարցը եւ որպէս այդ մրցակցին չէզոքացնելու անպարտելի խաղաքարտ, լուր տարածել, թէ Տէր-Պետրոսեանը կը ծախի Ղարաբաղը, եթէ նախագահի պաշտօնում ընտրենք նրան: Հասարակութեան այն հատուածը, որն այնուամենայնիւ կուլ չի տայ «ծախելու» խայծը, ստիպուած կը լինի յաղթահարել մէկ այլ որոգայթ՝ հայ-թուրքական ատելութեան կրակը վառ պահող իշխանութիւնների մեղադրանքը թուրքամէտութեան մէջ, որը հնչեց Տէր-Պետրոսեանի ու անուղղակի՝ նրան համակրողների հասցէին: Իսկ ի՞նչ է քողարկուած բոլոր այս մեղադրանքների ու զրպարտութիւնների ետեւում: Էլի Ղարաբաղը, որի ճակատագիրը որոշւում է թաքուն, յանուն այսօրուայ իշխանաւորների անձնական շահի եւ իշխանութեան:

Յիշենք: Ղարաբաղի անկախացման ու ինքնորոշման հարցը յանգեցրեց ազատագրական պայքարի ու որպէս նախախնամութիւն, բաժին հասաւ Տէր-Պետրոսեանին, որը ժառանգեց ոչ միայն պատերազմը, այլեւ տարերային աղէտը՝ Շիրակի երկրաշարժը, հազարաւոր փախստականներին, փլուզուած յետխորհրդային տնտեսութիւնը, շրջափակումը: Յիշենք նաեւ, որ այդ մղձաւանջը թօթափեցինք ընդամէնը 3-4 տարում ու յաղթեցինք: Երբ այդ յաղթանակին զուգահեռ ազատագրուեց Ղարաբաղի տարածքի չափ անվտանգութեան գօտին, Հայաստանի արտաքին քաղաքականութեան շնորհիւ համաշխարհային հանրութիւնը մեզ չէր մեղադրում որպէս ագրեսորի, ինչպէս այժմ: Յաղթանակից ու թէպէտ ժամանակաւոր, բայց հրադադարից յետոյ առաջ եկած բազում ներքին խնդիրներից յետոյ՝ մաուզերիզմ, տնտեսութեան վերականգնում, միգրացիոն շարժէր եւ այլն, պէտք էր լուծել այդ նոյն՝ Ղարաբաղի հարցը, բայց արդէն խաղաղ, բանակցային ճանապարհով: Նորից յիշենք, որ այդ փուլում Ղարաբաղն ունէր արժանապատիւ երկրամասի կարգավիճակ եւ հանդէս էր գալիս որպէս լիիրաւ կողմ:

Ղարաբաղի նորագոյն պատմութեան այս հատուածը յանձնուեց Ռոբերդ Քոչարեանի պատասխանատուութեանը, որի նախագահ դառնալու միակ պատճառն այն էր, որ ամբողջ հայ ժողովուրդը (հայաստանաբնակ) նրան վստահեց որպէս ղարաբաղցու: Այդ վստահութիւնը հետագայում վերափոխուեց տոտալ ատելութեան ու տարածուեց ոչ թէ Քոչարեանի, այլ բոլոր ղարաբաղցիների վրայ, որպէս խարան, բայց սա առանձին թէմա է:

Եւ այսպէս՝ բանակցային փուլ: Որպէս կանոն, բոլոր հանդիպումներից ու բանակցութիւններից յետոյ ոչ մի տեղեկատուութիւն չէր տարածւում ու պահպանւում էր գաղտնիութեան սկզբունքը: Սակայն ժամանակ առ ժամանակ հրապարակ էր նետւում Ղարաբաղը ծախելու կամ լաւագոյն դէպքում՝ տարածքներ փոխանակելու մասին լուրը: Առաջին նման տեղեկութիւնը հասարակայնացուեց 2000-ին, երբ ազգային անվտանգութեան գծով Տէր-Պետրոսեանի նախկին խորհրդական Աշոտ Մանուչարեանը խօսեց Մեղրի-Լաչին տարածքների փոխանակման վարկածից: Հէնց այդ ժամանակ էլ սկսուեց Քոչարեանի գլխացաւանքը, որովհետեւ հասարակութեան տարբեր շերտերում սկսեցին քննարկել հոկտեմբերի 27-ին ԱԺ-ում տեղի ունեցած ահաբեկչութիւնն ու այն կապել Մեղրին յանձնելու մտադրութեան հետ: Սակայն Ղարաբաղը ծախելու մասին մտավախութիւնը հիմնաւորուեց աւելի ուշ, 2002թ. ամռանը, երբ Ալիեւը բացայայտեց «Փարիզեան սկզբունքների» (2001-ի փարիզեան հանդիպում) որոշ դրուագներ: Ըստ Ալիեւի, «փարիզեան սկզբունքը» ենթադրում էր «Հայաստանի Մեղրիի շրջանի տարածքով Ատրպէյճանը Նախիջեւանին եւ Հայաստանը Ատրպէյճանի Լաչինի շրջանի տարածքով Ղարաբաղին կապող տրանսպորտային միջանցքների բացում»: Ընդ որում՝ Ալիեւն ասել էր, որ քննարկել են՝ «Ատրպէյճանին տալ Մեղրիի միջանցքի սուվերէն իրաւունքը, Հայաստանին՝ Լաչինի միջանցքի»: Յիշեցնենք, որ մինչ Ալիեւի այս յայտարարութիւնը պաշտօնական Պաքուն ամբողջ մէկ տարի կտրականապէս հերքում էր այսպէս կոչուած «Փարիզեան սկզբունքների» գոյութիւնը: Հակառակ դրան, պաշտօնական Երեւանը պնդում էր Փարիզեան ու Քի Ուեսթեան պայմանաւորուածութիւնների գոյութիւնն ու յայտարարում, որ հակուած է ընդունել այդ պահանջները: Ալիեւի բացայայտումներին Երեւանը պատասխանեց ԱԳ նախարարութեան եւ նախագահի լրատուական ծառայութիւնների պետերի շուրթերով: Առաջինը հերքեց Ալիեւին եւ յայտարարեց, որ ՀՀ ԱԳ նախարարութիւնը բանակցային գործընթացում բացառում է Լաչինի միջանցքը Մեղրիի միջանցքի հետ փոխելու տարբերակը: Երկրորդի յայտարարութիւնն աւելի հետաքրքիր էր: Նա (Վահէ Գաբրիէլեանը) յայտարարեց, որ պէտք չէ լուրջ ընդունել Ալիեւի յայտարարութիւնը: Յետոյ աւելացրեց. «Ես անձամբ մասնակցել եմ Քի-Ուեսթի բանակցային գործընթացին եւ վստահ կարող եմ յայտարարել, որ Հայաստանի որեւէ մասի սուվերէնութիւնը Ատրպէյճանին յանձնելու մասին խօսակցութիւններն անիմաստ են»,- ասաց Վահէ Գաբրիէլեանը: Նրա այս ոչ միանշանակ յայտարարութիւնը, սակայն, չփարատեց հասարակութեան մէջ հաստատուած՝ «Ղարաբաղը ծախելու» մտավախութիւնը: Ալիեւի յայտարարութեանը պատասխանեցին նաեւ Քոչարեանը եւ այն ժամանակ ՀՀ անվտանգութեան խորհրդի քարտուղար եւ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը: «Լաւ կը լինէր, որ Հէյդար Ալիեւիչը չարդարանար, այլ կոնկրետ կատարեր Փարիզեան պայմանաւորուածութիւնները»,-յայտարարել էր Սերժ Սարգսեանը: Իսկ Ռոբերդ Քոչարեանն էլ իր հերթին մեկնաբանելով «Փարիզեան սկզբունքները», յայտարարեց, որ հանդիպման ժամանակ խօսք է եղել այն մասին, որ «Հայաստանը եւ Ղարաբաղը սուվերէն միջանցքով հաղորդակցութեան իրաւունք ունեն»: Այսինքն չհերքեց Ալիեւին, այլ հաստատեց: Սակայն էականը նոյնիսկ այս բացթողումը չէ: Փարիզեան հանդիպումներից յետոյ փոքրիշատէ բացայայտուած բանակցութիւնների թեման չէր արծարծւում Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Քանի որ գաղտնիութեան քողի տակ ներառուած բանակցային գործընթացը բացառում է այդ թեմայով ցանկացած հարց ու պատասխան, ընդունուած է հետեւութիւններ անել պաշտօնական յայտարարութիւններից, որոնք, այնուամենայնիւ, կրում են խորքային ճշմարտութիւնը: Քանի որ Ղարաբաղի կարգավիճակի մասին լռում են երկու կողմերն էլ (թէպէտ Ատրպէյճանի դիրքորոշումն այդ հարցում առաւել քան յստակ է՝ տարածքային ամբողջականութիւն), ուրեմն այն քննարկուել ու վաղուց ձեռք է բերուել պայմանաւորուածութիւն, պարզապէս չեն հրապարակում, որպէսզի ժողովրդական դժգոհութեան ալիք չբարձրանայ: Զուգահեռաբար ժողովրդին նախապատրաստում են: Շրջանառութեան մէջ դրուեց «գրաւեալ տարածքներ» հասկացութիւնը, եւ պէտք է ասել, որ այն շատ հեշտ փոխարինեց ժողովրդի գիտակցութիւնում հաստատուած՝ «ազատագրուած տարածքներ» հասկացութեանը:

Տարածքների փոխանակման մասին պայմանաւորուածութիւնը չպէտք է բացառել նաեւ այն պատճառով, որ ԱՄՆ կատարած այցի ժամանակ Քոչարեանը հանդիպել էր նախագահ Քլինթոնին եւ փոխնախագահ Ալբերտ Գորին ու ակնարկել, որ «տարածքների փոխանակման» հարցը հայ հասարակութիւնը շատ սուր է ընկալում: Յիշեցնենք, որ միեւնոյն ժամանակ, 2000թ. Յուլիսի 5-ին ՀՀ նորանշանակ վարչապետ Անդրանիկ Մարգարեանը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպմանը հանդէս եկաւ շատ կոշտ յայտարարութեամբ (ըստ երեւոյթին համաձայնեցուած էր Սերժ Սարգսեանի հետ) եւ ասաց, որ չի ընդունում տարածքների փոխանակման մասին ակնարկ անգամ: Նա նաեւ ասել էր, որ նոյն կարծիքին է նաեւ երկրում քաղաքական կշիռ ունեցող ցանկացած ուժ: «Հայաստանը նպատակ չունի իր համար ստրատեգիական նշանակութիւն ունեցող տարածքները դարձնել քննարկման առարկայ: Աւելին՝ կառավարութիւնը Մեղրիի շրջանում սկսել է իրականացնել տնտեսական զարգացման ծրագիր իր այդ հարաւային դարպասները առաւել կենսունակ դարձնելու նպատակով»,- յայտարարել էր Անդրանիկ Մարգարեանը: Ահա թէ ինչու տարածքների փոխանակման հարցը մնաց առկախ ու այդպէս էլ չհաստատուեց Փարիզից յետոյ կայացած Քի-Ուեսթեան հանդիպման փաստաթղթի հիմքում, դրա համար էլ Վահէ Գաբրիէլեանն ասել էր, որ ինքը մասնակցել է բանակցութիւններին եւ փոխանակման պայմանաւորուածութիւն չի եղել: Սակայն ոչինչ չէր ասուել Ղարաբաղի կարգավիճակի մասին, որն ամենայն հաւանականութեամբ վճռուել է հէնց Քի-Ուեսթում:

Քոչարեանի իշխանութեան առաջին տարիներին երեւան եկած տարածքների փոխանակման, մասնաւորապէս՝ Մեղրիի ու Լաչինի միջանցքներին նոյնանման իրաւական կարգավիճակ տալու հարցը երկու երկրների ժողովուրդները կարող էին մերժել կտրականապէս ու նոյնիսկ ալեկոծուել, ուստի Քոչարեանի իշխանութիւնն, ըստ երեւոյթին, որոշեց կասեցնել այն: Փարիզում կայացած հերթական հանդիպման ժամանակ յաջողեց յետաձգել այն՝ բանակցային յաջորդ էտապում քննարկելու պատրուակով: Սակայն Ղարաբաղի կարգավիճակի հարցը հետագայում քննարկելու մասին ոչինչ չի ասուել, եւ, ամենայն հաւանականութեամբ, կարգավիճակի նախնական համաձայնութիւնը ձեռք է բերուել Փարիզում՝ Քի-Ուեսթում վերջնականապէս հաստատելու պայմանով: Տրամաբանական հարց է առաջանում, թէ ինչու մէկ տարի յետոյ Ատրպէյճանը յանկարծ որոշում է խախտել գաղտնիութեան պայմանաւորուածութիւնն ու թոյլ տալ տեղեկատուութեան արտահոսք: Քաղաքագէտներից ոմանք այն մեկնաբանեցին հետեւեալ կերպ. միջնորդ երկրներն են յուշել Ատրպէյճանին՝ Քոչարեանի դիրքերը երկրի ներսում եւ բանակցային սեղանի շուրջը թուլացնելու նպատակով: Սակայն Ղարաբաղի հարցի մասին յաւելեալ տեղեկութիւն ստանալու՝ հասարակութեան յոյսն անմիջապէս բախուեց 2003-ին հաստատուած «մեռեալ սեզոնին»: Սա նախընտրական շրջան էր ինչպէս Ատրպէյճանում այնպէս էլ Հայաստանում, որտեղ Քոչարեանին ոչ ոք եւ ոչինչ չէր խանգարում նախագահի երկրորդ ժամկէտում ընտրուելու ճանապարհին: Այդ պատճառով էլ Ղարաբաղի հարցը Հայաստանում չյայտնուեց նախընտրական քննարկումների կիզակէտում: Առաւելեւս, որ նախագահի ընտրութիւնից յետոյ պէտք էր անցկացնել հանրաքուէ՝ գործող Սահմանադրութիւնում արուած փոփոխութիւնները հաստատելու, եւ դրան զուգահեռ՝ ԱԺ ընտրութիւններ: Այնպէս որ, ժողովրդին պէտք էր հանգիստ թողնել ու նոյնիսկ բթացնել: Իսկ Ղարաբաղի հարցն այնուամենայնիւ կարող է նաեւ անհանգստութիւն առաջացնել:

Շար.ը էջ 19

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ

*ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԼՈՒՍԱԲԱՑ»*

Թուրքիա գիտցաւ իր խաղաքարտերը լաւ գործածել:

Պուշականներ գիտցան իրենց տրուած այդ խաղաքարտերը լաւագոյնս օգտագործել:

Երբ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման օրինագիծը պատրաստ էր Քոնկրէսին ներկայացուելու, Թուրքիա որոշեց ներխուժել Իրաք՝ կիսանկախ Քիւրտական պետութեան տարածքէն ներս:

Իթթիհատականներ/քէմալականներ տարիներէ ի վեր իրենց ընդգրկած սխալ քաղաքականութեան հետեւանքով՝ երկրին մօտաւորապէս մէկ երրորդ՝ 20 միլիոն, բնակչութիւնը կազմող քիւրտերը անտեսեցին, թէ՛ տնտեսական եւ թէ քաղաքական բնագաւառներէն ներս: Անոնց ազգային ինքնութիւնը վիրաւորեցին: Թուրքիոյ մէջ քիւրդ չկայ, լեռնաբնակ թուրքեր կան ըսին:

Տնտեսապէս ընկճուած, իր լեզուով խօսելու-գրելու, դպրոցներ բանալու, գիրք-լրագիր հրատարակելու, լրասփիւռ միջոցներ ունենալու իրաւունքէն զրկուած քիւրդին կը մնար միակ միջոց մը ՝ իր ազատատենչ մարտիկներու փամփուշտով իր պահանջքը լսելի դարձնել:

Ամերիկացի ժողովուրդին մեծամասնութեան փափաքը Իրաքի պատերազմին վերջ տալ է՝ ան նոր Վիէթնամի մը չվերածուած: Տեմոքրատներ պատերազմին վերջ տալու խոստումով մեծամասնութիւն եղան: Բանակը ետ քաշելու համար սկսան Պուշը նեղել:

Եթէ Թուրքիա Իրաք ներխուժէ, դիմացը պիտի գտնէ քրդական բանակը ու Իրաքի ամբողջականութիւնը պաշտպանող ամերիկեան զօրքը, որով թուրք-ամերիկեան բարեկամութիւնը պիտի վնասուի: Թուրքիա պիտի արգիլէ Ինճիրլիքի օդանաւային խարիսխի օգտագործումը, որով ամերիկեան զինուորին ապահովութեան համար հարկաւոր զինամթերքին Իրաք ղրկուելու եւ զօրքը Իրաքէն դուրս քաշելու գործողութիւնը պիտի վտանգուի: Պուշականները այս պատկերը ներկայացուցին եւ Տեմոքրատներ, իրենց առաջարկը՝ բանակը Իրաքէն դուրս քաշել, անելի չմատնելու մտահոգութեամբ, Ցեղասպանութեան ճանաչման առաջարկին Քոնկրէս ներկայացումը յետաձգեցին:

Թուրքերը ճակատամարտը շահեցան, բայց ոչ պատերազմը:

***

Օսմանեան Թուրքերը, քսաներորդ դարու սկիզբը, հայերուն, Արեւմտեան Հայաստանի մէջ, կիսանկախութեան համազօր, բարեկարգումներ կատարելու գաղափարը բնաւ չիւրացուցին:

Քեմալական Թուրքերը, Արեւելեան Հայաստանի մէջ ծնունդ առած Հայաստանի Հանրապետութեան գոյութեան երբեք չհանդուրժեցին: Իմբերեալիստներու դէմ պայքարելու միտումով Լէնինէն ստացուած ամէն տեսակի օգնութեամբ, Հայաստանի վրայ յարձակեցան՝ անոր գոյութեան վերջ տալու նպատակով: Օսմանեան Կայսրութեան մօտ Գերմանիոյ դեսպանը՝ Պերնստրոֆ (1917-1918), ՀՀ անկախութեան հռչակման երրորդ օրը, Պեռլին ղրկած 31 Մայիս 1918 թուակիր տեղեկատուութեան մէջ, ի մէջ այլոց կը գրէ, թէ Թուրքերը չեն ցանկար իրենց սահմաններուն վրայ մահացու հակառակորդ ունենալ:

Հանրապետական Թուրքն ալ, նոյն անհանդուրժողականութեամբ, Հայաստանը շրջապատումի ենթարկած է՝ տնտեսապէս փճացնելու միտումով:

Թուրքիա, որպէսզի միջազգային ընտանիքէն պախարակուած իր այս քաղաքականութեան վերջ կարենայ տալ, երկրին մէջ գոյութիւն ունեցող բոլոր տեսակի »Թապու«-ները պէտք է քօղազերծուին:

Մամուլի, խօսքի, պաշտամունքի ազատութիւնը կաշկանդող բոլոր տեսակի օրէնքները գոյութիւն ունենալէ պէտք է դադրին եւ անգիր օրէնքներու կիրարկման ալ վերջ տրուի:

Դատարանները ոչ միայն խօսքով, այլ գործքով իրենց անկախութիւնը պէտք է ի յայտ բերեն:

Խեղաթիւրեալ պատմութիւն մը դպրոցներէն ներս դասաւանդելու ունակութիւնը պէտք է իր վերջակէտին հասնի:

Նացիզմի հասած ազգայնամոլութեան, ատելութիւն սերմանող ցեղապաշտութեան հրահրումը՝ բացայայտ կամ ծածուկ, պէտք է դադրեցուի:

Կառավարութիւններու պարտականութիւնը ոչ թէ ժողովուրդը »խաբել«, այլ զանոնք ճշմարտութեամբ լուսաւորել է:

Թուրքիա »մտածելակերպի յեղաշրջում«-ի մը կը կարօտի:

Լատինական տառեր եւ արեւմտեան օրացոյց գործածել, սահմանադրութեամբ »լայիք« երեւալ, քաղաքակիրթ աշխարհի հետ միասնաբար Կիրակին հանգստեան օր նկատել, մէկէ աւելի քաղաքա-

Շար.ը էջ 19

# ՆՈՐ ՊԱՅՔԱՐԻ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԸ

*ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ*

Մեծ Եղեռնէն ի վեր մղուող հակաթուրք մեր պայքարը որեւէ ժամանակէ աւելի յաջողութիւն գտած է ներկայիս համայն մարդկութեան մէջ: Իննսուներկու տարի առաջ թուրք պետութեան գործած հայասպանութեան ոճիրը ճանչցող պետութիւններու թիւը տարուէ տարի աւելնալով, արդէն քառասնեակ մը պետութիւններ, որոնց շարքին Ռուսիա, Ֆրանսա ու Գանատա, ցեղասպանութեան յանցանքով կը դատապարտեն Թուրքիան: Դատապարտողներուն միանալու շատ մօտ դիրքի հասած էր նաեւ Մ. Նահանգները, երբ քաղաքական ու տնտեսական մեծ հաշիւները, ռազմավարկան նկատառումները կաշառքներն ու սպառնալիքները նախագահ Պուշն ու Ամերիկան կառավարող խմբակը մղեցին կասեցնելու Ցեղասպանութեան ճանաչման գործընթացը: Ներկայացուցիչներու Տան խօսնակ Նէնսի Փելոսին համոզելով զայն, որ գէթ առժամապէս, Ցեղասպանութիւնը ճանչցող թեւ 106 բանաձեւը չներկայացնէր Քոնկրէսին, առանց ուրանալու պատմական իրականութիւնը: Ճշմարտութիւնը ժամանակաւոր կերպով ծածկելու այս փարմունքը կը նմանի հողով ծածկելու հունտ մը, որատեն մը վերջ պիտի ծլի ու մեծնայ անպայման, տեսանելի դառնալով բոլոր անոնց, որոնք կոյր չեն, կամ իրենց տնտեսական ու քաղաքականշահերուն բերումով կուրացած չեն:

Ցեղասպանութեան այդ ոճիրը համայն մարդկութեան ճանչցնել տալու գործը սրբազան պարտականութիւն մը է, որ ամէն հայ յանձն առած է շուրջ դարէ մը ի վեր՝ նոյնիսկ ամենադժնդակ եւ աննպաստ պայմաններու տակ, աշխարհի բոլոր կողմերը, ուր որ եթէ նոյնիսկ մէկ հատիկ հայ մը կ՚ապրի, եւ ո՞ւր հայ չկայ: Ամէն տեղ են անոնք՝ աքսորէ, սովամահութենէ եւ համատարած ջարդերէ ճողոպրած, բեկորներու յաջորդած սերունդները, որոնք դահիճին ձեռքէն բռնած հազիւ ու հատուցում կը պահանջեն այժմ: Այդ պայքարը պէտքէ զարգացնել ու զօրացնել ռազմադաշտ իջեցնելով մեր բոլոր ուժերը, օգտագործելով բոլոր մակարդակներու բազմակողմանի մեր կարելիութիւնները եւ որոնելով նոր միջոցներ եւ զինակիցներ:

Օսմանեան կայսրութեան դարաւոր բռնատիրութեան ընթացքին միայն մենք չէ որ տառապեցանք: Այո, մեր տառապանքը մեծագոյնը եղաւ՝ շուրջ մէկ ու կէս միլիոն նահատակներով եւ մեր հայրենիքի մեծագոյն մասը կորսնցնելով, սակայն, մարդկային ու նիւթական մեծ կորուստներու ենթարկուեցան նաեւ յոյներն ու պուլկարները, արաբներն ու քիւրտերը: Արաբական Սանճաք նահանգը, Անտիոքէն մինչեւ Մուսա Լեռ (Սուէտիա) թրքական գրաւման տակ կը մնայ: Բիւզանդական կայսրութեան մայրաքաղաք՝ Կոստանդնուպոլիսը թրքական Սթամպուլը եղած է: Մարմարայէն արեւմուտք եւրոպական Թուրքիա կոչուածը պատմականօրէն յունական ու պուլկարական երկրամասեր են: Իսկ բազմատասնեակ միլիոններու հասնող քիւրտերը, Վանայ լիճէն շրջակայքն ու հարաւ, մինչեւ Սուրիա եւ Իրաք, Թուրքիոյ բնակչութեան մեծագոյն մասը կը կազմեն: Թուրքիոյ 70-80 միլիոն բնակչութեան փոքրամասնութիւնն է միայն թուրք տարրը՝ այն ալ բռնի թրքացուած հայ, յոյն, լազ, ասորի եւ քիւրտ բաղադրութեամբ: Անատոլու կոչուած Արեւելեան Թուրքիան մեծ մասամբ կը բաղկանայ պատմական Հայաստանի բռնագրաւուած մասէն, ուր ապրող երկու կէս միլիոն հայութիւնը բնաջնջումի ենթարկուեցաւ Օսմանեան եւ Հանրապետական Թուրքիոյ կողմէ, որ իր այդ հրէշային ծրագիրը ամբողջացուց 1915ի Ցեղասպանութեամբ:

Այժմ հերթը քիւրտերունն է: Բայց քիւրտը հայ չէ, անզուսպ ու կատաղի կռուարար է: Այն քիւրտերը որոնք դար մը առաջ թուրք իշխանութիւններուն կողմէ խաբուելով մղուեցան հայ ջարդելու, այսօր Թուրքիոյ գլխաւոր թշնամին են: Խաբուած, դառնացած, ատելութեամբ լեցուած եւ լաւ զինուած քիւրտերը, որոնք հայ տարրին առնուազն տասնապատիկ թիւը ունին, այժմ Թուրքիոյ մեծագոյն գլխու ցաւն են: Գլխու ցաւ մը՝ որուն դարմանումը Թուրքիոյ մասնատումով միայն կրնայ կատարուիլ՝ քիւրտերուն եւ հայերուն զիջելով անոնց հողային ու նիւթական իրաւունքները: Իսկ մարդկային միլիոնաւոր զոհերու հաշուեյարդարը Նիւրեմպերկեան նոր դատարանի մը արդար վճիռով կրնայ միայն կատարուիլ:

Ահա, ասպարէզը՝ ուր հայ դատի հետապնդման նուիրուած կազմակերպութիւններն ու արդարութեան ատեանները կրնան ու պէտք է անհրաժեշտօրէն գործակցին վերոյիշեալ տարրերուն հետ մանաւանդ քիւրտերուն հետ, որոնց պայքարը արիւնալի ռազմադաշտի մը վերածուած է Արեւելեան Թուրքիոյ Հարաւային մասը, անկախ Քիւրտիստան մը հիմնելու բոլոր հաւանականութիւններով եւ իրաւունքներով, միջազգային ծածուկ քաջալերանքով եւ նոյնիսկ Թուրքիոյ աւանդական պաշտպան Մ. Նահանգներուն մեղսակցութեամբ:

A.B.A. INSURANCE SERVICES
Commercial Auto Fire Life Health
Blue Cross of California
Blue Shield of California
A.B.A. INSURANCE SERVICES
Thanks to Our Valued Clients
Season's Greetings
Շնորհաւորութիւններ
Ամանորի Օրերու Առթիւ

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻՐԱՄԱՆԹՕ
ՄԱՐՈՆԵԱՆ
818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹՐԻՔ ԵՒ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

*ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՀԱՆԷՍ*

*Գոհաբանութեան օրը տօն մըն է ուր ընտանիքներ եւ բարեկամներ կը հաւաքուին, յիշատակելու, զուարճանալու եւ բաժնեկցելու համեղ ճաշը եւ ընդհանուրով փառք տալու այդ տարուայ իրենց ունեցած բարիքներուն համար:*

*Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Պոլսահայ Միութիւնը ուրախութիւնը այս երեկոյին մեծարեց այն անդամները իբրեւ ճանաչում անոնց ծառայութեանց արժէքին իրենց խօսքին եւ գործերուն վկայութեամբ:*

*Հինգշաբթի, Նոյեմբեր 29ի գիշերը, Վէն Նայսի Ս. Պետրոս Հայց. Առաք. Եկեղեցւոյ «Գարակէօզեան» սրահին մէջ, բացման խօսքով հանդէս եկաւ Միութեան ատենապետ՝ Սիմոն Աճըլեան որ հակիրճ բացատրութիւն տուաւ այդ օրուայ ճաշկերոյթին իմաստին մասին, ապա մի առ մի շնորհակալութիւն յայտնեց յանձնախումբերու ատենապետներուն եւ իրենց անդամներուն, նուիրումի, անձնազոհութեան խոր ձգտումով եւ գիտակցութեամբ իրենց միամեայ ծառայութեան համար:*



*Սիմոն Աճըլեանի կրծքանշանով կը պարգեւատրէ Տոքթ. Արթօ Էրսան-Խաչերեանը*

*տարի ծառայող հետեւեալ անդամները որոնք ադամանդեայ ակով կրծքանշան ստացան ձեռամբ՝ Մայր վարչութեան անդամներուն:*

*Տեարք Պէպօ Իշխանեան, Օննիկ Գասապեան, Իրաւաբան Արմենակ Գավճեան, Տօքթ. Մարք Քէօշկէր եւ Օրդ. Էլիզապէթ Քէօսէեան:*

### *10 ՏԱՐԻ ԾԱՌԱՅՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ*

*Ադամանդեայ երեք ակով յա-*



*Մշակութային Յանձնախումբի եւ «ՁԱՅՆ» պարբերաթերթի զոյգ խորհրդանշաններով կարկանդակը*

*Իւրաքանչիւր յանձնախումբի ատենապետ արտասանեց իր սրտի խօսքը կարճ տեղեկութիւն փոխանցելով յանձնախումբի գործունէութեանց մասին:*

*Այս տարի մեծարուեցան 10*

*տուկ կրծքանշանով պարգեւատրուեցաւ Մշակութային Յանձնախումբի Ա. Ատենապետ՝ «ՁԱՅՆ» եւ «ՇՈՂ» պարբերաթերթերու*

*Շար.ը էջ 8*

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՀՀ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀ

Լեւոն Տեր Պետրոսյան

## ՀԱՒԱՏՈՒՄ ԵՆՔ ԼԵՒՈՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆԸ, ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆԸ ԵՒ ՀԶՕՐ ԿԱՄՔԻ ՈՒԺԻՆ

*Աշխարհի ժողովուրդների թագի վրայի փոքրացած, աղամանդացած ժողովուրդն ենք: Մեր կապիտալը բանակը չէ, բնական հարստութիւնները չեն, երկրի ծաւալը չէ, այլ մտքի ուժն է, հնարամտութիւնն ձեռներեցութիւնն է, տաղանդն ու ճաշակն է: Պատմութեան աղէտներին դիմակայել ենք մեր ազգային մշակոյթով, մեր ինքնուրոյն բառ ու բանով, ճարտարապետական ինքնատիպութեամբ, եւ մեր մտաւոր կարողութեամբ: Մեզ սազական չէ նիւթապաշտութեան յոռի ցոյցութիւնը: Մենք ստեղծող, կառուցող, արարող ժողովուրդ ենք: Մենք չենք կարող շռայլել մեզ տրուած ոսկի պատմական առիթը՝ կարգի դնելու մեր ազգային տունը, օճախը, վայելելու անկախ ապրելու բացառիկ առիթը: Եթէ երկիրը կայուն հիմքերի վրայ չդրուի եւ տեղի չունենայ ժողովրդավարութիւնը, ապա պատմութեան ալիքը կարող է նորից շեղել իր ուղղութիւնը:*

*Մեր ուժը Մատենադարանի բովանդակութեան մէջ է եղել, մեր արուեստի եւ գրականութեան մէջ է եղել, աստղագիտութեան եւ ճարտարապետական կոթողների մէջ է եղել, մեր ինքնուրոյն գրեյակերպի եւ մտաւոր հարստութեան մէջ է եղել: Մենք պէտք է տէր կանգնենք մեր մտաւոր հարստութեանը, ոչ թէ նիւթը դարձնենք պաշտամունք:*

*Հայաստանի առաջին նախագահ, յայտնի պետական եւ քաղաքական գործիչ, միջազգային ճանաչում գտած դիւանագէտ,ականաւոր մտաւորական-գիտնական Լեւոն Տէր Պետրոսեանի՝ նախագահ ընտրուելու թեկնածութեան առաջադրումը, մեզ շատ ոգեւորել է:*

*Մենք հաւատում ենք Լեւոն Տէր Պետրոսեանի հայրենասիրութեան ուժին, քաղաքագէտ լինելու տաղանդին: Հաւատում ենք, որ նա քաջատեղեակ է աշխարհի քաղաքական անցուդարձից եւ գիտակցում է մեր երկրի դերը աշխարհում: Նա, ով մեծ եւ օրինակելի մարդ է, հասկանում է արդարութեան հարցերը, իսկ փոքր մարդիկ միայն հասկանում են շահի հարցերը:*

*Հաւատում ենք, որ նա նիւթից բարձր անհատ է, եւ իր մտքի զօրութեամբ, հզօր տրամաբանութեան կը ծառայի մշակոյթի, գիտութեան, եւ տնտեսութեան բարձրացմանը հայրենիքում: Կը նպաստի, որպէսզի եկող սերունդը իր երկրին տէր կանգնի, իր ապագան իր երկրում տեսնի, հայրենիքին ծառայի, ոչ թէ միջոց փնտռի հայրենիքից հեռանալու: Սփիւռքում ապրող բազմաթիւ մտաւորականներ եւ արուեստի մշակներ սպասում են, որ այս ինքնակոչ եւ խարդախութեամբ իշխանութեան գլուխն անցած կառավարութիւնը, որ սեփականացրել ու առուծախի է ենթարկել Հայաստան աշխարհը, հեռանայ: Փոխարէն գայ պայծառատես եւ անաչառ Լեւոն Տէր Պետրոսեանը, որը գիտի, թէ որտեղ է մեր երկրի մտաւոր կապիտալը, թէ ինչից են բխում ժողովրդի տնտեսական դժուարութիւնները, եւ որն է մեր ազգային հպարտութիւնը:*

*Հպարտ կը լինենք այդպիսի արժանաւոր անհատ տեսնել որպէս մեր երկրի նախագահ: Յորդորում ենք հայրենաբնակ մեր քոյրերին եւ եղբայրներին համախմբուել Լեւոն Տէր Պետրոսեանի շուրջը եւ նեցուկ կանգնել նրան: Հաւատում ենք մեր ժողովրդի հեռատեսութեանը, պայքարի ուժին, եւ ոչ հեռու ապագայում, Հայաստանի ժողովրդավարութեան յաղթանակին:*

**ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՆՈՅՆԱԽՈՀՆԵՐԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ**

Ardarutiun@gmail.com



## ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԻ 145-ՐԴ ԹՌԻՉՔԸ $6 ՄԻԼԻՈՆԻ ՆՊԱՍՏ ՈՒՂԱՐԿԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ

*Միացեալ Հայկական Ֆոնտի 145րդ թռիչքը Երեւան հասաւ Դեկտեմբեր 15ին, փոխադրելով աւելի քան $6 միլիոն արժողութեամբ մարդասիրական օգնութիւն:*

*Այս թռիչքով, Միացեալ Հայկական Ֆոնտը իր կողմէ տրամադրեց $3.8 միլիոն արժողութեամբ դեղորայք եւ բժշկական պիտոյքներ, որ նուիրուած էին AmeriCares կազմակերպութիւնը (2.6 միլիոն արժողութեամբ), Կաթողիկէ Բժշկական Առաքելութեան Վարչութիւնը ($870,000), Քանատայէն՝ Health Partners International կազմակերպուփւնը ($175,000), MAP International կազմակերպութիւնը (90,000) եւ Direct Relief International կազմակերպութիւնը (4,000):*

*Հետեւեալ կազմակերպութիւններն ու անհատները եւս ապրանքներ նուիրելով մասնակցեցան այս թռիչքին _ Հայկական Օգնութեան Ֆոնտը ($2 միլիոն արժողութեամբ), Բժ. Սթիվըն Քաշեան ($62,000), Բժ. Հրայր Կարապետեան ($40,000), HEROS ընկերութիւնը (32,000), Հայաստան Համահայկական Հիմնարկ/Project Cure ծրագիրը ($23,000), Գալիֆոռնիոյ Ամերիկահայ Բժշկական Միութիւնը ($23,000), Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը ($21,000), եւ Հայ Օգնութեան Միութիւնը ($20,000):*

*Թռիչքին մասնակցեցան նաեւ Հայ Որբերու Օգնութեան Միութիւնը ($19,000), Անգլիայէն՝ Birthlink կազմակերպութիւնը ($17,000), Ամերիկահայ Մշակութային Միութիւնը ($15,000), Ուոլթըր Պանտազեան (9,000), եւ Անգլիայէն՝ Konnect9 կազմակերպութիւնը ($8,000):*

*1989էն ի վեր, Միացեալ Հայկական Ֆոնտը 145 թռիչքներով եւ 1,518 ծովային արկղներով $512 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:*

*Միացեալ Հայկական Ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումարին: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդարան, եւ Լինսի Հիմնարկին:*

*Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Միացեալ Հայկական Ֆոնտի գրասենեակին՝ 1101 North Pacific Avenue, Suite 301, Glendale, CA 91202 կամ հեռաձայնել (818) 241-8900 թիւին:*

## ՊԱՐՈՆ ԿԱՐՊԻՍ ԲԵՄ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ ՅՈՒՆՈՒԱՐ 17ԻՆ

### ՎԱՀԷ ՊԷՐՊԷՐԵԱՆԻ ԹԱՏՐՈՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

*Լոս Անճելըս - Հեղինակ, երգիծաբան եւ արուեստագէտ Վահէ Պէրպէրեան թատրոն կը վերադառնայ բեմադրելով իր նոր թատերախաղը Պարոն Կարպիսը, որ պիտի ներկայացուի Շըրմըն Օքսի Whitefire Theatreին մէջ, Յունուար 17էն մինչեւ Մարտ 9ը:*

*Հայերէնով գրուած Պարոն Կարպիս թատերախաղին կեդրոնական կերպարը 80նոց նախկին Պուրճ Համուտցի մըն է, որ North Hollywoodի իր տան բազկաթոռին մէջ նստած, իր յիշատակները պաշտպանելու համար պատերազմ հռչակած է իր շրջապատին հետ: Ան ոգի ի բռին կը կռուի իր համոզումներուն ու բարքերուն համար, գիտնալով հանդերձ որ անցեալ ըսուածը միշտ իր մութ խաւերով եւ գաղտնիքներով կու գայ: Երկու տեսարաններէ բաղկացած մէկ արարնոց թատերախաղին մէջ երեք սերունդներ՝ Պարոն Կարպիսին, իր զաւկին Ժիրայրին եւ թոռնիկին Խաժակին, իրար կը բախին ու ամէն մէկ սերունդ կը փորձէ իր սահմանները անխախտ պահել:*

*Բուռն վիճակներ ու պատկերներ գծելով հանդերձ, թատերախաղը համեմուած է Պէրպէրեանական դասական հիւմուրով, որ մնայուն ներկայութիւն է հեղինակին բոլոր գործերուն մէջ: «Հիւմուրը իմ գոյութեանս եւ առհասարակ կեանքի անբաժան մասնիկն է, կ՚ըսէ Պէրպէրեան. Եթէ արուեստագէտ մը յաջողի հաւասարակշիռը պահել կատակերգութեան եւ ողբերգութեան միջեւ, կը նշանակէ որ կեանքին էութեան թափանցած է»:*

*Հաւանաբար այդ հաւասարակշիռը գտնելու փորձերէն մէկն ալ Պէրպէրեանի թատրոն վերադառնալուն մէջ պէտք է տեսնել, մանաւանդ իր երեք մենախօսութիւններէն Եւայլըրնի, Նաեւի եւ Տակաւինի յաջողութիւններէն ետք: «Անդրադարձայ որ մենախօսութիւններուս պատճառով սկսած եմ ինքնակեդրոն դառնալ: Ամէն բան ինձմէ կախեալ էր եւ լրջօրէն պահանջքը կը զգայի ինքզինքէս քիչ մը դուրս ելլելու: Ուզեցի բան մը ընել, որմէ ես ֆիզիքապէս բացակայ եմ, եւ ատոր համար ալ դեր չվերցուցի ներկայացման մէջ», կ՚ըսէ Պէրպէրեան:*

*Ներկայացումը գործակցութիւն մըն է հին ընկերներու միջեւ, որոնք մօտ 20 տարի առաջ միասին աշխատելու սկսած են: Խումբին անդամներէն շատեր միասին աշխատած են Վարդագոյն Փիղի (1985), Աւազախրումի (1987), եւ 200ի (1989) ներկայացումներու ընթացքին: «Սեղմ ընտանիք մըն ենք եւ տարիներու այդ մտեմութիւնը երթալէն աւելի զօրացած է», կ՚ըսէ թատերագիրը, աւելցնելով որ շատ կարօտցած էր թատրոնի իր ընտանիքին հետ աշխատիլը:*

*Պարոն Կարպիսին երեք կերպարները երկու տարբեր խումբեր կը խաղան: Հինգշաբթի եւ Շաբաթ երեկոները բեմ բարձրացող խումբին դերասաններն են Արա Պաղտոյեան, Արա Մածունեան եւ Քրիս Պետեան, իսկ Ուրբաթ եւ Կիրակի օրերը խաղցող խումբին մէջ են Մորիս Գույումճեան, Սագօ Պէրպէրեան եւ Ռուբէն Գարակէօզեան: Թատերախաղին արտադրիչն է Հրայր Սարգիսեան:*

*Պարոն Կարպիսը պիտի ներկայացուի Յունուար 17էն մինչեւ Մարտ 9, ամէն Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ երեկոները ժամը 8ին, իսկ կիրակի կէսօրէ ետքերը ժամը 3ին, Շըրման Օքսի Whitefire Theaterին մէջ: Հասցէ՝ 13500 Ventura Blvd. Sherman Oaks, CA:*

*Աթոռներուն սահմանափակ թիւին պատճառով կը խնդրուի ձեր տեղերը սկիզբէն ապահովել: հեռաձայնեցէ՛ք 818-397-7392 թիւին կամ այցելեցէ՛ք www.BaronGarbis.com կայքը:*

## ՈՂՋՈՒՆԱՀԱՆԴԷՍ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԺԱԳ ՅԱԿՈԲԵԱՆԻ

*Նախաձեռնութեամբ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի, Առաջնորդ, եւ կազմակերպութեամբ Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանի, Նոյեմբերի 21, 2007 երեկոյեան ժամը 7:00ին Առաջնորդարանի «Գալայճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Ողջունահանդէս՝ նուիրուած Բանաստեղծ Ժագ Յակոբեանի:*

*Բացման խօսքը կատարեց հանդիսավար Տիար Բարսեղ Գարթալեան, որ կարդաց նաեւ բանաստեղծին կենսագրականը:*

*«Ժ. Յակոբեան Բանաստեղծը եւ անոր պատգամը» նիւթին շուրջ խօսեցաւ Սարգիս Վահագն: Մեներգներ կատարեց Մաննիկ Մանուկեան, դաշնամուրի մասնակցութեամբ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի - «Հայ Եկեղեցին»՝ խօսք ԺՏ Յակոբեանի, երաժշտութիւն Աննիկ Ջինտարզեանի, «Մեսրոպ Մաշտոցին»՝ խօսք Խաչիկ Դաշտենցի, երաժշտութիւն Զարեհ Եպս. Ազնաւորեանի, «Ալէլուիա»՝ խօսք Ժագ Յակոբեանի, երաժշտութիւն Զարեհ Եպս. Ազնաւորեանի: Իսկ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Փրոֆ. Օշին Քէշիշեան:*

*Բանաստեղծին «Հայր, Հայերէն սորվեցուր» եւ «Օտար չեմ ին» քերթուածները կարդաց Բշր. Վահէ Սրկ. Աբովեան: Ողջոյնի խօսք կատարեց Մասիս Արարատեան: Իսկ իր փակման խօսքին մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը անդրադարձաւ Ժագ Յակոբեան մարդուն եւ բանաստեղծին եւ իր այլ առաքինութիւններու մասին եւ գնահատեց իր երկարատեւ դաստիարակչական գործունէութիւնները եւ բանաստեղծի բեղուն վաստակը:*

*Մեծարեալ բանաստեղծը իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր ի պատիւ իրեն նուիրուած ողջունահանդէսին՝ եւ Հայր Տաճատին, որ կազմակերպչական աշխատանքը եւ յայտագրի պատրաստութիւնը սիրով յանձն առած էր: Սրբազան հօր օրհնութեան աղօթքով փակուեցաւ գնահատական երեկոն, որուն յաջորդեց հիւրասիրութիւնը:*

## ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹՐԻՔ

*Շարունակուած էջ 7-էն*

*հիմնադիր եւ խմբագիր՝ միութեան բազում տարիներու ատենապետ Տոքթ. Արթօ Էրսան-Խաչերեան՝ 30 տարիներու իր նուիրումի, զոհողութեան եւ ծառայութեան համար:*

**ՏՕՔԹ. ԱՐԹՕ ԷՐՍԱՆ-ԽԱՉԵՐԵԱՆ**

*Տրուած ըլլալով որ այս տարի Մշակութային Յանձնախումբի եւ «ՁԱՅՆ» պարբերաթերթի հիմնադրութեան 15 ամեակն էր, երեկոն յատուկ բոյր մը ունէր: Յուշատախտակներով մեծարուեցան Տիկ. Նատիա Պարսամեան, Տիկ. Ալին Տօնիկեան, Տիար Կարպիս Սարաֆեան, Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան, Տոքթ. Արթօ Էրսան-Խաչերեան, Դոկտ. Ռուբէն Զէթինեան, Տիար Սիմոն Աճըխլաչ, Տիար Մուրատ Գազանճը, Իրաւաբան Րաֆֆի Նիզամեան (բացակայ) եւ Տիար Վաչէ Արթինեան (բացակայ) իրենց տարիներու անձնուէր աշխատանքին համար Մշակութային Յանձնախումբին, ինչպէս նաեւ «ՁԱՅՆ» եւ «ՇՈՂ» պարբերաթերթերուն մէջ:*

*Նոյն գործունէութիւններուն համար, 67 անդամներ գնահատագիրներ ստացան: Հատուեցաւ նաեւ կարկանդակը Մշակութային Յանձնախումբի եւ «ՁԱՅՆ» պարբերաթերթի զոյգ խորհրդանշաններով:*

*Ամուր, բեղմնաբեր եւ ապագայի յաղթանակի տեսիլքի փափաքներով փակուեցաւ երեկոն:*

**MELODY INTERNATIONAL MUSIC SCHOOL Inc.**

**ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**

Happy New Year
Join Our New Music School in Pasadena
By Experineced & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar, Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all ages and levels
Professional Digital Recording studio for all your audio recording needs

1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104
Phones: (626) 797-8867 & (818) 599-1606
and
334 N. Central Avenue Unit 202
Glendale, CA 91203

Phones: (818) 244-8244 & (818) 599-1606
Visit us at: www.musiclessons4u.com

# Massis Weekly

Volume 27, No. 46 — Saturday, DECEMBER 22, 2007


## "Legitimate President- 2008" Calls For The Resignation Of PM Serzh Sarkisian

YEREVAN -- The newly formed "Legitimate President- 2008" movement held its first public gathering in Armeni-Marriott Hotel on December 14, 2007. "Legitimate President-2008" movement was launched in an effort to publicize political awareness and enforce democratic process within the populace of the Republic of Armenia for the upcoming presidential elections.

The movement is primarily made up of opposition political parties, political organization, and NGOs. Political parties taking part in the gathering included the Social Democrat Hunchakian Party (S.D.H.P), "Republic" Party, Armenian National Movement (H.H.Sh), the "Alternative Movement," New Times Party, "Heritage" Party. The primary focus of the meeting was to gather an understanding on the methods that all the participating bodies would take to educate the voting populace of their voting rights, and to ensure a democratic process. The participants also stress the need for Serzh Sarkisian, current Prime Minister, and candidate in the upcoming presidential elections to resign. The authorities, and governmental entities loyal to the current regime are doing whatever is possible to hinder a legitimate election, at the helm of which is the Prime Minister. With the current state of affairs the democratic nature of the Presidential elections appear to be grim.

The consensus of the participants was to establish a united front against those elements who wish to falsify the upcoming elections. The unity should be established from the beginning, and all bodies should publicize electoral irregularities, not just on February 19 but immediately. As S.D. Hunchakian party chairwoman Ludmila Sarksyan stressed "the vote rigging does not start on election day, rather it is a long drawn out process that has already started." She also expressed the need to not only educate the electoral populace of the methods of vote rigging already taking place through intimidation and harassment by the present regime, but conveyed that every documented instance will also be reported to all relevant international political and social bodies. Major infringements of human rights violations such as the harassment and closure of independent media outlet Gala TV, the bombing of "Chorort Ishkhanouytoun" newspaper office, and the arrest and severe beating of S.D. Hunchakian "Sarkis Dkhrouni" student union chairmen Narek Galstyan in November, have already been reported to the international bodies.

## US House Approves $58.5 MILLION In Assistance For Armenia And Reinstates Military Parity

WASHINGTON, DC-- The House of Representatives has approved the Fiscal Year (FY) 2008 Omnibus Spending Bill, reinstating military aid parity to Armenia and Azerbaijan by allocating $3 million in Foreign Military Financing (FMF) to both countries. Despite Azerbaijan's continued war rhetoric throughout the year and exponential increase of its military budget, the Administration had proposed to provide Baku with $2 million more in military assistance (FMF and International Military Education Training).

The Omnibus spending package, which combines 11 of the 12 annual appropriations bills into one measure, provides some $516 billion in federal funding, including $58.5 million in assistance to Armenia, an increase of $23.5 million over the Administration's proposal, but less than the nearly $75 million approved in FY 2007. Armenia's neighbors, Azerbaijan and Georgia, are slated to receive $19 million and $50.5 million respectively.

The bill also includes renewed funding confidence building measures for the parties to the Nagorno-Karabakh conflict: "…funds made available for the Southern Caucasus region may be used, notwithstanding any other provision of law, for confidence-building measures and other activities in furtherance of the peaceful resolution of regional conflicts, especially those in the vicinity of Abkhazia and Nagorno—Karabagh."

In addition, the final measure provides continued funding for the Millennium Challenge Account program (MCA), although reduced from $1.8 billion to $1.5 billion. Armenia, based on its record of performance in key indicators, is a recipient of MCA with a five-year $235.65 million compact to reduce rural poverty and increase agricultural productivity.

The agreement on the Omnibus Bill was reached late last week and finalized over the weekend. The Senate is expected to begin consideration of the bill today. Once passed by both chambers, the bill will be sent to President Bush for his expected signature.

## United States Proposes To Sponsor Exit Poll During Presidential Elections In Armenia

The United States has proposed to sponsor a first-ever exit poll in Armenia as part of its efforts to facilitate the proper conduct of next February's presidential election, the U.S. charge d'affaires in Yerevan said on Monday.

Joseph Pennington confirmed reports that he floated the idea at a December 4 meeting with Prime Minister Serzh Sarkisian and that the latter approved it. "We presented that idea to the prime minister and the prime minister was very enthusiastic, as he said so publicly," he said. "We were very pleased at the prime minister's very positive response and we hope to be able to do this."

But the diplomat cautioned that despite Sarkisian's support for the idea the Armenian authorities have yet to make the "final decision" on the U.S. offer.

Speaking at a news conference, Pennington argued that exit polls "enhance the credibility" of election results all over the world and that Armenia would be no exception to that rule.

Continued on page 4

## World Bank Watchdog Group Pressured To Investigate Armenia Infrastructure Funds Cover-up

A petition is being garnered via the internet in an ongoing effort to persuade the World Bank's watchdog organization, the Department of Institutional Integrity (INT), for a full investigation of the alleged World Bank cover up of gross misuse of funds, wide-ranging and high-level fraud, corruption and embezzlement of World Bank allotted funds meant to upgrade Armenia's battered infrastructure.

In 2004, the Armenian authorities established a Parliamentary Commission headed by Armenia's Deputy Speaker of Parliament, and current ARF Presidential candidate Mr. Vahan Hovhanissian. The Commission spent the year studying the World Bank financed Municipal Development Project and the Government's Integrated Finance Rehabilitation Plan, which was supported by the World Bank and under the 'Surveillance' of the International Monetary Fund.

The study into the Municipal Development Project exposed wide-ranging fraud, corruption and embezzlement, to a value of considerably more than the 35 Million Dollar cost of the project. The study into the Government's Integrated Finance Rehabilitation Plan exposed embezzlement scams valued at many tens of millions of dollars. The report also deplored the fact that 27 percent of the World Bank funds have been spent on project management, overheads and logistics.

In 2004, the Commission reported the fraud, corruption and embezzlement to the World Bank Armenia Country Manager and to the Department of Institutional Integrity, but by the end of 2006, the issue seemed to have been the subject of a cover up by the Armenian authorities and the World Bank which at the time insisting that the project's implementation has been success.

Earlier this year the World Bank along with the Armenian authorities were once again put on the defensive by Bruce Tasker, a Yerevan-based British engineer who had participated in the 2003-2004 parliamentary inquiry as an expert, and reported in detail the alleged corruption through his website. Mr. Tasker alleges Mr. Hovhanissian struck a deal with Armenia's "Political Powerhouses" and failed to implement his pledge of government accountability, as well as his promise to publicize the full and final findings of his Commission studies to the people of Armenia.

The irregularities, as well as allegations of a cover up were picked up by the Government Accountability

Continued on page 2

## Hundreds Rally In Gyumri For Embattled Opposition TV Station



Protest in support of GALA TV

GYUMRI -- Hundreds of people rallied in Armenia's second largest city of Gyumri on Wednesday in support of a local television station that has been facing uncertain future ever since providing airtime to former President Levon Ter-Petrosian.

The demonstration was organized by local and Yerevan-based civic groups amid ongoing judicial proceedings that could result in GALA TV being taken off the air. The station was raided by tax inspectors in late October. Its parent company, Chap, was subsequently charged with evading more than 25 million drams ($82,000) in taxes.

The State Tax Service (STS) also alleged that the small broadcaster has been illegally using the local television tower to air its programs to Gyumri and surrounding areas. Earlier this

Continued on page 3

# Decision 2008: New Campaign, Same Old Scare Tactics

**By Marianna Grigoryan**
**ArmeniaNow.com**

H2 Television's well-known political commentator Levon Sardaryan was fired on October 31 for what was explained as "lack of work discipline", but he gives assurances that the real reason is the "unbiased attitude" of his programs to the internal political developments, in particular regarding the upcoming presidential election.



**TV commentator Levon Sardaryan**

Sardaryan, who is an experienced political commentator and before joining H2 in 2000 worked for the A1 plus TV Company shut down by the authorities [in 2002], told ArmeniaNow that he had repeatedly been rebuked for "not always expressing the viewpoints of the authorities", for making TV viewers understand "another" thing with subtext.

The political commentator, however, gives assurances that no air was given to him during the past parliamentary elections with such motivations.

"My programs were not always favored by the 'authorities' and sometimes were not broadcast because of the immediate interference of the authorities," Sardaryan told ArmeniaNow. "My last program was about the upcoming presidential election and I did not speak about the opposition with contempt as it is accepted. It was not broadcast, I was told that my program supported [ex-president] Levon Ter-Petrosyan, while it was mainly about people and was unbiased," Sardaryan says.

After Sardaryan's program was not broadcast, he says he was spotted attending Levon Ter-Petrosyan's rally on October 26, after which he was "asked" to resign from his work of his own will and that the request was explained by his "lacking work discipline."

"They said to me that I was spoiling the air and had to apply for release from my job," Sardaryan says. "And I did that."

Sardaryan says he has always had job offers from other television companies, but after what happened he found himself to be "blacklisted" and currently has no job offer.

"I am a television man, but I seem to be pushed away from that sphere now," Sardaryan says. "But I did a lot for H2 and I didn't think I would deserve that treatment."

Without giving any explanation about that "treatment", H2 Lraber news analytical program director Shavarsh Gevorgyan said that what happened was an "internal matter".

Similar "internal matters" and pressures began after Armenia's first president Levon Ter-Petrosyan announced his political comeback and declared his bid to contest presidency in the forthcoming election.

Despite the fact that government-controlled television companies regularly state that the first president's rating does not exceed 0.5-5 percent, nevertheless the candidate with such a "low" rating every day becomes the main target for pro-government media.

"The news about Ter-Petrosyan's low rating and prestige is in reality a bluff that television media are constantly trying to inject into people's minds through their programs. I say it as a political commentator," Sardaryan says. "If a person's rating is 0.5 percent, how logical is it to attack him with government pickets?" he queries.

Aylntrank (Alternative) public political initiative member, lawyer Norik Norikyan says that "the pickets" are not used unreasonably and are also aimed at sowing an atmosphere of fear among people.

"The noise is not without a reason. The number of people attending mass public rallies is growing and that must be alarming the authorities. And for that very reason people are intimidated by all classical and non-classical means, they go to people's homes and force them not to attend public rallies," Norikyan says.

Norikyan cites his own case when criminal investigators visited him at his home to have a "private chat" with him.

"They were reminding me that I was a married man, had children, parents, a brother," Norikyan claims. "And they advised me to attend to my family, dropping hints."

Armenia's first ombudswoman Larisa Alaverdyan says that such methods are not only punishable by law but are also a human rights violation.

"These are ancient methods and are unbecoming of our country," Alaverdyan, currently a parliament member from the Heritage party, says.

However, according to Norikyan, such "unbecoming" cases are numerous and beginning in October every week they register such violence and pressures with all due evidence.

"We have already drawn up six such documents. They have been translated and sent to corresponding international structures," Norikyan says. "Cases are numerous, but we do not publish them so that an atmosphere of fear will not be created among people."

One of the permanent participants of public rallies, a resident of the town of Armavir (about 40 kilometers outside Yerevan), informed ArmeniaNow that he and several other activists had been summoned to police and received different warnings before public rallies.

"They want to intimidate us. But is that an option?" he says in surprise. "They particularly try to put pressure on activists, dropping hints about their losing jobs, regarding the security of their families and other similar things."

Norikyan says that these and other means are "methods".

"We register everything and it is not accidental," Norikyan says. "This information is forwarded to corresponding structures, with all evidence and we think that they will have a role and will be reflected in international reports at the upcoming presidential election."

# Narek Galstyan: "I Remain Steadfast In Continued Active Public Life"



The Social Democrat Hunchakian party's "Sarkis Dkhrouni" student union Chairman Narek Galstyan was the special guest at the "Hayask" public forum center. Galstyan was the subject of arrest and severe beating in November to hinder his public and political activity expressing displeasure of the current authorities of the Republic of Armenia. During his interview Galstyan conveyed his steadfastness and strong resolve in continued active public life. He also stated his hope that the case regarding his severe beating would culminate in full investigation, disclosure, and punishment of those who were involved.

Narek Galstyan also expressed his desire for change not only in the present governmental authorities but the way all government institutions interact with the youth of the Republic. Galstyan stressed that approximately 70-80 percent of the youth believe that they do not have a role or a voice in the political life of the Republic. Yet if the youth desire they can have a real presence in the country. They must act and organize for their rights. As for the government, this high figure of neglect is due to the authorities unwillingness to eintrust the youth with significance responsibilities in the Republics present or future decisions. In order to rectify the reality of impassiveness of the youth the authorities must engage the them with crucial decision making processes, not just insignificant banter.

As for the Social Democrat Hunchakian party, along with the paty's "Sarkis Dkhrouni" student union are actively supporting and participating in the election prospects of the first President of the Republic of Armenia Levon Ter-Petrosian. in February, Galstyan hopes that a Ter-Petrosian win will result in the government of Armenian to address the wishes and needs of the youth of Armenia.

# Opposition Paper Hit By Blast

YEREVAN -- An explosive device planted at the entrance to the Yerevan offices of opposition newspaper "Chorrord Ishkhanutyun" (Fourth Estate) reportedly went off at around 4:30 am last week, seriously damaging the two entrance doors. Nobody was inside the premises during the blast.



**The entrance to the newspaper offices**

"We did not notice any loss of property," Mher Ghalechian, a "Chorrord Ishkhanutyun" journalist, told RFE/RL. "They probably quickly planted the explosive device and left the scene in haste," he said of the attackers.

Ghalechian also said that police officers arrived at the scene later in the morning to conduct forensic tests and look for possible clues. As of late evening the police did not issue any statements in connection with the incident, which could add to rising political tensions ahead of Armenia's presidential election scheduled for February 19.

"Chorrord Ishkhanutyun," which is published twice a week, is staunchly supportive of former President Levon Ter-Petrosian and hostile to Armenia's current leaders as well as pro-government and even some opposition leaders. The paper routinely derides them in its articles and trademark cartoons.

The "Chorrord Ishkhanutyun" editor, Shogher Matevosian, claimed that her staffers recently received "threats" from Prime Minister Serzh Sarkisian's chief bodyguard and driver and a local government chief. Matevosian said the bodyguard, known to journalists as Vacho, warned her parliamentary correspondent that Sarkisian supporters are increasingly annoyed by "Chorrord Ishkhanutyun" cartoons and that the prime minister may no longer be able to keep them from assaulting her or her colleagues.

Matevosian also claimed that Mher Sedrakian, the controversial mayor of Yerevan's Erebuni district, phoned the paper and swore at one of its employees in response to a derogatory "Chorrord Ishkhanutyun" article about him. "So right now I have two suspects, who are not particularly different from each other: Vacho and Mher Sedrakian," she told RFE/RL.

Matevosian is among five pro-Ter-Petrosian activists who were arrested and are now prosecuted for resisting police orders during an October demonstration in Yerevan dispersed by security forces. The activists were released from police custody after Ter-Petrosian's personal intervention.

# World Bank Watchdog Group Pressured To Investigate

**Continued from page 1**

Project (GAP), a Washington-based group that specializes in whistleblower protection and scrutinizes World Bank projects around the world. It urged the bank's Institutional Integrity Department (INT) to launch an official investigation.

The petition to persuade for a full investigation by World Bank's watchdog organization, the Department of Institutional Integrity (INT), of the alleged World Bank cover up can be found at http://www.ipetitions.com/petition/FightingWorldBankCorruption.

Mr. Bruce Tasker's website can be found at http://better-not-wb-the-wb.blogspot.com.

# From The Book Shelf - Two "Must read" Books "The Fatal Night" And "Ayashi Pandç"

## Part II

**Reviewed by Sarkis Y. Karayan, M.D.**

**"THE FATAL NIGHT : An Eyewitness account of the Extermination of Armenian Intellectuals in 1915". by Mikayel Shamtanchian. 1874-1926. Translated from Armenian by Ishkhan Jinbashian..**
**H. and K. Manjikian Publication – Genocide Library no.2. Studio City. California 2007, 67 p.**

**"AYASHI PANDÇ";[The Prison of Ayash] by Dr.Avedis Nakashian . Printed in Aleppo,1930ies.. Reprinted in 1969 in Beirut by Donigian Press, with the title "Yegherni hedkerov:Hay mdavoragannerou tserpagalutiunç yev Ayashi pandç " [On the tracks of the Genocide; the arrest of the Armenian intellectuals and the Ayash prison]. Summary of this book in English is given by Dr.Nakashian, in his autobiographical book, "A Man Who found a Country"(Thomas Crowell Co, New York, 1940) pp. 204- 222.**

**Mikayel Shamdanjian's book, "The Fatal Night"**

Chankiri is a town located eighty miles northeast of Ankara. This city is remembered as the second slaughter house of Armenian Intellectuals. The group of 150 deportees were sent to Chankiri, after the 71 persons were sent to Ayash prison as stated above. In the group sent to Chankiri there was Mikayel Shamdanjian of Istanbul. He was an intellectual, a newspaper publisher and a teacher. He some-how survived , and after the war, he published in 1919 in Istanbul, his ordeal in a book, titled ,"Hay mdkin harge yeghernin".It was reprinted in 1965 in Antilias, Lebanon.

This year, we are fortunate that this book has been published , for the first time in English, by the H. and K. Manjikian Publications, in Studio city, California. It is translated from Armenian by Ishkhan Jinbashian, under the title,"The Fatal Night:An eyewitness account of the Extermination of Armenian Intellectuals in 1915". This is the second volume of Manjikian publication devoted to the Genocide. This book is specially useful to the new generation of Armenians, who are interested about the events of the genocide, but who do not know enough Armenian to read an Armenian . book . It is also useful to any foreigner who is interested in the Genocide committed by the Turks.

Shamdanjian's story starts, like Nakashian's, on April 24, 1915, by being arrested in Istanbul and deported with other intellectuals by train to Ankara.

He describes the condition in the train, "with the coming of day light, our armed guards become more and more strict, forbidding us to open the windows, get out of the train at station stops, or talk to people outside. We are now in a mobile jail, with our special train spiriting us away to newer and newer horizons and further weighing down on our souls, which only two days ago within the four walls of the gloomy prison, had known how to give wings to our thoughts. (emphasis is mine, S.K.).

When the group of 71 deportees left the train, and went to Ayash, Shamdanjian poses this question to God. " O God, since it is your finger that determines everyone's way, tell us which road our friends are being made to take. Do you really wish the roads of Anatolia to be so treacherous for your Armenian sons".

Shamdanjian's group continues to Ankara, by train, and from there to Chankiri on 42 horse drawn carriages that took about 5 days. This group consisted of 150 deportees. They were not put in any prison, but were told to go and rent homes, and report daily to the local Turkish police . Even though they were not imprisoned, the anxiety of uncertainty of what the future holds for them would easily drive any sane person crazy, specially that news started to filter about the massacres from Ayash prison and general deportation of the Armenians all over Turkey and the hanging of innocent Hnchag leaders in Istanbul. The group in Chankiri were not allowed even to speak with any Armenian of the city. The local people hearing about the newcomers to Chankiri, brought some bedding , and Shamdanjian says that they were not allowed to say even a "thank you" to them.

Of these 150 deportees, 44 persons survived . The rest deported and massacred with the Armenian population of Chankiri.. Of the remaining 106, five persons, including the poet Taniel Varoujan and writer Rupen Sevag were murdered on Oct. 12, 1915 on the road from Chankiri to Ankara, near the village called Tuney. Of the group in Chankiri, 88 Armenian professors, intellectuals , writers were ruthlessly massacred near Beynam , a village located ten miles south of Ankara.

Here I may add that Gomitas Vartabed was first sent to Ayash, and later to Chankiri.Shamdanjian states that they were allowed to have Armenian religious services once a week.

Gomitas Vartabed was set free on May 7, 1915, and returned to Istanbul. A few years ago, in 1995, the Turkish government published an official book, "Armenians in Ottoman Empire, 1915-1920", the book mentioned above.. The telegram signed by Tala'at Pasha to set free Gomitas reads as follows in this book. " Of those Armenians deported to Kengiri, inform the following that they have been granted permission to return to Der-sa'adet: Doctor Vahram Torkumian, Hagop Nergilejian, Garabed Keropian, Zareh Bardizbanian, Puzant Kechian, Yervant Toloyan, Rafael Karagozian and Gomitas Vartabed effendis".

As it is well known, Gomitas Vartabed had a mental breakdown, due to the stress of the deportation, and from which he never recovered completely.

Dar-sa'adet mentioned in the telegram is Istanbul.Literally "house of happiness". What a name for such a city!!!

Shamdanjian was released from Chankiri on June 12, 1915. He wanted to settle in Izmir, but his request was refused, even though his new passport said that he can live anywhere in Turkey. So he settled in the town of Ushak on the advice of an Armenian employThe town of Ushak is located about 60 miles west of Afion Karahisar. In 1914, it had an Armenian community of 120 families. This community was not deported during the War, At present, Ushak has a Turkish population of about 8,000 persons. I do not think there are any Armenians now living here. ( The communities of Istanbul, Kutahya and Izmir were largely free of deportation also).

Shamdanjian lived in Ushak, and worked as a teacher for Armenian students until the end of the war in 1918. He departed to Istanbul in 1919. He wrote his ordeal during deportation in a book titled "Hay mdkin Harge Yeghernin" in the same year, and this book was translated into English this year by Ishkhan Jinbashian, with the title "The Fatal Night". Shamdanjian's book gives a list of the Armenian intellectuals, civic leaders and priests martyred during the genocide. Of course, it is only a partial list of those massacred.

Peter Balakian, the author of the "The Burning Tigris:The Armenian Genocide and the America's Response" page 216, concludes, as follows, his chapter on the ruthless massacre of Armenians that started on April 24, 1915 with the deportation and elimination of Armenian intellectuals. I quote:

"The Young Turk government's extermination of Armenian intellectuals in 1915 was the most extensive episode of its kind in the twentieth century. In many ways it became a paradigm for the silencing of writers by totalitarian governments in the ensuing decades of the century. After April 24 it would be easier to carry out the genocidal program , for many of the most gifted voices of resistance were gone".

Henry Ford considered the study of history bunk or nonsense.. The late British historian A.J.P. Taylor, who taught history all his life, considered that knowing history is of no use. I do not think Hitler would agree with Ford or professor Taylor. Hitler was a good student of the Young Turks' methods of disposing of people considered undesirable. The way Hitler got rid of Polish intelligentsia is a cat-copy of methods of Young Turks. Although Hitler's criminal record is out of my current article, I will give one example to prove what Balakian was stating in the above quotation. Germany attacked Poland on Sept.1, 1939. The German SS troops lost no time in eliminating the majority of Polish intellectuals. In November 1939, they arrested almost 200 professors and fellows of the Jagiellonian University in the Polish city of Cracow- one of the oldest institutions of higher learning in Europe- and of the Polytechnic, and sent them to Sachsenhausen concentration camp, near Berlin. Many of them died there. None of these professors, like the arrested Armenian intellectuals in 1915,. were accused of any crimes. After a few months, in spring of 1940, the Germans launched a massive program – named A-B-Ausserordentliche-Befriedungsaktion (extraordinary pacification action) to exterminate the majority of the Polish intelligentsia.

On another occasion, I will dwell on the elimination of Polish intelligentsia in more detail.

Returning to the book under consideration, "The Fatal Night", Jinbashian's translation reveals that he is a master of the English language and the book can be read and understood easily.

My single objection to the text is that Jinbashian spelled the city that Shamdanjian was deported as "Cankiri". The correct spelling is :Chankiri, or Chankçrç [ Ch as in Chechnia, ç as u in Armenian. On modern maps, it is put as Turks spell it " Çankýrý" [Ç in Turkish is read as Ch in English].

To conclude, I consider the two books reviewed in this article as a "must read" books for anyone who is interested in the Armenian genocide.

***(end)***

# Hundreds Rally In Gyumri

**Continued from page 1**

month, the Gyumri municipality asked Armenia's Economic Court to force GALA to remove its transmitter from the facility. The court already ruled on November 26 to freeze Chap's bank accounts and other assets worth the alleged tax shortfall.

GALA's owner and staff reject the criminal case as baseless and link it to their decision to air, as a paid advertisement, Ter-Petrosian's September 21 that contained harsh criticism of Armenia's leadership. Organizers of the demonstration echoed the claim in their speeches.

"All those infringing on our freedom of speech will be punished by law, God and your contempt. That day will come," said Levon Barseghian, chairman of Gyumri's Asparez Press Club.

Artur Sakunts, a human rights campaigner from the nearby town of Vanadzor, expressed hope that the GALA affair will give rise to a broader pro-democracy movement ahead of next February's presidential election. "We won't allow the regime and its lackeys to trample on our right to free speech," he said. "Hands off GALA!"

Not surprisingly, opposition activists were also on hand to address the crowd and express their solidarity with GALA. "Today Gyumri has proved that it is the most freedom-loving city in the Republic of Armenia," declared Nikol Pashinian of the pro-Ter-Petrosian Aylentrank movement. "No other city in Armenia has a TV station like GALA," he said, referring to the fact virtually all other Armenian broadcasters are loyal to the government. "What is being done to GALA has a political, legal and moral subtext," said Hovannes Markarian, a Gyumri-based parliamentarian affiliated with the opposition Orinats Yerkir Party.

The STS and the regulatory National Commission on Television and Radio (NCTR) deny any political motives behind the crackdown on GALA. But Gyumri residents who braved a cold weather to attend a rare anti-government rally in their city were unconvinced.

"I have come here to think about the my and my children's future," said one 72-year-old woman. "Isn't it shameful to close down our only TV channel telling the truth?"

"We want GALA to stay on air so that we can feel free," said another protester.

## Dr. Richard Hovannisian In Argentina

**By Dr. Nelida Boulgourdjian-Tufekjian**



Professor Richard Hovannisian was in Buenos Aires, Argentina, from November 20 to 25 to participate in an international conference on genocide and to give a public lecture to the Armenian community. The conference was organized by the Universidad Nacional de Tres de Febrero (UNTREF) on the social aspects of genocide. Invited as a distinguished speaker during the plenary session, Dr. Hovannisian focused on the social and economic causes and consequences of the Armenian Genocide. During his presentation, he noted the progress in the study of the Armenian Genocide since his first publication on the subject, *The Armenian Genocide in Perspective*, an outgrowth of a conference held in Tel Aviv in 1982, which the Turkish government tried to prevent in many ways, including political blackmail. The authors in that volume were mostly Armenian, whereas in the subsequent volumes edited and published by Richard Hovannisian, there has been an increasing number of non-Armenian scholars, and the contents have shifted from primarily description of the genocidal process to analysis and interpretation. For example, his fifth volume on the subject, *The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies* (released in November 2007), includes chapters on art, music, cinema, philosophy, literature, and even an essay on historiography by a Turkish scholar. A positive development is that a growing number of post-nationalist Turkish writers feel the need to confront their history, delving into difficult subjects such as the treatment of the native Armenian population in the Ottoman Empire.

During his presentation, Dr. Hovannisian noted that other participants spoke of events that had occurred during their lifetime (Argentine under the military dictatorship; the Balkan conflict and Bosnian massacres; Guatemala; the Holocaust) and therefore spoke with deep feeling, but he explained that the trauma and emotions connected with genocide do not stop with the immediate victims; rather, they are passed down through subsequent generations as in the case of the Armenian Genocide. This trauma is compounded by denial or self-imposed amnesia as manifested for decades by Western governments that had failed to fulfill their pledges regarding the punishment of the perpetrators and rehabilitation of the survivors.

Professor Hovannisian reflected on the endeavors to gain worldwide recognition of the Armenian Genocide, recent developments in the United States Congress, and continued efforts of the perpetrator side and deniers to suppress both truth and memory. He also drew attention to popular misconceptions about tolerance in the Ottoman Empire, as the structure of the Ottoman ruling system was based on institutionalized inequality and second-class citizenship. This was reflected both in official and unofficial ways, including collective popular prejudice and aspersions directed toward the Armenian Christian population. Armenian attempts to achieve equality were perceived as a threat to traditional society and therefore as treachery that had to be punished, as demonstrated during the reign of Sultan Abdul Hamid II.

The policies initiated by the Young Turks after 1908 can be seen as a case of social engineering. Their perception was that the greatest threat to the creation of a Turkish nation-state and eastward expansion was the existence of a large Armenian population still living in their historic homeland. The Turkish rulers resolved to eliminate this major obstacle and ultimately all non-Muslims such as the Yezidis, Assyrians, and Greeks and at the same time to Turkify all non-Turkish Muslim elements such as the Laz and Kurds. These policies continued during the Kemalist era, as Alawis of the Dersim region and elsewhere were massacred and suppressed. The Turkish government's social engineering continues to this day throughout the Kurdish-populated regions of the country.

Dr. Hovannisian also referred to the economic aspects of genocide that entail the transfer of enormous personal and collective wealth from the victim group to the perpetrator side. The Young Turks were determined to create a Muslim bourgeoisie at the expense of Greek, Armenian, and Jewish traders and merchants. Once again this policy was continued into the Republican period in the discriminatory economic policies imposed on the minority elements, especially during World War II.

Consequently, the Armenian Genocide may be considered a prototype of the evolution of modern ultra-nationalistic regimes, particularly those driven by an ideology that can rationalize or justify the use of extreme violence in order to defend against a real or imagined enemy or can facilitate the implementation of xenophobic agendas. The conference participants and audience expressed their strong appreciation of Hovannisian's presentation.

Professor Richard Hovannisian's second lecture was organized by the Free Chair of Armenian Studies at the Faculty of Philosophy and Letters of the University of Buenos Aires and the Armenian Center (Centro Armenio) and held in the Tekeyan Cultural Center. Before an overflow audience, Hovannisian spoke in Armenian about the current situation of Turkey's Armenian provinces, which he recently visited with his wife, Dr. Vartiter Kotcholosian Hovannisian, who also attended the Buenos Aires conference. He presented a realistic picture of the conditions in these areas and their inhabitants and the pitiful state of neglect and destruction of the marvelous monuments of Armenian architecture, either because of neglect or by malicious acts at the hand of man.

During their visit to Argentina, Richard and Vartiter Hovannisian, together with other conference participants, were honored at a reception hosted in the Armenian Embassy by Ambassador and Mrs. Vladimir Karmirshalyan.

## UAF's 145th Airlift Delivers $6 Million Of Aid To Armenia

GLENDALE -- The United Armenian Fund's 145th airlift arrived in Yerevan on December 15, delivering over $6 million of humanitarian assistance. The UAF itself collected $3.8 million of medicines and medical supplies for this flight, donated by AmeriCares ($2.6 million); the Catholic Medical Mission Board ($870,000); Health Partners International of Canada ($175,000); MAP international ($90,000) and Direct Relief International ($4,000).

Other organizations which contributed goods for this airlift were: Fund for Armenian Relief ($2 million); Dr. Stephen Kashian ($62,000); Dr. Hrair Garabedian ($40,000); HEROS ($32,000); Armenia Fund/Project Cure ($23,000); Armenian American Medical Society of CA ($23,000); Armenian Missionary Association of America ($21,000) and The Armenian Relief Society ($20,000). Also contributing supplies to this airlift were: Society of Orphaned Armenian Relief ($19,000); Birthlink of UK ($17,000); Armenian American Cultural Association ($15,000); Walter Bandazian ($9,000) and Konnect9 Organization of UK ($8,000).

Since its inception in 1989, the UAF has sent $512 million of humanitarian assistance to Armenia on board 145 airlifts and 1,518 sea containers. The UAF is the collective effort of the Armenian Assembly of America, Armenian General Benevolent Union, Armenian Missionary Association of America, Armenian Relief Society, Diocese of the Armenian Church of America, Prelacy of the Armenian Apostolic Church of America and The Lincy Foundation.

For more information, contact the UAF office at 1101 North Pacific Avenue, Suite 204, Glendale, CA 91202 or call (818) 241-8900.

## United States Proposes To Sponsor Exit Poll

**Continued from page 1**

"They give people more confidence that the election was fair," he said. "The second benefit that they have is that they give a lot of information on who it was that voted in an election, the demographic segments of the population that took part and also try to get to the question of why the people voted the way they did."

Pennington argued that the U.S. government would commission the U.S. International Republican Institute (IRI) to organize the proposed exit poll. He did not specify if the IRI would also do the necessary fieldwork for the poll or outsource the job to Armenian polling organizations.

The IRI has until now relied on one such organization, the Armenian Sociological Association (ASA), in handling U.S.-funded opinion polls held in Armenia. The ASA chairman, Gevorg Poghosian, is reputed to have close ties to the government. Hence, widespread opposition distrust in the findings of those polls relating to the approval ratings of the country's leading politicians and political parties.

Pennington also said that Washington expects the Armenian presidential ballot to be "an improvement" over last May's parliamentary elections. He said an objective and unbiased media coverage of the vote is essential for its freedom and fairness.

"This is also one reason why we are such a strong supporter of Radio Liberty," he said. "Radio Liberty was cited by the OSCE as one of the positive examples in which an electronic media outlet gave voice to opposition and served as a platform for all kinds of different voices in Armenia."


# GENERAL CONTRACTOR

## BID REQUEST

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E07-22, Module 10.2 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, January 24, 2008. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for: thirteen (13) single family residences, one (1) multi-family duplex dwelling (consisting of two units) and five (5) multi-family triplex dwellings (consisting of fifteen units) for a total of thirty (30) units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. Two Pre-bid conferences have been scheduled for January 3, 2008 and January 10, 2008, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California. Attendance at one or the other conference is Mandatory.

**ՍԴՀԿ 120-ԱՄԵԱԿ**

# ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

*ՄԱՆՈՒԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ*
*(Շարունակուածնախորդ թիւէն)*

Խ. Ծ. Ներկայ յօդուածաշարքը, որուն ընթացք կու տանք »Մասիս«ի ներկայ համարով վերցուած հատուած մըն է Մանուկ Ստեփանեանի 2005թ.ին աշխատասիրած »Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը Առաջին Աշխարհամարտի եւ Հայոց Ցեղասպանութեան ժամանակաշրջանում« պատմագիտական գիրքէն, որ հրատարակութիւնն է »Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիա«յի եւ »Հայոց Ցեղասպանութեան Թանգարանի Ինստիտուտ«ին, Երեւան:




Մանուկ Ստեփանեան պատմագիտական լուրջ վերլուծման կ՛ենթարկէ 120 ամեայ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ազգային, ընկերային, ազատագրական, հայրենասիրական, միջազգային գործունէութիւնը: Ան իր գնահատութեան համար հիմք ընդունելով՝ նաեւ 1918-ին հայ ժողովուրդի մղած բոլոր բաղդորոշ ճակատամարտերուն անոր բերած անպայմանադրական միասնութիւնը, Մանուկ Ստեփանեան ցոյց կու տայ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անխորտակ կամքը, կորովը եւ նուիրուածութիւնը հանդէպ իր ժողովուրդին, հայրենիքին եւ անոնց ազգային երազներուն նուիրագործման գործընթացին:

Արդարեւ, շահեկան աշխատասիրութիւն մը, զոր կը յանձնենք մեր ընթերցողներուն ուշադրութեան:

Յայտնի է, որ հայ կամաւորական ջոկատների եւ առանձնապէս Անդրանիկի ու նրա մարտիկների առաջին ռազմական գործողութիւնները կովկասեան ճակատում պսակուեցին փայլուն յաջողութիւններով: 1914 Թ. Նոյեմբերի 5ին Անդրանիկի ջոկատը, մարտեր մղելով Թուրքերի դէմ, նրանցից ազատագրեց Արաւուլ Լեռան ստորոտի մօտ գտնուող դիրքերը: Այդ կապակցութեամբ գեներալ Ջերնոզուբովը հեռագրում է կաթողիկոսին, որ Նոյեմբերի 5ի մարտերում Անդրանիկի ջոկատը հանդէս բերեց աննկարագրելի հերոսութիւն եւ անձնազոհութիւն: 1914 Թ. Դեկտեմբերի 7ին հայ կամաւորները, յաղթահարելով մեծ դժուարութիւններ շարունակեցին իրենց յաղթարշաւը: Այդ ժամանակ ստացւում է Անդրանիկին ոսկէ սրով պարգեւատրելու լուրը: Ռուսական գեներալները, առաջին հերթին գեներալ Ջենոզուբովը, ջերմօրէն շնորհաւորեցին Անրանիկին այդ բարձր պարգեւին արժանանալու կապակցութեամբ:

1914Թ. Դեկտեմբերի 24ին հայկական կամաւորական ջոկատները ստանում են ընդհանուր նահանջի հրաման, եւ Անդրանիկի ջոկատը շարժւում է դէպի Խոտուր, իսկ այնտեղից՝ Ջերէ քրտական գիւղը: Դեկտեմբերի 25ին կամաւորներն անցնում են Տղմուտ գետը եւ յաջորդ օրը առաւօտեան հասնում Խոյ բնակավայրը: Այստեղից նրանք շարժւում են դէպի Սելիդ Աւար: Այնտեղ էին կուտակուած Սալմաստից հասած փախստականներ, որոնց Անդրանիկը օգնութիւն ցոյց տուեց: Նա յաջողութեամբ կատարեց Մակուի քրտական ցեղային միութիւնների զինուած ջոկատների յարձակումը կասեցնելու հարամանը, ինչը ապահովեց դէպի Ջուլֆա տանող ռուսական զօրքերի նահանջի գծի անվտանգութիւնը: 1915 Թ. Յունուարի 3ին գեներալ Ջենոզուբովը հանդիսաւոր պայմաններում Անդրանիկի կրծքին ամրացրեց խիզախութեան համար շնորհուող Գէորգիեւեան խաչը:

Ինչպէս Անդրանիկի, այնպէս էլ հայ կամաւորական միւս գնդերը Թուրք-իրանական ուժերի դէմ մղուող մարտերում ցուցաբերում էին խիզախութիւն եւ արժանանում էին ռուսական հրամանատարութեան միանգամայն արժանի դրուատանքներին:

Խիզախ հայորդիների կողքին կամաւորական պայքարին ակտիւօրէն մասնակցում էին հնչակեանները: Հայրենիքի ազատագրութեան սուրբ գործին զինուորագրուած հնչակեան կամաւորներից էր ձեւաւորուել 6րդ կամաւորական գունդը:

Հնչակեանների Ռումինիայի կառոյցի կողմից հաւաքագրւում է 107 կամաւոր, որոնց մէջ էր պատերազմի ժամանակ մարտական խիզախութիւններով յայտնի դարձած եւ հերոսաբար զոհուած Անդրանիկ Երէցեանը: ԱՄՆի Ռէյսին քաղաքում գործող հնչակեան կառոյցի կողմից կամաւորական շարժմանը ցոյց տուած համակողմանի օգնութեան վերաբերեալ կան բազմաթիւ վկայութիւններ: Դրանցից մէկում գրուած է, որ Հնչակեան Կուսակցութեան կամաւորները «գերազանց ցանկութիւն ունէին կռուել թրքական բռնակալութեան դէմ: Ընկ. Վահան Մօրլեանը պաշտօն ունէր կամաւորներ արձանագրել: Սարքուեցաւ հրապարակային ժողով, հանգանակուեցաւ 1200 տոլար ու հրապարակաւ կամաւոր արձանագրուեցան քաջակորով Հնչակեան ընկերները հուրաներու եւ խանդավառ ծափերու ներքեւ: Նոյն խանդավառութիւնը յառաջացաւ հետագային Կիլիկիոյ ճակատը մեկնող կամաւորներու ժամանակ»: 86



Սուխումիի կառոյցը ստեղծեց կամաւորուհիներից կազմուած կարմիր խաչի խումբ եւ 50 մարդուց կազմուած մի զօրաջոկատ, որը մարտնչում էր կովկասեան ռազմաճակատում: Հնչակեանների՝ Ֆրանսայում գործող կառոյցը հաւաքագրեց քառասուն կամաւորների, որոնք Գուրգէն Թահմազեանի առաջնորդութեամբ Ֆրանսական բանակի շարքերում եւրոպական ռազմաճակատներում կռւում էին գերմանացիների եւ նրանց դաշնակիցների դէմ: Արեւմտեան Հայաստանից Արեւելեան Հայաստան գաղթած հնչակեանների մի խումբ անցաւ Անդրանիկի ղեկավարութեամբ մարտնչող 1ին կամաւորական խմբի շարքերը:

ԱՄՆի հնչակեանները եւս ակտիւ գործունէութիւն ծաւալեցին մասնակցելու կամաւորական շարժմանը: Կուսակցութեան հաւատաւոր անդամ, յետագայում նաեւ Հնչակեան ջոկատի հրամանատար՝ Միքայէլ Սերեանը (Պանդուխտը), լինելով Ամերիկայի մի շարք կուսակցական կառոյցներում, եւլոյթներ ունենալով ձգտում էր ամէն կերպ ոգեւորել եւ ոտքի հանել իր կուսակից ընկերներին, որպէսզի նրանք իրենց ներդրումն ունենան կամաւորական շարժման մէջ: 87 Թէ ինչպիսի եռանդուն գործունէութիւն է ծաւալել Պանդուխտը ամերիկայում կամաւորների հաւաքագրելու ժամանակ, վկայում է նրա հետեւեալ ձեռագիր նամակը, որը գրուել է 1914 Թ. Դեկտեմբերի 1ին եւ ուղարկուել է Սպրինկֆիլտ քաղաք, Ներսէս Փիլիկեանին. «Սիրելի ընկեր, ստացայ Ձեր 28 Թուակիր նամակը որու մէջ շատ մը կարեւոր խնդիրներ շօշափած էիք. Ընկեր, միջազգային համատարած պատերազմին «շնորհիւ» ճանապարհները անանցանելի դարձած են, սակայն Գործադիր Յանձնախումբը արդէն հրաւէր կարդացած է մեկնելու, այո, ժամանակը հասած է: Ամէն անոնք, որ հայրենասիրական տենչով կայրուին, պէտք է իրենց պարտականութիւնը կատարեն, նամանանաւանդ Ձեզ պէս ընկեր մը, որ ծանօթ է ռազմագիտութեան: Ինձ կը թուի թէ Գործադիրը խորհած է ճանապարհների մասին եւ կարգադրած է. ուրեմն պատրաստուիր մեկնելու: Գալով միջկուսակցական Յանձնախումբին կատարելիք դերի մասին, ան մի բան ընելու անկարող պիտի ըլլայ. ընդհակառակը՝ ներկայ համերաշխութիւնը հացի խնդիր է. եթէ մեր ընկերները չմխրճուէն համերաշխութեան մէջ, Ամերիկայի Հնչակեան շրջանակը ի վիճակի էր մինչեւ 50,000 տոլար հանգանակելու, որովհետեւ չէզոք ժողովուրդի համակրութիւնը մեզ հետ է ներկայիս: Վերջապէս Գործադիր Յանձնախումբը իր այդ անխոհեմ քայլով կենդանութիւն պիտի տայ Վերակազմեալներուն եւ Դաշնակցութեան, որոնց պիտի ազատէ անկումէ, որ այս վեց տարուայ ընթացքում Ժէօն-Թուրքերի ձեռք գործիք ծառայեցին, ամբողջ Հայ կեանքը փոթորկեցին եւ այդ համերաշխութեան «շնորհիւ» մեր բոլոր ընկերների մէջ Թուլութիւն յառաջ եկած է, լքումի մատնելով մասնաճիւղերը: Ընդունեցէք ընկերական սիրալիր բարեւներու Մ. Պանդուխտ» 88

Ակտիւօրէն մասնակցելով կամաւորական շարժմանը, Պանդուխտը գլխաւորում է ամերիկահայ կամաւորների առաջին խումբը, որը 1915 Թուականի Մարտի 12ին հասնում է Կովկաս: 89 Գլխաւորելով ամերիկեան Քերվի քաղաքի հնչակեան մասնաճիւղի կողմից կազմուած 28 կամաւորներին՝ Պանդուխտը մեկնում է Կովկաս եւ ակտիւօրէն կռուի մէջ մտնում կովկասեան ռազմաճակատում:

Կամաւորական շարժմանը յատկապէս ակտիւօրէն օժանդակեցին Պուլկարիայում գործող հնչակեան կառոյցները: Բազմաթիւ պուլկարահայ կամաւորներ Պուլկարիայից անցան Պուխարեստ (Ռումինիա), որտեղից էլ, դարձեալ հնչակեան կառոյցների նիւթական օժանդակութեամբ, ճանապարհուեցին Կովկաս:

Կամաւորական շարժմանը մեծ եռանդով զօրավիգ եղաւ ռումինահայութիւնը: Տեսնելով Ռուսաստանին եւ նրա դաշնակիցներին ամէն կերպ զօրավիգ լինելու ռումինահայութեան պատրաստակամութիւնը, Ռումինիայի ռուսական դեսպանը աջակցեց եւ արտօնութիւն շնորհեց հնչակեաններին, որպէսզի նրանք կազմեն կամաւորական խմբեր եւ ուղարկեն կովկասեան ռազմաճակատ: 1915 Թ. սկզբների տուեալներով միայն Ռումինիայից եւ Պուլկարիայից Կովկաս ուղարկուած կամաւորների Թիւը հասնում էր մօտաւորապէս 850ի: 90

Կամաւորական շարժման ժամանակ Թիֆլիսը դարձել էր կամաւորների հաւաքագրման եւ կազմակերպման հիմնական դարբնոցը: Հնչակեանների բոլոր կառոյցներն իրենց ամբողջ եռանդով ու նուիրումով ոչ մի ջանք չէին խնայում կամաւորական շարժմանը զօրակցելու գործում: Այդ շարժումը կազմակերպելու եւ զօրացնելու հարցերն էր շօշափում 1915 Թ. Յունիսին Թիֆլիսում կայացած հնչակեանների միջշրջանային ժողովը: Ժողովի աշխատանքներին անդրադարձել է Ս. Սապահ-Գիւլեանը՝ 1915 Թ. Յուլիսի 7ին Գահիրէից գրուած իր նամակի մէջ. «Պարսկաստանի մասնաճիւղերը խորհրդաժողով են կազմել, Լազոյին պատգամաւոր են ուղարկել, նա եկել է Կովկաս,

Թիֆլիսի մէջ ժողով են կազմել - պատգամաւորներ են եկել Պաքուից, Էջմիածնից, Երեւանից,

Շար.ը էջ 14

## ՍԴՀԿ 120-ԱՄԵԱԿ

# ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 13-էն*

*կարսից, Նախիջեւանից եւ այլն, 32 հոգի, եւ ժողով են կազմել, ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ խնդիրները հաստատ հիմունքների վրայ դրել, ընտրել են ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԻՉ ԿՈՎԿԱՍԻ, ու կեդրոնի իրաւունքով գործերը վարում են»: 91*

*Թիֆլիսում գործող ՍԴՀԿ կամաւորների խնդիրներով զբաղուող Գործադիր մարմինը գլխաւորում էր նուիրեալ հնչակեան Յարութիւն Գասպարեանը (Արտեմիս): Նրա հսկողութեամբ հաւաքագրուած հնչակեան կամաւորներն անցնում էին զինավարժութիւնների, մարզումների կարճատեւ փորձաշրջան, որից յետոյ խումբ-խումբ ուղարկւում էին ռազմաճակատ:*

*Թիֆլիսում գործող Ազգային բիւրոն իր ձեռքերում էր կենտրոնացրել կամաւորական շարժման ամբողջ ղեկավարումն ու դրա կազմակերպման աշխատանքը: Բիւրոյում գլխաւորապէս եղանակ էին ստեղծում դաշնակցական գործիչները: Այս հանգամանքը որոշակի դժգոհութիւն է առաջացնում հայ հասարակութեան շրջանում: 1916 թ՝ Մարտին ռամկավարների, վերակազմեալ հնչակեանների եւ Ս. Դ. Հնչակեանների ներկայացուցիչները ստեղծում են մի պատուիրակութիւն, որը հանդիպում է Ազգային բիւրոյի ներկայացուցիչների հետ: ՍԴՀԿի կողմից այդ հանդիպմանը մասնակցում էր Յակոբ Ղազարեանը (Լազօ): Պատուիրակներն առաջարկում են, որ Ազգային բիւրոյի ղեկավար մարմիններում տեղեր ունենան ոչ միայն դաշնակցականները, այլեւ բոլոր կուսակցութիւնները եւ այդ ժամանակ հայ հասարակայնութեան շրջանում մեծ մասսայականութիւն վայելող «Գաղափար», «Մշակ», «Վան-Տոսպ», «Հորիզոն» թերթերի ներկայացուցիչները: Այդ առաջարկը չի ընդունւում:*

*Հնչակեանների Թիֆլիսի գործադիր մարմնի անունից Բագրատ Սիւնիքը այցելում է Ազգային բիւրօ: Նա մատնանշում է, որ կամաւորական շարժման ղեկավարման մէջ առկայ է կուսակցական խտրականութիւն: Սիւնիքն, անշուշտ, ակնարկում էր Ազգային բիւրոյի ղեկը հիմնականում իր ձեռքում կենտրոնացրած ՀՅԴ-ին, նրա վարած քաղաքականութիւնը: Նա տեղեկացնում է, որ ՍԴՀԿ-ն վճռել է իր ուժերով եւ իր անդամներով ձեւաւորել կամաւորական գունդ, պահանջ է ներկայացնում Ազգային բիւրոյին, որպէսզի նա արտասահմանից ստացուած միջոցներից որոշ մասը տրամադրի զօրամիաւորման ստեղծմանը: Փորձելով հիմնաւորել, որ իրենք իրաւասու չեն ֆինանսաւորել կուսակցական նախաձեռնութիւններ, Ազգային բիւրոն մերժում է այդ առաջարկը: Սակայն հնչակեանները չեն յուսահատւում: Նոր զօրամիաւորումը ձեւաւորւում է միայն հնչակեանների հաւաքած միջոցներով եւ կրում է 6րդ գունդ անունը: Հնչակեան կամաւորների պատասխանատու Արտեմիսի օգնականներն էին Սարգիս Սարգսեանը (Մաթէոս Սարգսեանը (Փարամազի եղբայրը) եւ Հայկի Նազիքը, որոնք հնչակեան կամաւորներին փոքրաթիւ խմբերով ուղարկում են ռազմաճակատ: 1915 թ. Ամերիկայից եկած մօտ 350 կամաւոր՝ Պանդուխտի գլխաւորութեամբ մեկնում են Կարս եւ սկսում են զբաղուել զինավարժութիւններով:*

*ՍԴՀԿ Կովկասի եւ Ռուսաստանի լիազօր ներկայացուցիչ Բ. Սիւնիքը 1915 թ. Մարտի 13ին էջմիածնի կաթողիկոսարանի դիւանապետ Բագրատ Եպս. Վարդազարեանին գրած նամակով պահանջում էր կուսակցութեանը տրամադրել «Ամերիկայի Ազգային Պաշտպանութեան Յանձնախմբի» կողմից հնչակեան կամաւորների համար ուղարկած 1500 տոլարը: «Կարեւոր եմ համարում յայտնել Ձեզ, նշում էր նա, որ Հնչակեան հազար կամաւորներից բաղկացած 6րդ հայկական կամաւորական տրուժինայի հրամանատարն է ռուս բանակի սպայ հայազգի Յովհաննէս Ջանփոլատեանը, որի օգնականն է Ամերիկայից եկած գործիչ Մ. Պանդուխտը, որոնք ճանչցուած եւ հաստատուած են ինչպէս ռուսական սպայակոյտի, նոյնպէս եւ կուսակցութեան կողմից»: 92 6րդ գնդի զինուորներից մէկը՝ Արամ Զորպաճեանը, իր յուշերում գրել է «Երբ Ամերիկայի կամաւորական խումբը Զ. գունդ կոչուեցաւ, այդ օրերուն մեր գնդապետը ընկ. Պանդուխտն էր: Յետագային, ինծի անծանօթ պատճառներով, ուրիշ հրամանատարներու միջոցով սկսանք մարզուիլ: Պանդուխտը շատ սիրուած եւ կորովի գնդապետ էր»: 93 6րդ գնդի կազմի թուաքանակի վերաբերեալ ճշգրիտ տեղեկութիւններ չեն պահպանուել: Ա. Կիտուրը «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան» գրքում գրում է, որ գունդը բաղկացած էր 1500 կամաւորներից: 94 Այս առումով մէկ տուեալ կայ 1915 թ. Մայիսի 13ին Կաթողիկոս դիւանին ուղղուած «Մշակ»ի խմբագիր Համբարձում Առաքելեանի նամակում: Նրանում նշուած է, որ հնչակեան 6րդ գնդի մէջ կան, ոչ միայն հնչակեաններ այլ նաեւ ոչ կուսակցական կամաւորներ: 95 Հնչակեան 6րդ գնդի նկատմամբ զարմանք է առաջացնում Սիմոն Վրացեանի վերաբերմունքը: Նա 1915 թ. Դեկտեմբերի 20ին Ամերիկայի իր բարեկամներից մէկին ուղղուած նամակի մէջ գրում էր, որ 6րդ գնդում խառնաշփոթ վիճակ է տիրում: 96 Այնուհետեւ նա յայտնում է, թէ «Պանդուխտն իր մարդոց հետ հեռացուցած են եւ նորէն կանչած են Ջանփոլատեանը»: 97 Փաստերի ուսումնասիրութիւնները վկայում են, որ Պանդուխտը երբեք չի հեռացել իր գնդից նաեւ յետագայում, երբ գունդը ղեկավարում էր Գրիգոր Աւշարեանը:*

*Գրիգոր Աւշարեանը նշանաւոր ռազմական գործիչ էր: Աւարտել է Կազանի ռազմական ուսումնարանը: 24 տարեկան նա արդէն հնչակեան 6րդ գնդի հրամատարն էր: պարգեւատրուել է Գէորգիեւեան ոսկէ սրով: Զոհուել է ռազմաճակատում 1915 թ.: 98*

*Գրիգոր Աւշարեանից յետոյ հնչակեան 6րդ գնդի հրամանտարութիւնն անցնում է Հայկ Բժշկեանին: Նա հայկական կամաւորական շարժման մէջ է մտել 1914 թ. վերջին: Սկզբում եղել է հեծեալ վաշտի, ապա 6րդ կամաւորական գնդի հրամանտար: Ակտիւօրէն մասնակցել է Էրզրումի, Խլաթի, Մուշի ազատագրման մարտերին:*

*Ռազմաճակատում ցուցաբերած քաջութեան համար Հայկ Բժշկեանը պարգեւատրուել է Գէորգիեւեան խաչ երկու եւ Սուրբ Աննա շքանշաններով ու մետալներով: 99 1916 թ. նշանակուել է հայկական պահեստային մարտական ջոկատների պետ: Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի ժամանակ գլխաւորել է խոշոր ռազմական միաւորումներ: 1937 թ. անհիմն բռնադատուել է, գնդակահարուել, յետ մահու արդարացուել: 100*

*Ռազմաճակատից իր բարեկամ Մելքոնին 1915 թ. Ապրիլի 11ին ուղարկած նամակում Հ. Բժշկեանը գրում է. «Մի մեղադրէք ինձ սիրելի ընկեր Մելքոն, Ձեր արեւով երդւում եմ մի րոպէ անգամ ժամանակ չեմ ունենում ազատ շունչ քաշելու, երեւակայեցէք իմ դրութիւնը՝ թէ՛ շտապի կառավարիչ եմ, թէ՛ ատրյադի հրամանատար, թէ՛ քարտուղար, թէ՛ բանակի հաշուապահ, թէ՛ հարիւրակի հարիւրապետ եւ թէ՛ բոլոր գործերի հսկող, ահա թէ ինչն է պատճառը, որ չեմ կարողանում Ձեզ հետ նամակագրուել: Ամէն օր հրացանաձգարան ենք գնում եւ Ղարսի մթնոլորտը ղըրղացնում հնչակեան ռազմի երգերով: Շատ ուրախալի տեսարան է, ընկեր Մելքոն, երբ մօտ 600 հնչակեան զինուորներ միատարազ լաւ մարզուած անցնում ենք քաղաքի փողոցներից «Հեռաւոր Երկիր»ը թնդացնելով: Տեսնել է պէտք: Այժմ պարզ ճակատով, հնչակեան դրօշը պարզած կատարում ենք մեր պարտքը եւ զարմացնում մարդկանց թէ ինչպէս մենք քաղցած, տկլոր եւ անփող բանակ կազմեցինք ահռելի ու չափազանց օրինակելի»: 101*

*Պատերազմի ընթացքում հնչակեան 6րդ գունդը դառնում է Պարաղովի գլխաւորած ռուսական մի զօրամասի առաջապահը, որը 1915 թ. գարնանը Ալեքսանդրապոլից մեկնում է Կարս: Այնտեղ Առաքելոց եկեղեցու մէջ տեղի է ունենում գնդի երդման արարողութիւնը: Որոշ ժամանակ անց գունդը Կարսից Բասէնի դաշտով ուղեւորւում է Էրզրում: Ղարաղութ, Բաշ, Զըլըգան գիւղերը անցնելուց յետոյ գունդը 1915 թ. Ապրիլին առաջին անգամ մարտի մէջ է մտնում թրքական ուժերի դէմ: Դրանից յետոյ գնդին սպասում էին բազմաթիւ դաժան մարտեր: Յատկապէս գնդի համար շատ դաժան բնոյթ կրեցին Բռնաշէնի, Տեկերի, Քեռքդաղի, Զորագիւղի, Էսմերի, Բռնակապանի, Վաթօքի, Հէոպեքդաղի, Բագառիճի, Մամախաթունի, Թուլթախի, Այգեպայի մարտերը: 102*

*Հ. Բժշկեանը հետեւեալ կերպ է պատկերել 1915 թ. Յունիսի 22ին Վերին Բասէնի հովտում թուրքքրտական ուժերի դէմ տեղի ունեցած մարտը: «Համիտեան հեծեալների հինգ հարիւրական Գըլդաղ սարի ստորոտից յանկարծակի սլացան մեզ վրայ: Քառատրոփ արշաւով նրանք շրջանցեցին մեր թեւը: Դրութիւն աւելի բարդացաւ: Մէկ ելք կար՝ նահանջել: Բայց այստեղ ծխի եւ փոշու քուլաների մէջ մենք տեսանք Աւշարեանին: Մէկ շղթայից միւսը վազելով, նա հանգստացնում եւ քաջալերում էր զինուորներին: Եւ նրանք շարունակում էին կրակել, չնայած ծխի ու փոշու մէջ ոչինչ չէին տեսնում: Աւշարեանը տեղից տեղ վազելով հրամաններ էր արձակում, գոռում էր, յորդորում, ձեռքերով ցոյց էր տալիս թշնամուն հեծեալների կողմը եւ կրկնում. «Փախչում են, փախչում, սիրելիներս, խփեցէք նրանց: Դէ, մէկ էլ տեսէք, արդէն փախան: Աւշարեանը դիմեց ինձ, «Եթէ վէրքերդ թոյլ են տալիս, վերցրու աջ թեւի հրամանատարութիւնը...»: Ապա ձիու վրայից իջաւ ցած, մենք գրկախառնուեցինք: Ես ձախ թեւում կը լինեմ, իսկ դու աջ թեւում: Տես, Հայկ, զգոյշ եղիր...»: Անցաւ տասը րոպէ եւ մարտի դաշտը դժոխքի վերածուեցաւ: «Ուռա» ու «Ալլահ» բացականչութիւնները միաձուլւում էին հրանոթների որոտի հետ եւ խլանում արկերի պայթիւնների ահաւոր ղըրղիւնից: Վայնասուն, ղըրղիւն, փոշի, ծուխ. մեր կրակոցները հնձում էին թուրքերին, բայց նրանք գալիս ու գալիս էին, նետւում առաջ: Երկրորդ վաշտի վիճակը օրհասական էր դառնում: Մահը անողոքաբար հնձում էր մեր ընկերներին, բայց հրամայուած էր աննահանջ դիմադրել: Եւ մենք, հասկանալով այդ հրամանի ողջ անհրաժեշտութիւնն ու կարեւորութիւնը, շարունակում էինք դիմադրութիւնը»: 103*

*Հետաքրքրական է նաեւ Հ. Բժշկեանի կողմից մէկ ուրիշ մարտի նկարագրութիւնը. «500 քայլ, 400 քայլ, 300 քայլ բղաւում էի ես ամբողջ ձայնովս՝ տեսնելով թշնամու հետզհետէ մօտենալը: 2րդ վաշտի համազարկերը հետզհետէ նուազում էին, եւ դառնալով չորս կողմս ես սարսափով նկատեցի, որ զօրաշղթան շատ է նօսրացել, իսկ թուրքերն առանց ուշք դարձնելու իրենց տուած անհաշիւ զոհերին, գալիս էին ու գալիս: Ես յոյսս կորցրել էի բոլորովին: Վերջին անգամ հաւաքելով ուժերս, բղաւեցի, Դիր նշանացոյց 200 քայլ, անդադար կրակ, զա՛րկ»:*

*Հենց այդ վայրկեանին էր, երբ առաջապահ զօրաշղթայի առաջ մխացող ատրճանակը ձեռքին երեւաց Աւշարեանը:*

*- Ձեզ մատաղ քաջերս, մի վախեցէք, այստեղ եմ, առաջ քաջերս, առաջ ուռռա...*

*Չորրորդ հարիւրակը, ոգեւորուած իրենց հրամանտարի հերոսութեամբ, յաղթական ուռայով առաջ խոյացաւ դէպի թշնամին: Նրանց հետեւեց Ա. հարիւրակը, որը նմանապէս դիրքերից դուրս ցատկելով վազեց դէպի թշնամին: Այդ րոպէին 2րդ հարիւրակը եւս, թողնելով դիրքերը յարձակման դիմեց, իսկ 3րդ հարիւրակը չեշտակի համազարկերով սկսեց կրակի մէջ առնել թշնամուն, որը տեսնելով հակայարձակումն սկսեց դիրքեր փնտռել:*

*Մենք բոլորս էլ կատաղել էինք, գազանացել ինչպէս վագրը, եւ վայ վիրաւոր կամ կենդանի թշնամուն, որը ճանապարհին հանդիպում էր մեզ: Գթութեան ոչ մի նշոյլ: Թանկագին ընկերների կորուստն սպանել էր մեր կրծքում մեր խիղճն ու սիրտը:*

*Բայց թշնամիները չդիմացան, եւ երբ մենք մօտեցել էինք նրանց, ու մնացել էր միայն 100 քայլ, որպէսզի սուինամարտի դիմէինք կամ թէ ձեռքերով միմեանց խեղդէինք, նրանք փախան խայտառակ եւ ամօթալի նահանջով...»: 104*

*6րդ գնդի համար սարսափելի ծանր մարտեր տեղի ունեցան 1915 թ. Յունիսի 22ին: Շարեան գետի*

*Շար.ը էջ 17*

# ԴԷՊԻ ՀԵԹԱՆՈՍ ՈՒ ՔԻՐՍՏՈՆԵԱՅ ՏԱՃԱՐՆԵՐ

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Երեւանի Նոր Նորքի բնակելի թաղամասի պողոտաներով գնում ենք տաճարներ, խոնարհելու հայու արարման իմաստութեանը, աղօթելու ուժին, լոյսին, աղօթելու տիեզերական սիրոյ բարութեանը: Մայր ոստանի թիկունքի սարահարթում Նոր Նորքը, ինքը մի քաղաք իր բոլոր կառոյցներով՝ գործարաններ, շուկաներ, խանութներ, բարձրայարկ շէնքեր, ծառազարդ ճամբաներ, կանաչ բակերում որթատունկերից ժպտացող խաղող, քայլող մարդիկ, կեանքի հեւքի աղմուկ: Բնակելի շէնքերն են գրկել Ջրվէժ գիւղը, խեղճացած մնացել է մի կտոր այգիների մէջ: Մեր նախնիների հին բնակավայրերից է եղել Ջրվէժը, այն յիշատակւում է հինգերորդ դարից: Նրա մօտակայքի պեղումն երից բացուել է VI-VII-րդ դարերի եկեղեցի: Այդ բարձրադիր տեղանքում գետ չկայ որ Նրա բարձունքից ջուր «վէժ»էր ու բնակավայրը «Ջրվէժ» կոչուէր: Ընհակառակը պատմում էին որ սակաւ ջրի պատճառով բնակիչների միջեւ յաճախակի վէճեր են եղել եւ բնակավայրը կոչուել է Ջրվէճ՝ ջուրի վէճ:

Ինքնաշարժը բարձրանում է դէպի կանաչ բլուրները: Աջին երեւանցիների ամառանոցներն են, իւրաքանչիւրը ճարտարապետական սիրուն կառոյց, որոնց ճակատներին պտղատու ծառերը իրենց կանաչն էին փռել: Խնձորենիները թեւերնին էին խոնարհել հողին: Միշտ եւ միշտ, երբ բերքով քօղուած ծառ եմ տեսնում, հոգիս տրոփում է խինդից, հոգիս տենչում է գրկել իմ հայրենի գիւղի ծիրանենին, նռնենին, նորաշխարհենին, նարնջենին, ձիթենին, ժպիտով կարմրած մեր կալի հաստաբուն թզենին: Ծառ, նախնեաց պաշտամուն քը՝ որպէս մայրութեան ու պտղաբերութեան եւ նաեւ որպէս կենաց խորհրդանիշ փառաբանւում էր հէքիաթային գարնան տօների ժամանակ: Թուրքը իր սովորութեան համաձայն բերքը հաւաքելու համար արդեօք կտրել է նաեւ Լագգըս Սէրգիս ապու պապիս այդ ծառերը:

Մտնում ենք կանաչ բլուրի լանջեր, եղեւնիներն են բարձրացել արեւին հպելու, թփերն են կանաչ հոսում հողին: Կանաչ, արեւի լոյսն այնտեղ տիեզերական առեղծուածի մայրացման խորհուրդ է արարում, այնտեղից մեր կեանքի աղբիւր թթուածին է ծորում: Ընդարձակ է այս լանջերի կանաչը, այն ազգային զբօսայգի է, հայերի ճեմավայր է լինելու, որտեղ կանաչ սրտերով տղաներ ու աղջիկներ սիրոյ խրախճանք են հրավառելու: Ասում էին բլուրի գագաթին Գեղամայ ծովի փոքրիկ կրկնօրինակն է, խողովակներով ջուր է հոսում այնտեղ, որ միշտ ծփայ:

Բլուրի գագաթին էինք հասել, բացում եմ ինքնաշարժի պատուհանիկը, որ հեռու փռուած մայր ոստանի լոյսը սրտից յորդէր, հեռուից էլ է այն անուշ: Ճանապարհն է իջնում լանջն ի վար, աջին կամար է, ասում են Չարենցի կամար: Չարենց, Վարուժանի հետ հայոց բանաստեղծութեան ուժի պոռթկումի շանթի լոյսն է: Ինք ու շատ իմաստուն հայեր չգիտակցեցին այդ Նոր գաղափարախօսութեան յորձանքի աւերիչ ուժը: Ջինուորագրուեց այդ քանդումին՝ զէնքով, իր բանաստեղծական տիեզերական ուժի իմաստութեամբ: Ռուսաստանում հրեաների այդ աւերիչ արշաւը իր ծով հոգին ընկալել էր որպէս «Մարդկային Նոր այգեբաց՝ եւ այն տեսել որպէս «Նայիրեան երկրի վերածնման ճանապարհ»: Փլում էին երկիրը որ Նրա փլատակներում Նորը կառուցէին: Իր հանճարը ինչպիսի բանաստեղծական պոռթկումի պոէմներ է արարել՝ «Սոմա», սրբազան կրակի ու ազատութեան աստուածուհու մրրկային երգը, «Ամբոխները խելագարուած», ազատութեան մարտերի արշաւի հերոսական պատումի ասքը: Աստեղերից քաղած իր բանաստեղծութեան կրակը ուրիշի յեղափոխական պայթումին յորդեց: Իր «Ողջակիզուող կրակ», «Ամէնապոէմ», «Բոլորին, բոլորին, բոլորին», «Խմբապետ Շաւարշ», «Չարենց Նամէ» պոէմներով Նոր գաղափարախօսութեան մրրկահաւի երգն էր: Ինչու այդ կրակից չպայթեց հայոց հին աստուածների տիեզերական խորհուրդ խորինը, Սասնա Դաւիթը, արքաները հայոց, քաջերը հայոց, երեւի ժամն էր այդպէս, ափսոս:

Սակայն Չարենց երգեց նաեւ իր Հայաստան երկրի գովքը, հայկական քերթողութեան Արարատի սպիտակ ձիւնագագաթը՝ «Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում» հայոց իմաստութեան սիրերգը, իրեն, հայերի «Եարը, ցեղին սրտի ոգին, հայոց պաշտամունքը: Երեւի չիք նմանը համաշխարհային քերթողութիւնում: Բանաստեղի հոգու կտակն է այն՝ հայու ոգու սրբութիւն Արարատը, հայոց աշխարհը, Նարեկացու աղօթքի աղերսը: «Երկիր Նայիրի»ն, իր ժողովուրդի ողբերգական վիճակի ցաւի տառապանքն էր: Վարդանման այս տղայի հանճարի լոյսը վառեց նաեւ իր նախնիների ու նրանց արարումների գովերգման երգեր՝ Վահագն պոէմը, այն ուժի փառաբանման չեփոր է:

Կամարի դիմաց ընդարձակ հանդակ է՝ արգելոց, այրը այն հազուագիւտ, որտեղ աճում է մէկ հատիկանի «վայրի» ցորեն: Հայոց աշխարհն է մարդկանց հանապազօրեայ հացի հայրենիքը, չէ որ այնտեղ է Աստուած արարծ եղել դրախտը, չէ որ հացն էլ է Նրա պարգեւը մարդուն: 1930-ական թուականներին Ռուսաստանի գիւղատնտեսական հետազօտական հաստատութեան ղեկավար՝ ակադեմիկոս Տիմիրզաեւը այցելել էր այդտեղ եւ տեսնելով փոքրիկ գլխիկներով ցորենի հասկերը բացականչել «Այս հրաշք է»:

Գնում ենք Կոտայքի մարգպետութեան ճանապարհներով: Այս տեղանունը ցեղախօսական ծագում ունի, առնչուած մի ցեղի անուան հետ: Հայ Արշակունիների ժամանկ եղել է արքաների կալուած, իսկ յետագայում Պահլաւունիների, Զաքարեանների, Օրբելեանների, Խաղբակեանների տիրոյթները: Ողջաբերդն է փռուել ճանապարհի աջ ու ահեակ լանջերին: Պարտէզների կանաչից ծուխի սիւներ են բարձրանում, որոնք հայրենի լեռների յաւերժութիւնը գրկած սահում երկնի կապոյտին: Ընկուզենիները խոշոր, մէջքերնին ծռել էին իրենց իսկ արարած բերքի բեռան տակ: Ընկոյզները թօթափել էին իրենց շապիկները, հասունացել էին արդէն: Համով է ծառից քաղած ընկոյզը, համով է այն երբ քարով ջարդում ես, թաց միջուկն է սպիտակ ժպտում: Աշնանը այստեղ գալիս էինք ընկոյզ գնելու: Ճանապարհի եզրերին դարձեալ դոյլերով, արկղներով միրգ, սաթեայ տանձ, «Մալաչա տանձ, հիւթեղ, մեղրահամ, աշխարհ անցիր Գառնիի այս կողմերի նման տանձ չիք, երեւի այնտեղ յորդել է հայոց մեհենական ու Նոր հաւատքի լոյսի եւ հայ շինականների աղօթքի բոյրը:

**ԲԱՑՈՒԱԾ Է**

**Հիպնոսաբուժութեան կեդրոն**
**ղեկավարութեամբ՝ Փորձառու բժիշկ**
**Արթին Սաղրեանի**
**Փասատինայի մէջ**
**Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն**
**մինչեւ կ.ե. ժամը 3:00**
**Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E**
**Pasadena CA 91104**
**Հեռախօս (818) 434-8118**
**միայն ժամադրութեամբ**

**«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.**
**-Մարմնային քրոնիկ հիւանդութիւններ, արեան գերճնշում, շաքարախտ, ազմա, եւայլն:**
**- Մոլութիւններ - սիկարէթ, ալքոլ, թմրադեղեր, եւայլն:**
**- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անքնութիւն, եւայլն:**
**- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, եւայլն:**
**- Ուսումնական եւ սքորթային բարելաւում**



**Blue Cross of California takes the worry out of health care.**

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

**Call now and let me help take the worry out of your health care!**

**HARUT DER-TAVITIAN**
Authorized Independent Agent
1807 W GLENOAKS BLVD. #202
GLENDALE, CA 91201
(818) 502-3233
HARUT@EXCELHYE.COM
WWW.EXCELHYE.COM
CA Insurance
License #0B28270

BlueCross of California
The Power of Blue.SM

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

# ԱՐՄԻՆԷ ՂՈՒԼՈՅԵԱՆԻ ԵՐԿՈՒ ԵՐԱԺՇՏԱՀԱՏՈՐՆԵՐՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ԱՌԹԻՒ

*ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ԳԻՐԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ*

Սեպտեմբեր 22, 2007ին, Կոմիտասի Անուան Պետական Երաժշտանոցի հրատարակչական բաժնի տնօրէնուհիին՝ երաժշտագիտուհի Տիկ. Գոհար Շագոյեանի հրաւէրով տիկինս ու ես հիւրը եղանք ազգային երախտաւորեալ, անմահանուն դերասան՝ Մհեր Մկրտչեանի նոր թանգարանը այցելութեան գացող խումբին: Թանգարանը կը գտնուէր Գիւմրիի մէջ:

Ցիրուլի հանճարեղ դերասանի կեանքին ու գործունէութեան մասին հարուստ տեղեկութիւններու մատուցմամբ, ինչպէս նաեւ առինքնող ու հիացում պատճառող ներկայացուած նկարներով ու առարկաներով ապրեցանք ու վայելեցինք վարպետին յիշատակ մնացած իր արուեստն ու նշխարները:

Պատմական ու արժէքաւոր այս ճամբորդութեան ընթացքին, այլ հիւրերէն մին, Գերմանիոյ «Հայ Ակադեմիականների Միութիւն»ին նախագահը՝ Պրն. Ազատ Օրդուխանեան մակագրելով հետեւեալ երկու երաժշտահատորները, զորս իր միութեան պատուէրով նոր լոյս տեսած էին երաժշտանոցի հրատարակչատունէն, յանձնեց ինծի:

1. Արմինէ Ղուլոյեանի «Խոհեր Ցանձնած Դաշնամուրին» (Բիէսներ դաշնամուրի համար):

2. Արմինէ Ղուլոյեանի «Վէրք Հայաստանի» - 1988 (Նախերգանք սիմֆոնիք նուագախմբի համար):

Առաջինը ըլլալով դաշնակի համար գրուած մանրանուագներ եւ յատկապէս ալ պատանեկան տարիքի յատուկ մանկավարժական դիտումով, ի բաց առեալ վերջի երկու գործերէն, ուզեցի խօսիլ առաւելաբար այս գրքի մասին, քանի որ ան ուղղուած է նոր սերունդի դաշնակով հետաքրքրուողներուն: Այսինքն ժողովուրդի լայն զանգուածին:

Իսկ, երկրորդ գիրքը, համութային-նուագարանային հոգեցունց երկ մը՝ յօրինուած 1988 Դեկտեմբերի ահաւոր երկրաշարժի առիթով, թէեւ առաջին անգամ ըլլալով կը տպուի ու կը հրատարակուի, սակայն ան արդէն իսկ մեծ յաջողութիւններով կատարուած է հայրենիքի, Ֆրանսայի, Աւստրալիոյ եւ Գերմանիոյ մէջ:

Տրուած ըլլալով որ այս հատորը ուղղուած է ժողովուրդի շատ փոքր շրջանակի մը, խմբավարներու կամ ղեկավարներու, պիտի բաւարարուիմ միայն անոնց ուշադրութեանը յանձնելով այս հրատարակութիւնը, որպէսզի գայն ունենան իրենց կատարողական երկու ցանկին վրայ:




Դաշնակահար-կոմպոզիտոր Ա. Ղուլոյեանի դաշնակի գործերուն հատորը կու գայ լրացնելու այնքան պահանջ զգացուող, երիտասարդներու մակարդակին յատուկ, դաշնամուրային գրականութեան պակաս մը:

Ուրեմն, խօսելով Արմինէ Պուլոյեանի «Խոհեր Ցանձնած Դաշնամուրին» երաժշտահատորի մասին, կ'ուզեմ անմիջապէս յիշել գրքին ճաշակաւոր եւ հրապուրիչ կերպով պատրաստուած կողքը, ուր անուններու հետ զետեղուած է նաեւ հեղինակին՝ Ղուլոյեանի ժպտադէմ նկարը, ինչպէս նաեւ գրքին մաքուր եւ յստակ տպագրութիւնը եւ վերջապէս բարձրորակ թուղթի գործածութեամբ գրքին տրուած հարուստ երեւոյթը:

Գիրքը կը բաղկանայ 40 էջերէ, որոնցմէ 5ը տեղիքներ են, իսկ 5-38 էջերը կ'ընդգրկեն 18 մանրանուագներ:

Երկերու անուններէն կարելի է ներթափանցել հեղինակին ներաշխարհը. ինչպէս, «Դստերս...», «Որդուս...», «Մայրիկիս...» եւայլն: Ու այսպէս, եթէ առաջին երկին՝ «Դստերս՝ Մարիետա Զարվադատեանին»ին մէջ թախիծ կայ, երկրորդ երկին՝ «Որդուս՝ Ազատին»ին մէջ անհանգստութիւն եւ տագնապ կայ գործածութեամբ շեշտուած սինքոբներու:

3. «Մայրիկիս՝ Ռոզա Հայրապետեանին». Այս կտորին մէջ հեղինակը յաջողած է ժամանակի տրամաղիկ զգացողութիւնը դրսեւորել: Աջ ձեռքի ութեւակային (octavic) թռիչքներու եւ կիսաձայններու կիրառութեամբ առաւել եւս շեշտուած լարուածութեան հետեւող փոքրալար (minor) հնչողութիւնը ընդգծած է գործին թախծութիւնը:

4. «Մայրիկիս Երգը». Հանդիստ եւ խաղաղ D փոքրալարով սկսող գործը 11րդ հատածին կը փոխէ իր ձայնակայքը անցնելով D մեծալարին, սակայն շնորհիւ կիսաձայներու զուգակցումին կը ստանայ փոքրալարային երանգ: Եթէ ուզեմ քիչ մը աւելի խորացումով ներկայացնել այս մասը պիտի ըսեմ, Ղուլոյեան գեղեցիկ հնարամտութեամբ գործած է մեղեդիական կշռութային կաղապարներու (form) օգտագործում, ինչպէս, 2րդ հատածը առաջին հատուածին կշռութային նմանակն է: Իսկ 3-4րդ հատածներուն կշռութային պատկերը կը կրկնուի վեց անգամ, նոյնիսկ երբ D փոքրալարէն կ'անցնի D մեծալարային մասին: Յաջորդող բաժնին մէջ կը տեսնենք հեղինակին ճարտարութիւններէն այլ երես մը եւս, ուր ան աջ ձեռքին տալէ յետոյ ստեղնաշարի թաւ եւ սուր ոստումնային հնչիւններով ձեռք ձգուած այլ գունաւորում, 27րդ հատածէն մինչեւ աւարտական վեց հատածները 16րդական ստակկարումներուն կիրառութեամբ արագացնելով մեղեդային հոսքն ու անոր ընկերացող ձախ ձեռքի առ հասարակ սինքոբային կուռ դաշնեակներով անհանգստութեան վիճակ արտայայտելով կը հակադրուի սկիզբի հանդարտ եւ խաղաղ նկարագրին: Եւ վերջապէս գործը կ'աւարտի վերոյիշեալ մեղեդիի կշռութային կաղապարի G փոքրալարի երկարած տարբերակումովը:

5. «Փաթիլների Պար». Ղուլոյեան այս մանրապատկերը իրագործած է ութերորդականներու եւ քառորդներու կշռութային պատկերներով, առատ թռիչքներով եւ ձախ ձեռքին յատուկ սինքոբային անցքերով:

6. «Սատանի Ճուտը Սնդուկից». Նախքան նուագման անցնիլը, եթէ դաշնակահարը պահ մը պատկերացնէ նշուած խաղալիքը ուր բացուելով սնդուկին, տուփին կափարիչը յանկարծ ժպիտը դէմքին դուրս կը ցատկէ սատանային ձագուկը: Ոչ միայն շատ աւելի դիւրութեամբ պիտի կարենայ ըմբռնել միտ բանին եւ իւրացնել զայն, ոչ միայն հեշտութեամբ պիտի տեսնէ անոր գիտարուեստական պահանջները, այլ՝ պիտի կարողանայ կատարել ու մեկնաբանել երկը առաւել ճշդութեամբ:

Առատ մեղեդայնութեամբ յագեցած գործ է այս, որ կը սկսի տիրապետող ձայնէն ստակկատներով եւ շեշտուած հնչիւններով որոնք կը պատկերացնեն սատանային ճուտիկը, որմէ յետոյ մեղեդին կ'անցնի հիմնաձայնին: Նշման արժանի է նաեւ մանրախաղերու (trill) գործածութիւնը շեշտելու համար սատանայի ճուտին վառվռուն նկարագիրը:

7. «Ջինուորիկների Խաղ». Այս կտորը կը սկսի բնոյթով, որ 9րդ հատածին կը փոխուի անցնելով անոր յարաբերական C փոքրալարի մէջ տալով անոր նոր ու այլ երանգ, որմէ յետոյ վերադառնալով C մեծալարին կ'աւարտի գործը խրոխտ բնոյթով:

8. «Ուրախ Գորտը». Կը սկսի C մեծալարի մէջ 2/4 ասմանակով (meter) եւ գորտին ոստումները արտայայտող շեշտուած հնչիւնային թռիչքներով: Legato-ներու եւ ստակկատներու զուգակցութիւններով, թափանցիկ դաշնաւորումով, պարզ ու սեղմ միջոցներով հեղինակը հասած է գորտին բնոյթը նկարագրելու յաջող արտայայտչութեան:

9. «Մանկութեան Խաղալիք». փոքրալարային հնչողութեամբ այս երազկոտ կտորով Ղուլոյեան կը նկարագրէ իր մանկութեան յիշողութիւնները: Այստեղ օգտագործուած են «p» եւ «f» արտայայտութիւններ, որոնք երկին տուած են մեղեդային երանգաւորումներ:

10. «Աշնանային Խոհեր». D փոքրալարով հնչող գործը ունի ի տխրադէմ նկարագիր: Միջին, զարգացման մասը հնչեցնելով մեծալարային երանգի մէջ, հեղինակը կարողացած է կշռութային կառոյցի փոփոխումով ալ խորացնել գործին ուժականութիւնը:

11. «Ամառային Անձրեւ». Այս կտորը եւս մեծալար-փոքրալար նկարագիր ունի: Տեղ-տեղ մեղեդին աջ ձեռքէն անցնելով ձախ ձեռքին գործը ստացած է թանձր գոյն: 7-10րդ հատածներուն ընթացքի (tempo) փոփոխութիւնով, կիսաձայններով յագեցած մեղեդիին աստիճանական վերելքովը գործը կը յառաջանայ դէպի զալիք D մեծալարը, որով ալ կը վերջանայ ան:

12. «Կարօտի Երազ». Գեղեցիկ ճարտարութեամբ Ղուլոյեան յաջողած է C ostinato-ի կրկնութեամբ ապահովել երկի երազային վիճակն ու անոր վրայ աջ ձեռքով ընթացող մեղեդիին շատ զուսպ ձայնելեւէջներով արտայայտուած կարօտի զգացումը: Միջին մասին զարգացումը կատարուած է կշռութային պատկերի փոփոխութեամբ: Իսկ, վերջաւորութեան գործը արագանալով կ'աւարտի անսպասելի մեծալար դաշնակով, սակայն մեղմով (piano)

Շար.ը էջ 17



# ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 14-էն*

*ափերի մօտ ծաւալուած մարտի ժամանակ հերոսի մահով ընկաւ գնդի անձնազոհ հրամանատար Գրիգոր Աւշարեանը: Դրանից յետոյ գնդի հրամանատարի պաշտօնը ստանձնում է Հ. Բժշկեանը:*

*Շուտով գունդը ռուսական զօրքերի տրամադրութեան տակ է թողնում իր ազատագրած տարածքները եւ վերակազմաւորման ու հանգստի նպատակներով փոքրածաւալ նահանջ է իրականացնում: Կարճատեւ դադար առնելուց յետոյ գնդի մարտիկները նոր եռանդով վերսկսում են մարտական գործողութիւնները: Դիմելով յարձակման, գունդն ազատագրում է Դալեկ, Ալպեղա, Զաղ, Ճանպախ բնակավայրերը: Գնդի փայլուն վճռական գործողութիւնների շնորհիւ Ալաշկերտի հովտի մեծ մասը եւ Բասենի ամբողջ դաշտը ազատագրւում են Թուրքերից: Դրանից յետոյ որոշ ժամանակ ռազմաճակատում յաջողութիւնը ուղեկցում է Թուրքերին: Հակայարձակման դիմելով՝ Թուրքերը Նոյեմբերի 10ին գրաւում են Քիոփրի-Քեոյ բնակավայրը: Թրքական 11րդ բանակը, որը համալրումներ էր ստացել, կասեցնելով ռուսական զօրքերի եւ հայ կամաւորական զօրամասերի առաջխաղացումները, հասնում է յաջողութիւնների: Բայց այդ հանգամանքը ամենեւին էլ չի կոտրում հայկական եւ ռուսական ուժերի մարտական ոգին: Կովկասեան ճակատում ռուսական բանակի իրականացրած երկրորդ կարեւորագոյն ռազմական գործողութիւնը Էրզրումի օպերացիան էր: Զդիմանալով ռուսական բանակի՝ 1915 թ. Դեկտեմբերի 24ից մինչեւ 1916 թուականի Յունուարի 6ը տեւած հզօր հակայարձակմանը՝ Թրքական բանակը նահանջում է դէպի Էրզրում: Միայն այդ գործողութեան ընթացքում Թրքական բանակի սպանուածների թիւը հասնում է մօտաւորապէս 60 հազարի: 105 Ռուսական բանակի այս դժուարին եւ փառայեղ մարտական յաղթանակի մէջ իրենց ներդրումն ունեցան նաեւ 6րդ գնդի մարտիկները: Գունդը բանակի կազմում հետապնդելով նահանջող Թշնամուն 1916 թ. Փետրուար-Մարտ ամիսներին դուրս է մղում Էրզրումի շրջակայքում գտնուող դիրքերից ու «Կարսի դուռ» կոչուած վայրից ու յաղթականօրէն մտնում Էրզրում: Հ. Բժշկեանը հետեւեալ կերպ է ներկայացրել այդ պատմական իրադարձութիւնը. «Ռուսական զօրքը, որի հետ նաեւ մեր անձնազոհ կամաւորական խմբերը, գերզօրքը, որի հետ նաեւ մեր անձնազոհ կամաւորական խմբերը, գերմարդկային ճիգեր թափերով, մի ձեռքով կոփելով, միւսով ճանապարհ շինելով, հարիւրաւոր թնդանօթներ իրենց ուսերի վրայ ձիւնապատ լեռները բարձրացնելով, միմեանց հետեւից, բուք ու բորանի մէջ գրաւեցին այնպիսի ամրութիւններ, ինչպիսիք են Դեւեպոյունի բարձրունքները, Փալան-Թոքանի ամրոցները եւ Կարինի անառիկ բերդը: Հեշտ է այս մասին միայն ասել»: 106*

*Ոգեւորուած Էրզրումի ազատագրումով գունդը շարունակում է իր վստահ գործողութիւնները: Գնդի յաջորդ փորձութիւնը Մամախաթունի մօտ տեղի ունեցած մարտերն էին: Դրանից առաջ մարտի ժամանակ երրորդ անգամ վիրաւորուելով, Հ. Բժշկեանը բուժման համար հիւանդանոց է տեղափոխւում եւ գնդի հրամանատարութիւնը ստանձնում է Պանդուխտը:*

*Հայկական կամաւորական գնդերի անձնակազմերի մասին ամփոփ թուեր չկան: Բերւում են տարբեր թուեր: Հայոց ազգային բիւրոյի՝ 1914 թ. Դեկտեմբերի 28ի նիստում խնդիր դրուեց կամաւորների թիւը հասցնել 6000 հոգու: 107: Փոխարքայ Վորոնցով-Դաշկովին, 1915 թ. Հոկտեմբերին ուղղուած զեկուցագրում Մեսրոպ Արքեպիսկոպոսը, Ս. Յարութիւնեանը, Ա. Խատիսեանը յայտնում էին, որ կազմակերպուած է 6 գունդ՝ 5000 հոգանոց անձնակազմով: 108: Ինչպէս 6րդ գունդը, այնպէս էլ բոլոր կամաւորական գնդերը մեծ ներդրում ունեցան պատերազմի առաջին շրջանում ռուսական բանակի տարած յաղթանակների մէջ, մեծ ծաւալի աշխատանք կատարեցին կոտորածներից մազապուրծ եղած հայերի կեանքը փրկելու, օճախները ոտքի կանգնեցնելու, ազատագրուած տարածքներում բնականոն կեանքը վերականգնելու համար:*

*Գեներալ Օգանովսկու գլխաւորած 4րդ բանակային կորպուսի շտապին առընթեր Ռուսաստանի պետական դումայի պատգամաւոր Սիրական Տիգրանեանի նախագահութեամբ հիմնւում է Թուրքերից ազատագրուած Ալաշկերտ-Բայազետի շրջանի հայկական վարչական մարմին: 109 Վանի ազատագրումից յետոյ գեներալ Նիկոլաեւի հրամանով ռուսական ղեկավարութիւնը Արամ Մանուկեանին նշանակում է Վանի նահանգապետ:*

*Ռուս բարձրաստիճան զինուորականները ազատագրուած շրջաններում բնակչութեան վիճակը տանելի դարձնելու նպատակով աջակցում էին դրանցում ձեւաւորուած հայկական կոմիտէների գործունէութեանը: Դա պատահական չէր, քանի որ կամաւորականների խիզախութիւնն ու անձնազոհութիւնը արժանացել էր իշխանութիւնների բարձր գնահատականին: Հայ կամաւորական 2րդ, 3րդ, 4րդ գնդերի բազմաթիւ մարտիկներ պարգեւատրուել էին Գէորգիեւեան խաչի 2րդ եւ 4րդ աստիճանի շքանշաններով: 1914 թ. Հոկտեմբերի 23ից մինչեւ 1916 թ. Յունուարի 1ը հայկական 2րդ կամաւորական գնդի 138 կամաւորներ պարգեւատրուեցին մետալներով, իսկ 76 հոգի ստացան Գէորգիեւեան խաչի շքանշաններ: 110:*

*Կամաւորների նուիրուածութիւնն ու խիզախութիւնը ոչ միշտ էր ստանում արժանի գնահատական: Որոշ ռուս իշխանաւորների մօտ բացասական վերաբերմունք էր ձեւաւորուել կամաւորական շարժման նկատմամբ: Գոյութիւն չունեցող մեղադրանքներ էին յօրինւում, որոնցով կասկածի տակ էին դրւում ռուսական պետութեան նկատմամբ հայերի նուիրուածութիւնը: 111 Կառավարական շրջաններում մտավախութիւն կար, որ հայ կամաւորական խմբերը, դառնալով բազմամարդ եւ ձեռք բերելով մարտական հարուստ փորձ, կարող էին դուրս գալ ռուսական պետութեան վերահսկողութիւնից ու հանդիսանալ հայոց ազգային բանակի հիմք: 1915 թ. վերջերին նոր ռեզերվների հաշուին համալրուեց կովկասեան բանակը: Դա հնարաւորութիւն տուեց լուծարել կամաւորական Գնդերը: 1916 թ. Մարտին ռուսական հրամանատարութիւնը որոշում ընդունեց հայ կամաւորական գնդերի լուծարման մասին: Կամաւորական միաւորումների փոխարէն ռուսական հրամանտարութիւնը մինչեւ նոյն տարուայ Յունիսը բանակի կազմում ձեւաւորեց հայ սպաների հրամանտարութեամբ գործող 6 կանոնաւոր հայկական գումարտակներ: 112*

*Հնչակեան կուսակցութիւնը ձգտում էր կամաւորական շարժումը զերծ պահել նեղ կուսակցական քարոզչութիւնից, գտնելով, որ այն պէտք է ունենայ վերկուսակցական, համազգային բնոյթ:*

**(Վերջ)**

**********************

*86. «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան», 1887-1963, Բ. հատոր, Պէյրութ, 1963, էջ 38:*

*87. Ճէրճէեան, Ե., Պանդուխտ, Պէյրութ, 1999, էջ 13-14:*

*88. ՀԱԱ, Ֆ. 408, ց. 1, գ. 32, թ. 1-2:*

*89. Կարապետեան Մ., Հայկական կամաւորական խմբերը եւ ազգային գումարտակները կովկասեան ռազմաճակատում (1914-1917 թթ.,), Երեւան, 1999, էջ 40:*

*90. «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթ, Փրաւիտէնս (ԱՄՆ), 2ը Մարտի 1915 թ.:*

*91. «Ս. Դ. Հնչակեան Ընկերներու Դատաստանին», Պոսթըն, 1920, էջ 242:*

*92. ՀԱԱ, ֆ. 57, ց. 5 գ. 104, թ. 1-2:*

*93. ՀԱԱ, ֆ. 57, ց. 5 գ. 104, թ. 1-2:*

*94. Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1963, Ա. Հատոր, Պէյրութ, 1963, էջ 472:*

*95. ՀԱԱ, ֆ. 57, ց. 5 գ. 104, թ. 126-27:*

*96. Ճէրէճեան Ե., Պանդուխտ, Պէյրութ, 1999 էջ 12:*

*97. Ցետագայում պարզւում է որ Ս. Վրացեանի վերոնշեալ նամակը ընկնում է ցարական գաղտնի ծառայութեան ձեռքը: Ներկայումս այն պահպանւում է Մոսկուայի Կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիւում: Ֆ. 2100, ց. 1, գ. 646, թ. 11-13:*

*98. Հայկական հարց, հանրագիտարան, Երեւան, 1996, էջ 46:*

*99. Հայկական սովետական հանրագիտարան, h. 2, Երեւան, 1976, էջ 675:*

*100. Հայկական Հարց, հանրագիտարան, Երեւան 1996, էջ 84:*

*101. ՀԱԱ, ֆ. 4045, ց71, գ. 179, թ. 99-100:*

*102. Ճէրէճեան Ե., Պանդուխտ, Պէյրութ, 1999, 22-23:*

*103. Հայրապետեան Հ., Լեգենդար Գայ, Երեւան, 1977, էջ 26-27:*

*104. Ցուշարձան Նուիրուած Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Քառասնամեակին, Փարիզ, 1930, էջ 277:դիդի*

# ԱՐՄԻՆԷ ՂՈՒԼՈՅԵԱՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*տալով քունէ արթննալու զգացողութիւն:*

*13. «Պարի Հրաւէր». Նիւթը (theme) զուգակցուելով աջ եւ ձախ ձեռքերուն գործը ստացած է պարային, խաղային բնոյթ: Այս գործի մեղեդիին մէջ զգալի են հայկական հնչողութիւններ: Գործը հետաքրքրական դարձած է իրարու հակադրուող ուժեղի (forte) եւ մեղմի (piano) գործածութիւններով:*

*14. «Ներիր». Այս երկը ունի եռամաս կառուցուածք, սակայն ոչ յարաբերական մեծ տարբերութեամբ: Ունի քնարական յագեցողութիւն եւ կառուցային պարզութիւն:*

*15. «Պարահանդէսային Ջզեստ». Գրուած է վալսի 3/4 նմանակով: Ունի պարային բնոյթ: զգալի է տարբեր գործիքներու հնչեղութիւններ, յատկապէս քնարի: Ընդհանուր իր ոճին մէջ նախորդներուն մնան ունի սկիզբը, զարգացման մաս եւ վերադարձ սկիզբի:*

*16. «Արփա-Սեւան». Բաղդատաբար նախորդներուն գեղարուեստականօրէն աւելի բարդ երկ է այս: Ունի ձայնակայքային փոփոխութիւններ: Շնորհիւ յագեցած կիսաձայներու ու առաւելաբար 16-րդական եւ 32-րդական ձայնահնչիւններուն յստակ կերպով արտայայտուած է ջուրին վազքը:*

*17. «Ապրել եմ Ուզում». Վերջին այս գործը ունի հայաբոյր հնչեղութիւն: Գործածուած են հայկականութեան յատուկ triol-ներ: Գործին տրամադիկ զարգացման մէջ կարելի է զգալ հայրենիքին կանչը: Երկի մեղմ ու հանդարտ աւարտումով կը զգացուի հեղինակին հայրենաբաղցութեան ապրումը:*

*Ահա, թէ Արմինէ Ղուլոյեան ինչ կը հրամցնէ նոր սերունդի երիտասարդ դաշնակահարներուն իր նոր հրատարակած «Խոհեր Ցանձնած Դաշնամուրին» երաժշտահատորով:*

*Շնորհաւորութիւններ դաշնակահար-կոմպոզիտոր Տիկ. Արմինէ Ղուլոյեանին, երաժշտահատորը հրատարակութեան յանձնող Գերմանիոյ «Հայ Ակադեմականների Միութիւն»ի նախագահ Պրն. Ազատ Օրդուխանեանին եւ «Կոմիտասի Անուան Պետական Երաժշտանոց»ի հրատարակչատան տնօրէնուհի՝ երաժշտագիտուհի Տիկ. Գոհար Շազոյեանին:*

*Վարձքերնիդ կատար:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՄՐՑԱՇՐՋԱՆ-2007-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ 10 ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ



*2007թ. Հայաստանի լաւագոյն մարզիկ է ճանաչուել ծանրամարտիկ Գէորգ Դաւթեանը: Մարզական լրագրողների հայկական ֆեդերացիայի անցկացման հարցման արդիւնքներով՝ Գէորգեանը 460 հնարաւորից ստացել է 454 միաւոր: Այս տարի գիւմրեցի 24-ամեայ մարզիկը դարձել էր Եւրոպայի ախոյեան եւ աշխարհի փոխախոյեան, ուստի կասկած չկար, որ հէնց նա է լաւագոյնը ճանաչուելու:*

*328 միաւորով երկրորդ տեղում է յայտնուել ծանրորդուհի Հռիփսիմէ Խուրշուդեանը, որը Եւրոպայի 2007թ. ախոյեան է, ինչպէս նաեւ երիտասարդական առաջնութեան յաղթող: Լաւագոյն եռեակը 281 միաւորով եզրափակել է յունա-հռոմէական ոճի ըմբիշ Եուրի Պատրիկեեւը: Նա միակն էր հայ ըմբիշներին, որը կարողացաւ Պաքւում կայացած աշխարհի առաջնութիւնում մետալի արժանանալ: Ծանրամարտի Եւրոպայի ախոյեան Մելինէ Դալուզեանը 253 միաւորով գրաւեց 4-րդ հորիզոնականը:*

*Լաւագոյն տասնեակում տեղ են զբաղեցրել նաեւ գիւմրեցի ձիւդոյիստ, Եւրոպայի փոխախոյեան, երեւանեան միջազգային մրցաշարի 2-րդ մրցանակակիր, աշխարհի գաւաթի խաղարկութեան 2 փուլի յաղթող, օլիմպիական ուղեգիր ձեռք բերած Յովհաննէս Դաւթեանը (240), Ֆրանսայում բնակվող առագաստանաւորդուհի, աշխարհի եւ Եւրոպայի փոխախոյեանուհի Սառա Հեբերտ Ջոնսոնը (187), երեւանցի շախմատիստուհի, Եւրոպայի թիմային եւ ակումբային առաջնութիւնների պրոնզէ մետալակիր Էլինա Դանիէլեանը (129), գիւմրեցի ծանրորդ, Եւրոպայի փոխախոյեան Արա Խաչատրեանը (118), երեւանցի գրոսմայստեր, մի շարք մրցաշարերի յաղթող Լեւոն Արոնեանը (114), եւ գիւմրեցի ծանրորդ, Եւրոպայի փոխախոյեան Տիգրան Մարտիրոսեանը (96):*

*2007թ. Հայաստանի լաւագոյն թիմ է ճանաչուել շախմատի տղամարդականց Հայաստանի հաւաքականը, որը Եւրոպայի առաջնութիւնում գրաւեց 2-րդ հորիզոնականը: Կանանց շախմատի Հայաստանի հաւաքականը զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը, իսկ ահա Ծանրամարտի Եւրոպայի առաջնութիւնում առաջին տեղ գրաւած հաւաքականը ընդամէնը 3-րդն է: Քուէարկութեանը մասնակցել են 46 լրագրող:*

### 2007 ՏԱՐՈՒԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՍՊԵՏՆԵՐԸ

| | |
|---|---|
| 1. ԳԷՈՐԳ ԴԱՒԹԵԱՆ (ծանրամարտ) | 454 միաւոր |
| 2. ՀՌԻՓՍԻՄԷ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ (ծանրամարտ) | 328 |
| 3. ԵՈՒՐԻ ՊԱՏՐԻԿԵԵՎ (յունա-հռոմէական ըմբշամարտ) | 281 |
| 4. ՄԵԼԻՆԷ ԴԱԼՈՒԶԵԱՆ (ծանրամարտ) | 253 |
| 5. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՒԹԵԱՆ (ձիւդօ) | 240 |
| 6. ՍԱՌԱ ՀԵԲԵՐՏ ՋՈՆՍՈՆ (առագաստանաւային սպորտ) | 187 |
| 7. ԷԼԻՆԱ ԴԱՆԻԷԼԵԱՆ (շախմատ) | 129 |
| 8. ԱՐԱ ԽԱՉԱՏՐԵԱՆ (ծանրամարտ) | 118 |
| 9. ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆ (շախմատ) | 114 |
| 10. ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ (ծանրամարտ) | 96 |

## Ա. ԱՒԵՏԵԱՆԸ ՄՈՍԿՈՎԵԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՊՐՈՆԶԷ ՄԵՏԱԼԱԿԻՐ

*Երեւանցի մարզիկ Արտյոմ Աւետեանը նուաճել է պրոնզէ մետալ հենացատկ մրցաձեւում Մոսկուայում ընթացող օլիմպիական խաղերի եւ աշխարհի ախոյեան Միխայիլ Վորոնինի անուան սպորտային մարմնամարզութեան գաւաթի միջազգային մրցաշարում: Այս մրցաշարին մասնակցում են 22 երկրների 50 մարզիկներ:*

*Սա Հայաստանի մարզիկների 2-րդ պարգեւն է այս մրցաշարում: Նժոյգ վարժութիւնում պրոնզէ մետալ էր նուաճել Յարութիւն Մերդինեանը:*

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱՋ ՆԱԶԱՐ
ՌԱԴԻՈ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

## ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 17-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Ուէսթ Համ - Էվըրթըն | 0-2 | Տերպի Քաունթի - Միտըլզպորօ | 0-1 |
| Ֆուլհամ - Նիւքէսըլ | 0-1 | Փորթսմութ - Թոթենհամ | 0-1 |
| Ուիկան Աթլ. - Պլէքպըրն | 5-3 | Պըրմինկհէմ - Ռիտինկ | 1-1 |
| Արսենալ - Չելսի | 1-0 | Լիվըրփուլ - Մանչեսթըր Եուն. | 0-1 |
| Սանտըրլէնտ - Ասթոն Վիլլա | 1-1 | Մանչեսթըր Ս. - Պոլթըն | 4-2 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Արսենալ | 17 | 12 | 4 | 1 | 34-14 | 40 |
| Մանչեսթըր Եուն. | 17 | 12 | 3 | 2 | 30-8 | 39 |
| Չելսի | 17 | 10 | 4 | 3 | 24-10 | 34 |
| Մանչեսթըր Սիթի | 17 | 10 | 3 | 4 | 24-18 | 33 |
| Լիվըրփուլ | 16 | 8 | 6 | 2 | 27-10 | 30 |
| Էվըրթըն | 17 | 9 | 3 | 5 | 29-19 | 30 |
| Փորթսմութ | 17 | 8 | 6 | 3 | 28-15 | 30 |

## ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան 17-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Շալքէ-04 - Նիւրեմպըրկ | 2-1 | Արմ. Պիլըֆէլտ - Շթութկարթ | 2-0 |
| Հերթա Պերլին - Պ. Միւնիխ | 0-0 | Վոլսպուրկ - Տորթմունտ | 4-0 |
| Վարտըր Պրէյմըն - Պ. Լիվըրքուզըն | 5-2 | Քոթպուս - Հանովըր-96 | 5-1 |
| Ռոսթոք - ՎՖԼ Պոխում | 2-0 | Քարլսրուհէ - Համպուրկ | 1-1 |
| Տուիզպուրկ - Այնթ. Ֆրանքֆորթ | 0-1 | | |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պայերն Միւնիխ | 17 | 10 | 6 | 1 | 31-8 | 36 |
| Վարտըր Պրէյմըն | 17 | 11 | 3 | 3 | 42-24 | 36 |
| Համպուրկ | 17 | 9 | 5 | 3 | 24-13 | 32 |
| Պ. Լիվըրքուզըն | 17 | 9 | 3 | 5 | 32-16 | 30 |
| Շալքէ-04 | 17 | 7 | 8 | 2 | 26-17 | 29 |
| Քարլսրուհէ | 17 | 8 | 4 | 5 | 19-21 | 28 |
| Հանովըր-96 | 17 | 8 | 3 | 6 | 27-28 | 27 |

## ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Էմփոլի - Ճենովա | 1-1 | Լացիո - Եուվենթուս | 2-3 |
| Սիենա - Նափոլի | 1-1 | Աթալանթա - Փալերմօ | 1-3 |
| Սամտորիա - Ֆիորենթինա | 2-2 | Քալիարի - Ինթէր Միլան | 0-2 |
| Թորինօ - Ա. Էս. Ռոմա | 0-0 | Քաթանիա - Ուտինեզէ | 2-0 |
| Փարմա - Ռեճինա | 3-0 | Ա. Սէ. Միլան - Լիվորնօ | |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ինթէր Միլան | 16 | 12 | 4 | 0 | 35-8 | 40 |
| Ա. Էս. Ռոմա | 16 | 9 | 6 | 1 | 31-18 | 33 |
| Եուվենթուս | 16 | 9 | 5 | 2 | 33-15 | 32 |
| Ուտինեզէ | 16 | 8 | 4 | 4 | 20-19 | 28 |
| Ֆիորենթինա | 16 | 6 | 7 | 3 | 21-15 | 25 |
| Փալերմօ | 16 | 6 | 6 | 4 | 23-25 | 24 |
| Նափոլի | 16 | 6 | 4 | 6 | 24-21 | 22 |

## ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Վալենսիա - Պարսելոնա | 0-3 | Մայորքա - Աթլեթ. Պիլպաօ | 0-0 |
| Տեփ. Քորունա - Սարակոսա | 1-1 | Ռէալ Մուրսիա - Ռասինկ | 2-1 |
| Ռէալ Մատրիտ - Օսասունա | 2-0 | Ռէալ Վայատոլիտ - Սեւիլլա | 0-0 |
| Էսփանիոլ - Լեվանթէ | 1-0 | Կեթաֆէ - Վիլզարէալ | 1-3 |
| Հուէլվա - Աթլեթ. Մատրիտ | 0-0 | Ռէալ Պաթիս - Ալմերիա | 3-1 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ռէալ Մատրիտ | 16 | 12 | 2 | 2 | 36-14 | 38 |
| Պարսելոնա | 16 | 10 | 4 | 2 | 32-12 | 34 |
| Վիլզարէալ | 16 | 10 | 1 | 5 | 29-23 | 31 |
| Աթլեթ. Մատրիտ | 16 | 9 | 4 | 3 | 30-17 | 31 |
| Էսփանիոլ | 16 | 8 | 6 | 2 | 24-18 | 30 |
| Ռասինկ | 16 | 7 | 5 | 4 | 16-15 | 26 |
| Վալենսիա | 16 | 8 | 1 | 7 | 20-26 | 25 |

## ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան 18-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

| | | | |
|---|---|---|---|
| Մոնաքօ - Լանս | 2-0 | Պորտօ - Մարսէյլ | 2-2 |
| Փարիզ Սէն Ժերմէն - Թուլուզ | 1-2 | Սթրասպուրկ - Նանսի | 0-0 |
| Լը Մանս - Լօրիան | 0-0 | Վալանսիէ - Օքսէռ | 3-0 |
| Մէթց - Սոշօ | 1-2 | Րընէ - Քան | 1-2 |
| Լիյլ - Սէնթ Էթիէն | 3-0 | Լիոն - Նիս | 0-0 |

Առաջատար խումբերու դասաւորումը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Լիոն | 18 | 12 | 2 | 4 | 37-15 | 38 |
| Նանսի | 18 | 9 | 7 | 2 | 24-10 | 34 |
| Պորտօ | 18 | 8 | 6 | 4 | 26-23 | 30 |
| Լը Մանս | 18 | 9 | 3 | 6 | 26-25 | 30 |
| Վալանսիէ | 18 | 8 | 5 | 5 | 23-16 | 29 |
| Քան | 18 | 8 | 4 | 6 | 21-19 | 28 |
| Նիս | 18 | 6 | 8 | 4 | 18-14 | 26 |

# Ո՞Վ Է ԾԱԽԵԼ ՂԱՐԱԲԱՂՆ ՈՒ ԵՐ՞Բ

*Շարունակուած էջ 5-էն*

*2003-ի ընտրութիւնների յաջող աւարտից յետոյ Քոչարեանի իշխանաւարութեան երկրորդ ժամկէտը հիմնականում նուիրուեց ներքին տնտեսական խնդիրներին, կառուցապատումներին ու կարմիր ժապաւէնների կտորածին: Ղարաբաղի հարցի կարգաւորման, աւելի ճիշդ՝ հարցը հանրութեանը ներկայացնելու հիմնական ծանրութիւնն ընկաւ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանի փխրուն ուսերին:*

*Քի-Ուեսթեան վճռական հանդիպումից յետոյ արուած համարեա բոլոր յայտարարութիւնները սկսեցին կամաց-կամաց հաստատել Ղարաբաղի կարգավիճակի մասին ընդունուած նախնական համաձայնութեան վարկածը: Արդէն ընտրութիւններից յետոյ, 2003-ի Նոյեմբերին ամերիկացի համանախագահ Ռ. Փերինան յայտարարեց, որ կարգաւորումը տեսնում է բացառապէս Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան շրջանակներում, փաստօրէն անելով կանխորոշող նախազգուշացում: Օսկանեանն իր հերթական մամուլի ասուլիսում Փերինայի յայտարարութեան մասին յիշեցմանը բառացիօրէն պատասխանեց՝ «Ես չեմ լսել, տեղեակ չեմ – խիստ կասկածում եմ, որ պարոն Փերինան նման բան յայտարարած լինի»: Միեւնոյն ժամանակ բոլորին նախազգուշացրեց, որ Մինսկի խմբի համանախագահները կայցելեն տարածաշրջան եւ «Ըստ նրանց (համանախագահների) յայտարարութիւնների, իրենց առաջ երկու հիմնական խնդիրներ են դրել. առաջինն այն է, որ կողմերի միջեւ կոնտակտները վերսկսուեն եւ նախագահների մակարդակով, եւ նաեւ այլ մակարդակներով, առանց ճշդելու թէ «այլ»-ի տակ ի՞նչ ի նկատի ունեն: Միգուցե խօսքը գնում է նախագահների յատուկ ներկայացուցիչների մասին: Իսկ երկրորդն այն է, որ նոր մօտեցումներ եւ գաղափարներ առաջարկեն կողմերին, որոնք կը լրացնեն առկայ առաջարկութիւնները եւ որով նաեւ հիմք կ'ստեղծուի բանակցութիւնների շարունակութեան համար»,-յայտարարեց Օսկանեանը: Նրա յայտարարութիւնից քաղաքագէտներն ու լրագրողները եզրակացրին, որ նախնական պայմանաւորուածութիւններն արդէն հաստատ են, մնում է լրացնել եղածն ու անցնել առաջ: Յաջորդիւ ծաւալուեց տեղեկատուական ու յատկապէս իրաւական կատաղի պատերազմ, որում հայկական կողմը կրեց խայտառակ պարտութիւն: Մինչ պաշտօնական Երեւանը իւրաքանչիւր հանդիպումից յետոյ սահմանափակւում էր «Քննարկուել են խնդրի խաղաղ կարգաւորմանն առնչուող հարցեր»,- ոչինչ չասող ձեւակերպումով, պաշտօնական Պաքուն հանդէս էր գալիս Ղարաբաղն իրենց յանձնելու կոնկրետ պահանջով ու միջազգային ազդեցիկ կառոյցներում փաստացի արձանագրում Հայաստանի ագրեսիան: Ձեւակերպում, որը վերածւում էր իրաւական տերմինի ու ընկնում բոլոր զեկոյցների, արձանագրութիւնների եւ բանաձեւերի հիմքում: Ղարաբաղի ճակատագիրը վերջնականապէս որոշակիացնելու խնդիրը նորից սրուեց նախընտրական 2007-ին եւ ակտիւացրեց յատկապէս Մինսկի խմբի համանախագահներին: Ինչպէս եւ իրենից անկախ կանխագուշակել էր Օսկանեանը, այս անգամ փորձեցին հարցը լծուել «այլ մակարդակներով»: ԵԱՀԿ-ի միջոցառումներից մէկի հովանաւորութեամբ Մադրիդում կազմակերպուեց չոու: Սա հէնց այն «այլ մակարդակն» էր, որին մասնակցում էին Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտօնեաներ եւ որոնց հանդիսաւոր ներկայութեամբ ՀՀ եւ Ատրպէյճանի ԱԳ նախարարներին յանձնեցին ԼՂ հակամարտութեան կարգաւորման սկզբունքների ամփոփիչ փաստաթուղթը: Ի՞նչ էր այն պարունակում: Կարելի է միայն ենթադրել: «Ազատութիւն» ռ/կ-ին տուած հարցազրոյցում ՀՀ ԱԳ նախարարը յստակ ասաց, որ փաստաթղթում նորութիւն չկայ՝ «Նոյն փաստաթուղթն է, ինչ երկու տարի է մօտաւորապէս արդէն սեղանի վրայ է»,- ասել էր Օսկանեանը:*

*Քոչարեանի պաշտօնավարութեան ժամկէտի աւարտին խուճապ նկատուեց (թէպէտ դիւանագիտական հարթութիւնում այս բառն ընդհանրապէս անընդունելի է համարւում), իսկ յայտարարութիւններն աւելի խստացան: 2007թ. Յուլիսի 2-ին կայացած ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանի եւ Եւրոպայի խորհրդի ԱԳ նախարարների կոմիտէի մոնիտորինգի Ագոյի յանձնախմբի ղեկավար Պեր Սիոգրենի համատեղ ասուլիսում վերջինս յայտարարեց, որ ԼՂ-ն չի կարող լինել բանակցային կողմ, որովհետեւ նրա կարգավիճակը պէտք է դիտարկել Մինսկի խմբի բանակցային գործընթացի ֆորմատում: «Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի ապագայ կարգավիճակի հետ կապուած բանակցութիւններին, մենք յղում ենք կատարում ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացին եւ այն բանակցութիւններին, որոնք վարում են համանախագահները՝ Ռուսաստան, Ֆրանսիա, ԱՄՆ, ներառեալ երկու կողմերի՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի, որոնք վերջերս հանդիպել են Սանկտ Պետերբուրգում: Սա մի գործընթաց է, որը վերաբերում է այդ գործընթացի քաղաքական լուծմանը»,-ասել է Սիոգրենը: Այս «քաղաքական գործընթացը», որն անմիջապէս կապուած է Քոչարեանի պաշտօնավարման ժամկէտների հետ եւ ենթադրում է այդ ժամկէտում վաւերացնել Ղարաբաղի կարգավիճակը հաստատող փաստաթուղթը, Մինսկի խմբի համանախագահներին ստիպեց դիմել մաքոքային քաղաքականութեանը: «Ճիշդ է, սա հերթական այցելութիւն էր, բայց նաեւ ինչ-որ իմաստով նոր ոճ է կարծէք մտնում, դա մաքոքային դիւանագիտութիւն է: Հիմնական պատճառները, կարծում եմ, երկուսն են. մէկը, որ մինչեւ նախագահական ընտրութիւններ շատ ժամանակ չի մնացել, երկրորդ, որ մինչեւ նախագահական ընտրութիւններ բազմակողմ հնարաւորութիւն չի ընձեռուելու նախագահներին հանդիպելու համար: Եւ այլ տարբերակ կարծէք թէ չի մնում, քան համանախագահների առաւել ակտիւ լինելը տարածաշրջանում, մաքոքային դիւանագիտութեան միջոցով կողմերի դիրքորոշումների մօտեցնելը եւ մինչեւ նախագահական ընտրութիւն ինչ-որ դրական արդիւնքների հասնելը»,- 2007թ Հոկտեմբերի 25-ին հրաւիրած մամուլի ասուլիսում յայտարարեց ՀՀ արտաքին գործերի նախարարը: Եւ վերջապէս՝ բոլորովին վերջերս, երբ Կոսովոն նախադէպ համարելու յոյսով միամիտները հետեւում էին այդ երկրամասի ճակատագրին, 2007թ Նոյեմբերի 5-ին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանեանի եւ ԵՄ Գլխաւոր քարտուղար Թերի Դեւիսի համատեղ ասուլիսում վերջինս կտրականապէս բացառեց այդ յոյսը: «Շատ մեծ տարբերութիւն կայ Կոսովոյի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ, Կոսովոյում չկայ ռեժիմ, այնտեղ ՄԱԿ-ն է, ՄԱԿ-ի առաքելութիւնն է Կոսովոյում, ես էլ եմ տեսել, որ այնտեղ կան Եւրոպական Միութեան զինուորներ, ովքեր ամէն ինչ անում են՝ երաշխաւորելու անվտանգութիւնը Կոսովոյում, այնտեղ ինչ-որ անջատողական ռեժիմ չկայ»,-յայտարարեց Դեւիսն ու վերջնականապէս արձանագրեց ՀՀ արտաքին քաղաքականութեան անփառունակ պարտութիւնը: Այսինքն՝ եթէ Ղարաբաղի ազատագրական պայքարի յաղթանակից յետոյ Հայաստանը ոչ միայն ագրեսոր չհամարուեց, այլ միջազգային ասպարէզում ունէր բարձր վարկանիշ, այսօր նա, որպէս ԼՂ միակ ներկայացուցիչ ու բանակցային կողմ, պարտաւոր է հրաժարուել Ղարաբաղից (ինչն արդէն արել է), ընդունել, որ Ղարաբաղն ընդամէնը «անջատողական ռեժիմ»-ով գոյատեւող մի ինչ-որ բան է եւ չհամարձակուել նոյնիսկ համեմատուել Կոսովոյի հետ: Երկրամաս, որը վայելում է համաշխարհային հանրութեան համակրանքը, ի տարբերութիւն Լեռնային Ղարաբաղի «անջատողականների»: Ահա Քոչարեանի եւ Օսկանեանի դիւանագիտութեան պտուղները: Այս փուլում եւ այսպիսի անմխիթար վիճակում գտնուող Ղարաբաղի հարցը դեռեւս յօգուտ հայ ժողովրդի եւ յատկապէս Ղարաբաղի կարգաւորելու յոյս ներշնչեց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ իր հրապարակային ելոյթներից մէկում: Նրա ձայնը խլացնելու նպատակով Քոչարեանի կառավարութիւնը եւ նախագահի պաշտօնին յաւակնող Սերժ Սարգսեանը անասելի աղմուկ բարձրացրին ու Տէր-Պետրոեանին վարկաբեկող արշաւ ծաւալեցին: Տէր-Պետրոսեանի անձը վարկաբեկելու փորձերին զուգահեռ հրապարակ նետուեց բոլորովին յեղյեղուկ մի միտք, որն իբրեւ պէտք է արդարացնէր Քոչարեանին ու ապահովէր Ղարաբաղի կարգաւորման հարցում Սերժ Սարգսեանի դիրքորոշումը: «Գոլոս Արմենիի» թերթին տուած հարցազրոյցում Ռոբերդ Քոչարեանն ասել է, որ բանակցային գործընթացի հիմքում դրուած է ինքնորոշման սկզբունքը: «ԼՂՀ վերջնական կարգավիճակը պէտք է հաստատուի հանրաքուէով: Մինչ այդ, նախատեսւում է ԼՂ փաստացի իրավիճակի ճանաչում միջազգային հանրութեան կողմից»,- ասել է Քոչարեանը: Իր պաշտօնավարման երկու ժամկէտների ընթացքում սա երեւի նրա միակ անկեղծ խոստովանութիւնն է: ԼՂ կարգավիճակը կարող է հաստատուել հանրաքուէով, պարզապէս մինչ այդ հանրաքուէն անցկացնելը, ըստ Ատրպէյճանի պահանջի, որն, ի դէպ, ընդունում է նաեւ միջազգային հանրութիւնը, Ղարաբաղը պէտք է յանձնի ազատագրուած, Քոչարեանի բառերով եւ այլեւս «գրաւեալ» տարածքները, Շուշին եւ մնացած այլ տարածքները բնակեցնի ատրպէյճանցի փախստականներով, իսպառ մոռանայ Շահումեանի շրջանի եւ Գետաշէնի ենթաշրջանի մասին, ընդ որում՝ այնպէս մոռանայ, որ կարծես այդ շրջանները գոյութիւն չեն ունեցել երբեք, Ղարաբաղի հետ հաղորդակցման միակ ճանապարհ ընտրի Լաչինի միջանցքը՝ այն նոյնպէս Ատրպէյճանին յանձնելու պայմանով:*

*Եթէ հաշուի առնենք նաեւ այն հանգամանքը, որ Ղարաբաղը Քոչարեանի քաղաքականութեան հետեւանքով նոյնպէս հայաթափուելու միտում է գրանցում, ուրեմն հանրաքուէով այն հանգիստ կարող է ձեռք բերել այն կարգավիճակը, ինչին հետեւողականօրէն մօտենում է Ատրպէյճանը: Յիշենք նաեւ նախընտրական շրջանում Սերժ Սարգսեանի՝ «Մենք ճանաչում ենք Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը»,- յայտնի յայտարարութիւնը եւ արձանագրենք վերոգրեալ հանրագումարը՝ «Քոչարեանի կառավարութիւնը խաչ է քաշել Լեռնային Ղարաբաղի վրայ՝ յանուն անձնական յաւակնութիւնների եւ իշխանութեան»: Սրանից յետոյ այլեւս էական չի լինի, թէ ով կ'ստորագրի Ղարաբաղից հրաժարուող փաստաթղթի տակ, Քոչարեա՞նը, թէ՞ Սերժ Սարգսեանը, որը վճռական քայլերով, ինչպէս ասում են՝ չխնայելով նոյնիսկ կանանց եւ երեխաներին, սուրում է դէպի ՀՀ նախագահի աթոռը:*

Հ. Գ. Ի դէպ՝ ինքնորոշման մասին պնդումները, յատկապէս «Գոլոս Արմենիի» թերթի հարցազրոյցի համատեքստում, առաւել քան աչքկապոցի է, որովհետեւ հենց ինքը՝ Քոչարեանը, Ստամբուլում կայացած ԵԱՀԿ գագաթնաժողովում ստորագրեց ժողովի ընդունած յայտնի խարտիան եւ պետական մակարդակով ճանաչեց Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը:

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ

*Շարունակուած էջ 6-էն*

*կան կուսակցութիւններ ունենալ պարզապէս մակերեսային ժողովրդավարութիւն է: Միացեալ Նահանգներ եւ յատկապէս Եւրոմիութիւնը, որուն Թուրքիա կ'ուզէ իրաւական անդամ ըլլալ, պէտք է իրենց դիւանգիտական բոլոր հմտութիւնը եւ կարելիութիւնները գործածեն ու Թուրքիոյ մէջ ժողովրդավարական սկզբունքներու հաստատումը եւ գործադրութիւնը ապահովեն:*

*Ժողովրդավարութիւնը իւրացուցած Թուրքիա մը միայն իր անցեալին հետ կրնայ յաշտուիլ եւ կրնայ իր պատմութեան մութ ծալքերուն համար արարաշխարհին հաշիւ տալ:*

*Մեր՝ Սփիւռքահայութեան պարտականութիւնը զանազան երկիրներու կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումի հռչակումին ապահովման զուգահեռ, ապահովել է նաեւ Թուրքիոյ մէջ ժողովրդավարական կարգերու հաստատման արագացումը:*

**www.massisweekly.com**

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ
Proud Past

Լուսաշող Ապագայ
Exciting Future




**AGBU Alex Manoogian Center**
**Ladies' Committee**

*Invites you to attend*

## A Traditional
## Armenian Chirstmas Luncheon

### Sunday, January 6, 2008 at 1:30 P.M.

AGBU ALEX MANOOGIAN CENTER
BOYAJIAN HALL
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

**Donation: Adults $30, Children 12 and under $15**

For more information please call (626) 794-7942
Please RSVP by January 3, 2006